



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6308

ՆԱԽԱՇԱԽԻԴ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԵԿ

ԱՐՈՒԵՍԻՑ

ԱԶԴԱՑԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՎԻՐԵՅ

ՅԱԿՈԲ Յ. ՄԿՐԵԱՆ

ՆԱԽԱՇԱԽԻԴ Ա.-ՆՈՒՊԱՐ ԵՒ ՇԱՀԱՄԱՐԵԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ա.ԲՈՄԵԱՆ ՏՊԵՐԱՆ

1876

087.1
Մ-80

ՆԱԽԱՇԱԽԻՂ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

50

ԱՐԴՅՈՒՆ

087.1
Մ-80

ՆԱԽԱՇԱԽԻՒՂ
Printed in Turkey

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Եկ

ԱՐՈՒԵՍՏԻՑ

1.50L
78


Պատրիարքութեան Կ. Պօրի Տ. Տ. Ներսէս
Ա. Արքայի ակուղոսի Վարժապետան

Ս.ԶԳ-Ա.ՑԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ՅԱԿՈԲ Յ. ՄԿՐԵՅԱՆ

ՆԱԽԱՇԱԽԻՒՂ Ա. - ՆՈՒՊԱՐ ԵՒ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ



ԿՈՍՏԱՆԴԻ ՈՒ ՊՈԼԻՄ
ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1876

33 595-4. L.

Printed in Turkey

ՅԱՀԱԳՈՐԾՎԱԿԱՆ

ՅԱՀԱԳՈՐԾՎԱԿԱՆ



(122) 16581-58
40

ՅԱՀԱԳՈՐԾՎԱԿԱՆ
ՅԱՀԱԳՈՐԾՎԱԿԱՆ

8781



Ի ՔԱՂՑԲ
ՅԱԻՆԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ
ՏԵՐ Կ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՅԻ ԽՈՅ,
Հ Թ Մ Ռ Մ Ռ Թ

Ա. ՆՈՒԻՊԱՐ
ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՈՐ Ի ՀԱՍՔԵՕՅ Կ. ՊՈԼՍԻ,
Կ.Ս.Ո.Ո.ԽԵՍՈՒ. 1866 Ա.Մ.Ի.

Ընդհանրապէս ընդունված է որ մանուկներու միտքն ու սիրը ու եւ է զիտուրեանց եւ արուեսներու առակ եւ յարմար անելու համար՝ նոցա դպրոցական կեանքի առաջին օրերէն սկսելու է՝ նոյն զիտուրեանց եւ արուեսներու վերայ նախնական ծանօթուրիներ տալով՝ նոցա հետաքրուրինը շարժել, միտքը սրել, եւ ամեն կերպով ընդունակ հանդիսացունել նոյն զիտուրինը կամ արուեսները արբուն հասակի մէջ ընդարձակ եւ դիւրին ուսանելու:

Սոյն խորհուրդով ձեռք զարկի աշխատասիրել սոյն նախաշատիղս զիտուրեանց եւ արուեսներու, նուիրելով զայն Հայ մանուկներու յառաջադիմուրեան:

Աւելորդ չեմ համարի ծանուցանել որ սոյն աշխատասիրուրեան մէջ ինձ առաջնորդ ունեցած եմ մի թրամսերէն զիրք « Premières Connaissances » մակարով, աշխատասիրեալ մի քանի ականաւոր զիտնականներէ:

Զանազան հանգամանքներ արգելք եղան ինձ ուզածիս պէս պատկերազարդ ընծայել նախաշատիղս, եւ սփառվեցայ եղածով զոհ լինել, այլ կը խոստանամ մի երկրորդ տպագրուրեամբ աւելի հարուս հրատարակել թէ պարունակուրեան եւ թէ պատկերներու կողմէն:

ԵՐԱԼՈՒՄ ՎԵՐԱՊահենալ

ՆԱԽԱՇԱԽԻՂ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԱՐՈՒԵՍՏԻՑ


ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԵՐԿՐԻ ԶԵՐ.

Դուք շատ անդամ տեսած էք անանկ դաշտեր, որք մինչև ձեր աչքին առած տեղը կը տարածվին, այսինքն իբր երկու երեք մզոն տեղ, թէև այդ երկայնութիւնը 20 մզոն կայ: Ի՞նչ է պատճառը որ այն դաշտին վրայ և մենէ այսափ մզոն հեռու դտնըլած գիւղը չեմք կը նար տեսնել, քանի որ այն դաշտը քսան մզոն երկայնութիւն ունի, և մէջը լեռ կամ բլուր մի չը կայ. պատճառն այն է որ հողը՝ որուն վրայ կը բնակիմք, տափակ չէ, կլոր է. վասն զի այս հողն ալ մէկ խիստ մեծ գունտի մէկ կտորն է, և այդ գունան է այս երկիրը: Մեր աչքին առած տեղէն անդին ալ բան չեմք կը նար տեսնել. վասն զի այն տեղէն քիչ մի հեռուն դաշտը կամաց



Առ Յիսուս, Թոյլ տու մանկուոյի եւ մի արգելուք զյոսա զալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւնն երկիրը: (Մատթեոս ԺԹ, 14):

կամաց կը ցածնայ. բայց դուք պիտի ասէք թէ
երկերը տափակ է. վասն զի երկնքի կապոյտ
կամարը անոր կպած կ'երեկ. շատ մարդեկ ալ
այնպէս կարծած են ժամանակին . և շատերը
բոլոր աշխարհ ման եկել են երկրի ծայրը և
երկնքի կպած տեղը գտնելու համար. բայց չեն
կրցած. երկինքը կլոր է ինչպէս գնաւի մի. ձմե-
րուկ կամնարինջ մի. և մարդ երկրի որ կողմն
ալ երթայ միշտ գլխուն վերել կը տեսնէ եր-
կինքը, և միշտ գժուար կուգայ հաւատալ թէ
երկերը կլոր է. վասն զի միշտ տափակ կ'երեկ.
այս բանը դորմանալի չէ. երկերը այնչափ մեծ
է և մարդ այնչափ փոքր է նորա առջև, որ բնաւ
ը կրնար պարզ նայվածքով իմանալ անոր կլո-
րութիւնը. ինչպէս մըջիւն մի չը կրնար իմանալ
ձմերուկին կլորութիւնը, եթէ նորա վերայ բնա-
կութիւն հաստատած լինէր :

Երկրի կլորութիւնը հասկանալ դիւրին է աս
կերպով ալ. երբոր մի քաղաքի կամ գեղի մօ-
տենամք, նախ այն քաղաքին կամ գեղին բարձր
չէնքերուն ծայրերը կը տեսնեմք. քանի մօտե-
նամք՝ տուներու տանիքը, և երբ բոլորովին մօտ
լինիմք՝ այն ժամանակ միայն կրնամք ամբողջ
քաղաքը տեսնել. Նմանապէս ասեմք թէ՝ ծովե-
զերքը նաւի գալուն կը սպասեմք. քաղաք գնա-
լու համար, նաւը քաղաքին բաժնվածին պէս
մենք նախ անոր կայմերուն ծայրերը կը տես-
նեմք. յետոյ քանի որ մօտենայ՝ առագաստները,
և վերջապէս ամբողջ նաւը :

Նաև երկրի կլորութեան ապացոյց է որ երբ
մարդ մի կ. Պօլիսէն մեկնի և միշտ մի և նոյն
շիտակութեամբ շարունակ ճամբորդէ՝ վերջէն
դարձեալ այն տեղը կը համար ուսկից բաժնը-
վեցաւ. Օրինակի համար. առ ձմերուկ մի. անոր
մէկ տեղէն մատդ չորս բոլոր պարտցուը շի-
տակութեամբ՝ միւս կողմէն մատդ նորէն ա-
ռաջվան տեղը կը համար :

Չը կարծէք թէ երկրի վրայ դանված բարձր
լեռները և խորունկ ձորերը արդեւք կը լինին
կլորութեան. անգամ մի խորհեցէք որ աշխար-
հիս վրայ դանըլօղ ամենէն մեծ լեռը, որ երեք
մղոն բարձրութիւն ունի, ո՞րչափ մեծ կրնայ լի-
նիլ երկրի առջև, որ ինը հազար մղոն կը չափ-
վի. և ոչ իսկ մեր գաշտերուն վերայ տեսնված
խլուրդի հողի գեղերուն չափ. Առ օրինակի հա-
մար, նարինջ մի, որուն կեղեւք փոքրիկ խորտու-
րորտներ ունի, բայց նորէն նարինջը կլոր է կ'ա-
սեմք. վասն զի այն խորտուբորտները շատ ոչինչ
են նարինջին մեծութեան քով. Այսպէս է եր-
կրոս ալ :



ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

Գիշեր եւ ցորեկ . — Երկրի դառնալը.

Դիտած էք արեւ մարը մտնելու տեսարանը:
Այս ժամուն նորա ճառագայթները աւելի տկար
լինելով՝ կարօղ եմք տեսնել նորա կարմիր սկա-
ռառակը. կարօղ եմք դիտել ամպերը, որք կար-

ծես ոսկիով և ծիրանի գոյնով շինված են և
մեծ հրդեհով մի կը վառին, թէւ անոնք արե-
ւին մօտիկը կ'երեխն, բայց իրաւն այս է որ մե-
նէ քանի մի մղոն հեռուն կը դանըվին, իսկ ա-
րեւը անոնցմէ հազարաւոր մղոններով հեռի է :

Թերես դուք ձեզի կը հարցունէք թէ ուր կը
մտնէ՝ կը ծածկըվի արեւը, և ուր կիջնայ հորի-
զոնէն վար իջնելով : (Հորիլուն կըսվի մեր աշ-
քին առած տեղը, որ մեր չորս կողմը կըր շըր-
ջանակ մի կը ձեւացունէ, — այսինքն Երկինքը
չորս կողմէն Երկրիս փակածի պէս երեցած
տեղն է.) Արեւ տեղ մի չը մտներ, տեղ մի չը
ծածկըվիր, տեղ մի չիջներ, այդ բանը Երկոյթ
մի է. նա իւր տեղը չը փոխեր, և ոչ ալ կը դառ-
նայ: Երկիրն է դարձօղը, որ ինքն իր վրայ կը
դառնայ ձեր զըռընչան (Փըրըլտագ) խաղակի-
քին պէս դառնալով: Եթէ մեր աչքին կերեսի թէ
արեն է դարձօղը, այդ զարմանալի չէ. նաւով
ճանրորդած ժամանակնիս ալ կերեի թէ նաւը
կանգնած է, և ծովեղերքը՝ կը քալէ, կը փախ-
չի. այսպէս կը լինի կառքով գնալու ժամանակ
ալ: Ասացինք թէ արեւ կանգնած է, և Երկիրը
ինքն իւր վրայ կը դառնայ. դարձած ժամանակ
անշուշտ մէկ կողմը միայն արեւին դէմ կու դայ,
և այն ատեն այն կողմը լոյս կառնու արեւին,
հետեւաբար այն կողմի մարդերուն ցորեկ պիտի
լինի, որչափ ժամանակ որ արեւին դէմ մնան,
այսինքն 8, 9, 10 ժամ, որմէ վերջը, որովհետեւ
միշտ կը դառնայ, Երկրին միւս կողմը կուդայ

արեւին դէմը և այն կողմին ցորեկ կը լինի. միւս
կողմն ալ որովհետեւ արեւին դէմը չէ, մութին
մէջ կը մնայ և այն կողմի մարդոց դիշեր կը լինի,
յաջորդաբար: Որովհետեւ Երկիրը 24 ժամվան մէջ
ինքն իւր վրայ կը դառնայ, 12 ժամ մէկ կողմը կը
կենայ արեւին դէմ, 12 ժամ ալ միւսին կողմը.
որով 12 ժամ ցորեկ և 12 ժամ դիշեր կը լինի:
Երկիրը Արևմուտքէն դէպ ի Արևելք կը դառ-
նայ : +

ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

Տարի եւ ամիս.

Անցած տարիէն ի վեր առանց գիտնալու մեծ
ճանբորդութիւն մի արինք. վասն զի, Երկիրը
ինքն իւր վրայ դառնալէ զատ, արեւին չորս կողմն
ալ կը պտըտի, շրջան մի կանէ, և իրր Երկու
հարիւր միլիոն մղոն տեղ կը քալէ: Այս շրջանը
կը տեսէ երեք հարիւր վաթուն և հինգ օր,
այսինքն մէկ Տարի. ինչպէս որ Երկրին ինքն իւր
վրայ դառնալէն յառաջ եկած են դիշեր ու ցո-
րեկ, անանկ ալ արեւին բոլորը դառնալէն յա-
ռաջ եկած է տարին, և տարվան եղանակները՝
Գարուն, Ամառ, Աշուն, Զմեռ :

Երկրիս այս շարժումը Երկրիս ինքն իւր վրայ
արած շարժումէն աւելի արագ կը լինի: Այս
ժամուս որ ձեզի հետ կը խօսիմ հարիւրաւոր
մղոն տեղ յառաջ կերթամք. բայց ինչո՞ւ համար
Երկրիս արեւին շուրջը և իւր վրայ արած շար-
ժումները մենք չեմք իմանար. այսպէս կը կար-

ծէք թէ Երկինքի աստղերը կը դառնան մեր շուրջը, և ձեզի Երբէք չ'երեիր թէ Երկիրը կը քայլէ: Սակայն կը քալէ այն, և գիշեր ժամանակ աստղերուն 24 ժամվան մէջ մեր չորս կողմը դառնալու Երկոյթը Երկրիս դառնալէն առաջ կուգայ:

Կը յիշէք անշուշտ որ Եթէ շոդենաւի կամ շուտ քալող կառքի մէջ նստած լինիք, այնպէս կ'երեի որ մօտակայ տուները, ծառերը և լեռները վաղելով կանցնին կերթան. սակայն անոնք անշարժ են. և գուշը և է ցնցում ըլլգալով ձեր յատուկ շարժումը կը մոռնաք. Երկիրն ալ ցնցում մի չը տար, և բնական է որ մեք չենք զգար նորա դառնալը, ինչպէս չըզգար մըջիւն մի ձմերուկին դառնալը:

Ինչպէս որ Երկիրը արևեն շուրջը կը դառնայ, այնպէս ալ լուսինը Երկրին շուրջը կը դառնայ. այդ դառնալուն ժամանակը ամիս կոչած են, որ իրը 30 օր է. և որովհետև լուսինը 12 անդամ կը դառնայ մէկ տարվան մէջ Երկրիս բոլորտիքը, 12 ամիսը մէկ տարի կ'անէ:



ՉՈՐՐՈՐԴ ԴԱՅ

Դիխաւոր կողմեր.

Անշուտ շատ անդամ տեսած էք արևին ծաղելը, և դիտած էք որ միշտ մի և նոյն կողմէ կը ծագի:

Գիտէք արդէն որ արևը իրօք չը ծագիր. այլ իւր տեղը անշարժ կեցած է. և Երկիրն է որ դառնալով զմեղ անոր կը տանի: Արեւելի՛ կ'ասեն այն կողմին, ուսկից արևը կը ծագի. Արեւելքին դէմի կողմը, ուսկից արևը իրիկունները մարը կը մտնէ, Արեւամուտի՛ կ'անուանեն: Երբ մեր աջ ձեռքը Արևելք դարձունեմք և ձախ ձեռքն ալ Արևմուաք, այն ատեն մեր առջեկի կողմը կը լինի. Հիւսիսի կողմը, ետեինը Հարաւի կողմը: Հիւսիսը՝ արցային, և հարաւը հակարցային ալ կ'ասվին: Այս չորս կողմերը գլխաւոր կողմեր կը կոչեն: Ուրիշ չորս կողմեր ալ կան, զորս ճանչալը նմանապէս պէտք է. հիւսիսին և արեւելքին ճիշդ մէջտեղը՝ հիւսիսային—արևելեան կողմն է. հարաւին և արևելքին մէջ տեղն ալ հարաւային—արևելեան կողմն է. հարաւային արևմտեան կողմը՝ հարաւին և արևմուտքին մէջ տեղն է. ինչպէս նաև հիւսիսային—արևմտեանը՝ հիւսիսին և արևմուտքին մէջ տեղուկը:

Այժմ սովորեցունեմ ձեզի թէ պէտք եղած ատենը ինչպէս պիտի գտնէք այս չորս գլխաւոր կողմերը. Երբ որ ձենէ մէկը իւր ճանբան կորուսանէ, և մէկին չը կրնայ հարցունել շիտակ ճանբան, անպատճառ այս կողմերուն միջոցով փնտուելու է: Օրինակ, ասեմք թէ տղայ մի անտառին մէջ քալելով շիտակ ճանբան կորսնցուց, և չը կրնար յետ դառնալ. բայց որովհետև դիտէ թէ այն անտառը իրենց տանը (կամ դըպոցին, կամ եկեղեցին) հիւսիսի կողմը (կամ

արևելքի և այլն) կը ընկնի, և տունն ալ անտառին
հարաւի կողմը, արևին միջոցով հարաւի կողմը
կը դժոնէ և ճանբան կը շարունակէ :

Բայց կրնայ լինիլ որ օդը անձրեսոտ կը լինի,
և արևը չը տեսնուիր . ուստի խոհեմութիւնն է
որ ամեն ճանբորդ կողմնացոյց ասված այս փոք-
րիկ գործիէն իւր հետը ունենայ : Կը տեսնէք
որ սա փոքրիկ աման մի է, մէջն ալ հերիւն (միւ)
մի կայ, մէջ տեղը լայնկէկ, երկու ծայրերը սուր,

Ճիւսիս

Արեւմուտ



Արեւելք

Հարաւ

և որ տուանցքի (անցունելու տեղ) վրայ դրված
միշտ կը շարժի, Այս հերիւնը պողպատ է . բայց
մագնէսի հետ շփված լինելով մագնիսացած է .
մագնէսը , դիտէք արդէն, այս Ո ձեւով շինված
կը ծախեն . որով դուք ալ կ'ըզբօնուք՝ ասեղի,
գրիչի մօտեցունելով և զանոնք իրեն քաշելը
դիտելով : Հերիւնը այսպէս մագնիսանալով՝ իւր
ծայրերուն մէկը միշտ դէպի հիւսիս և միւն
ալ դէպի հարաւ շտկելու յատկութիւնը, կամ
սանկ ասենք, բնութիւնը կ'ունենայ : Ասով մենք
ալ դիւրութիւն կունենամք մեր ճանբան դժոն-
լու : Հերիւնին աւելի սեւ ու սուր ծայրն է (ինչպէս
պատկերին մէջ կ'երեկի) հիւսիսին դարձօղը⁽¹⁾ :

(1) Դասատուն, եթէ ունի, թողցուցունէ բուն դործիքը

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ


Առանցք. Բեւեռներ. Հասարակած. Արուեստական
երկրագունս եւ համատարած աշխարհացոյց .

(Այս դասին համար դասատունին կարւոր են մէկ երկրագունս և մէկ
Համատարած աշխարհացոյց տախտակի :)


Թերեւ մինչև հիմայ տեսած չեք այս գուն-
տը, հետևաբար կը հարցունէք թէ ինչի՞ կը ծա-
ռայէ այդ: Այս գունտը մեր երկրին պատկերն
է: Ինչպէս որ կը տեսնէք, կրնամք զայն ինքն
իւր վրայ դարձունել երկաթէ այս փոքրիկ ձո-
ղիկը որուն վրայ կը դառնայ, առանցք կ'ասի: .
սակայն մի կարծէք որ երկիրը երօք այսպէս եր-
կաթէ մի առանցքի վրայ կը դառնայ ճիշդ այս
գունտին պէս. այլ կը դառնայ սա գնտակին
պէս, որ ահա գրասեղանին վրայ կը դարձու-
նեմ, և որ առանցքը չ'ունի և ոչ տեղէ մի բռնված է:

Երկրիս առանցքին ծայրերը թեւեն կ'ասին:
Ահա կը տեսնէք սա մեծ կլոր դիմը, որ ամէն
մէկ բևեռէն հաւասար հեռաւորութեամք գուն-
տին մէջ տեղէն դժված է, և որ զայս երկու
հաւասար մասի կը բաժնէ, այս դիմը հասարա-
կած կ'անուանեն: Հասարակածը երկրին ամենէն
տաք մասին վրայ է. վասն զի այս մասին վրայ
է որ արևն իւր ճառագայթները ուղղակի կ'ար-
ձըկէ: Որչափ որ այս տաք տեղէն հեռանայ
մարդ, և դէպի հարաւի կամ հիւսիսի կողմերը
յառաջ երթայ, օդն աւելի ցուրտ կը լինի: Բե-
ւեռներուն մէջն մօտ տեղերը ամեն բան ձիւնով

ու սառոյցով ծածկը ված է, որք բնաւ չեն հալիք։
Երկրին ձեւ թուղթի վրայ ալ գծել կարելի
է, ինչպէս որ սա թուղթին վրայ շինված է, որու
անունն է համատարած աշխարհացոյց, որով
հետեւ երկրիս ամբողջ ձեւն է. ահա կը տեսնէք
մէջ տեղը հասարակածը. վերի կողմը հիմսիս
բեւեռը, վարի կողմը հարաւի բեւեռը. Բայց



Արեւմտեան կողմ



Արեւելեան կողմ

այս պատկերը զերկիրը երկու կէսի, կամ կի-
սագունտի բաժնած կը ցուցունէ, վասն զի ան-
կարելի է թուղթին վրայ կլոր բան մի բնակա-
նին պէս ամբողջ գծել. Եթէ կուղէք առանց կի-
սելու շինել երկրագունտը, — այն ատեն վրայի
կէսը՝ ներքելի կէսը կը ծածկէ. օրինակի համար,
սա ինձորը սեղանին վրայ դնեմք, բոլոր մակե-
րեսիթը (վրայի երեսք) կը տեսնէք. — Ո՞չ. —
Բայց կարենք կէսէն, և երկու կտորն ալ տա-
փակ կողմէն սեղանին վրայ դնեմք, այն ատեն
պտուղին կեղեին բոլոր կողմերը կը տեսնեմք։



ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Յամայի եւ ջուրի վրայի աշխարհագրական
անունները.

Դուք շատ անդամ տեսած էք մեր գիւղին մօտն
եղող փոքրիկ լճակը ⁽¹⁾. պէտք չէ կարծէք որ
այն լիճը երկրի վրայ գտնըլված լիճերէն ամենէն
մեծն է. աւելի մեծերը և ընդարձակները կան,
և այս լիճին ջուրէն շատ աւելի մեծ ջուրի կոյտեր
կան, որք են ծովերը և ովկէանները. Բայց անոնց
ջուրը անուշ չէ, այլ աղի ու լեղի :

Նայեցէք սա աշխարհացոյց տախտակին ⁽²⁾,
հող կամ ցամաք ցուցունող մասերուն վրայ գոյ-
ներ զարկած են. և կը տեսնէք որ միւս կտոր-
ներէն մեծ երէք տեղեր կան, ատոնք են երէք
աշխարհները. ծով ցուցունող տեղերուն վրայ
գոյն զարնուած չէ. ինչպէս որ կը տեսնէք աշ-
խարհացոյցին, անանկ ալ երկրին վրայ՝ ծովերը
ցամաքէն աւելի տեղ բռնած են. և պիտի զար-
մանաք երբ ասեմ թէ երկու երէք ամիս պէտք
է նոյն իսկ ամենէն լաւ նաւով մի այս ծովերէն
մէկ քանին պտըտելու համար, մինչդեռ մեք
պղտիկ նաւակով մի մէկ ժամու մէջ կարող
եմք մեր մօտի ծովը պտըտիլ։ ✕

⁽¹⁾ Դասատուն ըստ պատշաճի փոխելու է. գետ, ծով,
ծոց, ձոր, եւայն. Սոյն դասին մէջ մանուկներու ծա-
նօթ գետերու, լեռներու, ծովի, ձորերու, եւայն, ա-
նունները տալու է։

⁽²⁾ Համատարած աշխարհացոյցը։

Ծովի կամ լճակի մէջ տեսած էք անշուշտ կար մի ցամաք, ջուրս կողմը ջուր. այս ցամաքը կղզի կ'ասլիք չորս կողմը ջուր լինելուն համար . ասանկ ցամաքներ, այսինքն կղզիներ շատ կան, և ամէն ծովի մէջ, ամէն մէկը այնչափ մեծ, որ կրնամք մեր գիւղին պէս հաղար գիւղ շինել մէջը: Երբեմն կը պատահի որ լիճին կամ ծովին ջռըը փրփրելով և եռալով կուդայ. ցամաքը կը զարնէ. այն զարնօղ ջուրին ալիք կ'ասլի, և հովէն յառաջ կուդայ :

(Այս դասը առելի ընդարձակ կը բնայ լինիլ, և թէ տղայոց ուսուցիքը տան կամ զարոցին պարտէզին մէջ տղայոց ընկերութեամբ պատիկ լին մի շինէ, անոր մէջ նաեւ կղզի, Թերակղզի, հրուանդան, նեղուց, պարանց, վտակ, և այլն. և ըստ այնմ սովորեցունէ լճին վրայ ցուցունելով թէ Բնէ է կղզին, Թերակղզին, և այլն:)

Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Դ Ա Ս

Մարդոց մեկտեղորիշը. — բնակութիւնը, ցեղերը. Աշխարհիս մասերը եւ մեծ ծովերը.

Տեսած էք գիւղեր, և նոցա մէջ երկրագործի տնակներ, որոց դրան վերայ ընտանիքին մայրը նստած կը մանէ, և տղայքը կանանչ գետնին վերայ իրենց մօրը բոլորտիքը կը խաղան. Իսկ մեծ տղան հօրը հետափեր մշակել կը սովորի. և հայրն ալ ասոնք ամենը ապրեցունելու համար կաշխատի :

Մէկ տունի մէջ բնակօղ հայրը, մայրը և անոնց տղաքը ընտանիք մի կը կաղմեն, և այնպէս կը կոչվին :

Մարդիկ խումբ խումբ իրարու մօտ տուներ շինելով կ'ապրին, որպէս զի մէկտեղ շուկան երթան իրարու օդնելով, մին միւսին սովորեցունէ, և ամէնքը մէկտեղ երթան եկեղեցի Աստուծոյ աղօմելու. և որպէս զի եթէ իրենց մէջը մէկը հիւանդանայ, իւր դրացին զինքը միւթարէ, և եթէ մէկը աղքատանայ՝ միւսը անոր օդնէ: Շատ մի տուներ մէկտեղ գիւղ կ'ասլին :

Քաղաքները, որոց մէջ նոյնպէս տուներ և ընտանիք կը գտնըլին, միշտ գիւղերէն աւելի մեծ աւելի զարդարուն կը լինին. քաղաքներու մէջ մեծ շուկաներ, մեծ պալատներ կը գտնըլին և մեծ առուտուրներ կը լինին : Օրինակ. Իղմիտ քաղաք մի է, իսկ Պաղչէճիկ գիւղ մի :

Շատ գիւղեր և քաղաքներ և երկրիս մէկ մեծ կտորը ամէնքը մէկտեղ աշխարհ կ'ասլին . ինչպէս, Թուրքիան, որ շատ գիւղեր ու քաղաքներ ունի և երկրի մէկ մասն է՝ աշխարհ կ'ասլի : Ո՛ և է աշխարհի բոլոր բնակիչները իրարու, հայրենակից կը կոչվին, այսինքն՝ միենոյն աշխարհէն, հայրենիքէն եղօղ, Ամեն աշխարհ իրեն համար զատ կառավարութիւն կ'ունենայ . կամ հանրապետութիւն, կամ կայսրութիւն, կամ թագառութիւն: Ֆրանսայի կառավարութիւնը հանրապետութիւն է. Թուրքիայինը՝ կայսրութիւն. Անգլիայինը՝ թագառութիւն : 

Երկրիս վրայ գտնըլված բալոր կառավարութիւններն ու աշխարհները աշխարհիս ցամաքի հինգ մասերուն մէջ են : Այդ մասերն ահա

աշխարհացոյցին մէջ կը ցուցանեմ ձեզ (1) :

1. Աշխարհացոյցին վերի կողմը գծված կը տեսնէք երկրի մէկ մասը, որուն մէջ դրված է Եւրոպա. Եւրոպան աշխարհացոյցին վրայ տեսնը ված ամենէն մեծ ցամաքին հիւսիսային արևամուտքի կողմն է :

2. Այս ցամաքին արևելքի կողմինն ալ Ասիան է. Եւրոպային մեծ և ընդարձակ :

3. Մի և նոյն ցամաքին հարաւի կողմի մասը Ավրիկէ կը կոչվի :

4. Այս ալ Ամերիկա կ'ասվի, որ հիւսիսէն հարաւ կ'երկըննայ և երկու մասի բաժնըլված է. հիւսիսի կողմինը կ'ասվի Հիւսիսային Ամերիկա. միւսը՝ Հարաւային Ամերիկա :

5. Սա կողմի ցամաքն ալ, որ այսպին այնդին ցրված կղղիներով և Նոր-Հօլանտա կոչված փոքրիկ ցամաքով կազմըլված է, Ովկէանիան է :

Աշխարհիս այս հինգ մասերուն մէջ շատ ովկիանուներ (մեծ ծովեր) և ծովեր կան. ահաւասիկ Մեծ Ովկիանուսը, որ Ովկէանիայի դրեթէ բոլըր երկիրները կը ցըլապատէ . և Ասիայի ու Ամերիկայի մէջ տեղը կը դանըլվի. Ահա Աշխանեան Ովկիանուսը, որ մէկ կողմէն Եւրոպայի և Աֆրիկէի, և մէկաւ կողմէն Ամերիկայի մէջ տեղ փռված տարածված է: Այս ալ Հնդկային Ովկիանուսն է, որ Ասիայի հարաւի կողմը կ'իյնայ, Սառուցեալ Ովկիանուս կ'ասեն այն ովկէանու-

ներուն, որք հիւսիսային և հարաւային բեեռները ցըլապատած են :

Սա երկար և աւելի քիչ լայն ծովը, որ Աֆրիկէի, Ասիայի և Եւրոպայի մէջ տեղերը մտածէ, Միջերկրական ծով կ'ասվի, Երուսաղէմգնացողները այս ծովին կ'անցնին :

Մարդիկ երկրի վրայ մրջիւններու պէս կը վստանի, ինչպէս մրջիւնները իրենց փոքրիկ բլրակին վրայ: Կան մարդեր որք սեւ են. կան որ դեղին, թուխ, ձիթագոյն կամ կարմրագոյն են:



Կան որ ճերմակ են, զորս գուշք լաւ կը ճանչէք, վասն զի մենք այն ճերմակ ցեղին կը վերաբերիմք, Դուռք գեռ միայն այս ցեղը կը ճանչէք, որ աւելի Եւրոպայի և Ասիայի մէջ կը բնակի: Քանի որ տաք աշխարհներու մէջ երթամք, կը տեսնեմք որ այն տեղերու մարդերուն դէմքը թուխ կը լինի արելին սաստկութեան պատճառով. բայց մեք միշտ կը ճանաչվինք մեր հաւկթաձև գլուխով (ինչպէս որ պատկերն ալ կը ցուցունէ), պղտըլտիկ բերնով, չափաւոր թանձրութեամբ շուրթերով և բարակ ու փափուկ մազերով:

(1) Կարեւոր է համատարած աշխարհացոյց մի :

Գեղին ցեղի մարդիկը մենէ կը զանազանվին իրենց տափակ և լայն երեսով, գըեթէ կլոր գլուխով, շատ ճեղքըլած բերանով, երկայնունեղ աչքերով, որք քունքին կողմէն վեր ելած են: Մազերնին սև, ողորկ և ամռոր են: Այս ցեղը դիմաւորաբար Ասիայի մէջ կը բնակի: Սև ցեղի մարդիկը, որք աեւանորթ կը կոչվին, տափակ ճակատ, անկըլած ծնօտներ, լօշ շըրթունք, երկայն ակոանեք, մեծ բերան, լայն և կարծ քիթ կ'ունենան: Առնց մազերը թաւ, սև և խիտ են: Ափրիկէի մեծ մասին և Ովկէանիայի հարաւի կողմին մէջ կը բնակին:

Երկրի վլայ գտնըլած ժողովուրդներուն բարքն ու սովորութիւններն ալ նոցա կերպարանքին պէս ամեն տեղ ուրիշ կերպ են: Զոր օրինակ. ձեր տեսած հազարումէկ արաւետներն ու աշխատանքը հեռու տեղերու մարդիկը չեն դիտեր: Այս տեղ կը տեսնէք որ մարդիկ հողագործութիւն, սկաբտիզմանութիւն, հիւմութիւն (տուն շինել), ատաղձագործութիւն կ'անեն. Նմանապէս դարրիններ, դերձակներ և վաճառականներ ալ կան այս տեղ, որք մեր մնունդին, հագուստին, ապրուստին և զուարճութեան համար պէտք եղած ամեն բան կը ծախեն. շատ մարդիկ ալ պատկեր հանութեամբ և երաժշտութեամբ կ'ըզրադին. ոմանք բժիշկ են, ոմանք ալ դիտութեանց զոր օրինակ պատմութեան, աշխարհագրութեան, աստղագիտութեան և փաստաբանութեան կաշխատին. ոմանք ալ վարժա-

պետ են, որք ձեզի պէս փոքրիկ տղաներու բան կը սովորեցունեն: Մենէ շատ հեռու վայրենի մարդիկ կամ, որք ու է աշխատանքի, արուեստի կամ դործի դաշղափարը չունին. չը մշակված դաշտերու և անտառներու մէջ, կամ դետերու երկայնքովն ու ծովերու եղերքներն ի վեր կը թափառին: Ասոնց ուտելիքն է որսի կենդանի, ձուկ, պատղ վայրենիներ ալ կամ որք արօտէ արօտ արծելու կը տանին իրենց ոչխարի՝ այծի և ուրիշ անասուններու երամները, որոց միաը կուտեն, ու կաթը կը խմեն: Այս մարդիկը, որք կեանքերնին իրենց դուարներուն հետ պարտելով կ'անցունեն թափառական կամ վայկէտուն կ'ասվին: Դժբաղդաբար իրենց ունեցածէն դոհ չը լինելով՝ եթէ ճանբորդներու հանդրապին զանոնք անգթութեամբ կը կողոպտեն:

Երբ մթնէ, կամ օդը աւրըլելու վրայ լինի, վայրենիները անմիջապէս տերեններով և ճիւղերով հիւղ մի կը շինեն. կամ թէ հողին մէջ ցիցեր կը անկեն, անոնց վրայ ալ հաստ ու խոշոր կտաւներ կամ անասուններու մոլթեր կը պարզեն, և ասով վրաններ կը շինեն և նոցա մէջ կը քաշվին:

Քաղաքավար մարդիկ շատ բաներու մէջ վայրենիներէ վեր են. ինչպէս. Աստուած ճանաշելու մտախն. տգիտութեան մէջ թաղված խեղճ վայրենիները Աստուծոյ տեղ թաշուն, կով, առիւծ, վագր, կամ թէ արհն ու լուսինը կը պաշտեն. և կամ ուրիշ բան մի, որոնց վրայ կը

զարմանան և որմէ կը վախնան , և որ սակայն աստուած չէ : Պէտք չէ որ մենք մեր վիճակովը հպալտ լինելով այս խեղճերը անարդեմք , վասն զի Աստուած չ'ուզէր որ մեր նմանները բանի տեղ չը դնենք . նաև՝ վասն զի այս տգէտ մարդիկը այլ և այլ բաներու մէջ մենէ իրօք վեր են . անանկ արագութեամբ կը վազեն , որ մենք բնաւ տեսած չ'եմք . անտառներու մէջի կենդանիները անանկ ճարտարութեամբ կը բռնեն , որ մեք երբէք չ'եմք կրնար . մենէ աւելի ուժով են , և աւելի կը դիմանան յոդնութեանց ցուրտի , տաքի :

Վայրենի ժողովուրդներու դէմ ըզմեզ աւելի բարկացունողը նոցա դազնաբարոյութիւնն է , միշտ արիւնարբու կուիւներ կ'անեն . կան որք իրենց դերիները կ'ուտեն , և իրենց մեռցուցածներուն ոսկորներով ու մազերով բնակարաններ կը զարդարեն : *



ՈՒԹԵՐՈՌԴ ԴԱՍ Եւրոպա:

Եւրոպան , որ աշխարհացոյցին վրայ տեսաք , երկիս մէկալ մասերէն ամենէն փոքրն է , բայց ամենէն աւելի քաղաքակրթված է . այն տեղ գիտութիւնները և արուեստները շատ առաջ գնացած են . այն տեղ շատ քաղաքներ կան շատ- ւոր բնակիչներով . հողը գրեթէ ամեն տեղ մշակուած է . գեղեցիկ ճանբաններ և ջրանցքներ

(Պուրի Ճանիբայ) կան . դործարանները և արհես- տանոցները , որք Եւրոպացիներուն հարստու- թեան ազբւկրները կը սեսլին , խիստ շատ են : Եւրոպայի մէջ տասնուհինգ տէրութիւններ կան . և ասոնք են .

1. Անգլիան , Արևմատքի կազմը . մայրաքաղաքն է Լոնդոն , աշխարհիս ամենէն մեծ քաղաք :
2. Ֆրանսա . մայրաքաղաքն է Փարիզ :
3. Ռուսաստան , Արևելքի կողմը , ընդարձակ աշխարհ մի է . մայրաքաղաքն է Պետրուրդ :
4. Գերմանիա կամ Ալմանիա . մայրաքաղաքն է Բեռլին :

5. Աւստրիա . մայրաքաղաքն է Վենեսա . ուր Հայ-կաթոլիք վարդապետներու վանք մի կայ :
6. Իտալիա . մայրաքաղաքն է Հռովմ :
7. Յունաստան . մայրաքաղաքն է Աթէնք :
8. Բէլգիք . մայրաքաղաքն է Բրիւքել :
9. Հոլանդա . մայրաքաղաքն է Լա-Հէ : (*)
10. Զուլցէրի կամ Հէլվէտիա . գլխաւոր քա- ղաքներն Բազէլ , Ժլնէլ , Բէռն , և Ցուրիխ : Ցուրիխի մէջ շատ Հայ երիտասարդներ կան , որք զանազան գիտութիւններ կը սովորին :

11. Փօրդուգալ , մայրաքաղաքն է Լիսաբոն :
12. Սպանիա , մայրաքաղաք՝ Մադրիդ :
13. Շուէդ , մայրաքաղաքն է Սթօքոլմ :
14. Գանգըմարք , մայրաքաղաքն է Կոպէնհակ :

(*) Ախալ է Հայ , Լա-Հայ , Հէյ , գրելլ . բուն անունն է Լա-Հէ (La-haye) .

15. Թուրքիա, մեր բնակած աշխարհը, որոյ
մայրաքաղաքն է Կ. Պօլիս. 423 տարի առաջ Յոյ-
ներուն մայրաքաղաքն էր, բայց Ֆաթիհ Սուլթան
Մէհմէտ պատերազմով առաւ, և Թուրքիայի
մայրաքաղաքն ըրաւ : Հս կը նստի Սուլթանը,
և տէրութեան նախարարները, Մէկ միլիոն եօթ-
սուն հինգ հազար բնակիչ ունի: Այս դիրքը որ
կը կարդաք կոստանդնուպոլիսի մէջ տպված է:
Եւրոպայի մէջ երկաթի և կապարի շատ հանքեր
կան. պղինձի, անագի, քարածուխի և մարմա-
րինի հարուստ հանքեր ունի. ոսկի քիչ, Եւրո-
պայի մէջ կատաղի կենդանիներ շատ չեն գտնը-
վիր: Հարաւային կողմը և ուրիշ տաք կողմերը,
ինչպէս Թուրքիայի մէջ, կը բուտի ձիթենի (ձի-
թապտուղի ծառ), որուն պտուղները պատուա-
կան իւղ կուտան. նարինջի, լէմնի և նուռի ծա-
ռեր, որք զովացունող պտուղներ կուտան:

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Ասիա.

Ասիան Եւրոպաէն չորս անդամ մեծ է: բեն-
ուին քովերէն մինչև հասարակած կը տարածվի:
Մարդիկ Ասիաէն յառաջ եկած են. ամենէն
մեծ և առաջին թագաւորութիւնները և քաղա-
քակրթեալ աշխարհները ամենէն առաջ, հին
ժամանակ, Ասիայի մէջ էին. բայց շատ ժամանա-
կէ իւղեր քաղաքակրթութիւնը մարած է երկրի
այս մասին մէջ, որուն մէջ է Թուրքիայի կէուը,

և որուն մէջ կը բնակին Հայերուն մեծ մասը:
Թուրքիայի տէրութեան չնորհով քաղաքակրթու-
թիւնը նոր սկսած է մտնել Ասիա. վասն զի, ինչ
պէս ըսի, Թուրքիան այս մասին մէջ ալ աշխարհ
մ'ունի, որ կ'ասվի Ասիական Թուրքիա: Ասիա-
կան Թուրքիային մէջ է Հայաստան :

Ասիայի հիւսիսի կողմը շատ ցուրտ, և հարաւի
կողմը շատ տաք է: Հիւսիսի, Արևելքի և Հա-
րաւի կողմերը մեծ ծովեր կան: Հարաւի կողմը
կը գտնըվին Հիւսաղայա լեռները, որք աշխար-
հիս ամենէն մեծ լեռներն են :

Ասիայի բոլոր հիւսիսի կողմը բոնած է միայն
աշխարհ մի, որ Սիրէրիա կ'ասվի, շատ ցուրտ և
խիստ տխուր... Արևոտնոյի տէրութեան ձեռքն է:

Արևմուտքի կողմն են Պարսկաստան, Թուր-
քաստան :

Արևելքի մէջ է Զինի մեծ կայսրութիւնը, որ
խիստ շատ բնակիչ ունի. Արևելքի մէջ է նաև
Ճաքօնի աշխարհը :

Հարաւի կողմը կը գտնըվի Հնդկաստան կամ
Հինդուսթան. մայրաքաղաքն է Կալկաթա, այս
տեղ ալ Հայ բնակիչներ կան, և երբեմն Հայե-
րէն գիրքեր ու լրադիրներ տպված են: Այս
տեղի Հայերուն վիճակը հիմա շատ դէշ է. կա-
մաց կամաց իրենց Հայութիւնը մոռնալու վի-
ճակի մէջ կը մտնան. միայն մարդ մի կայ, որ
պղտիկ գիրքեր հրատարակելով և քարողներ
խօսելով՝ զանոնք կը խրատէ, բայց մտիկ անօղ
ըլկայ: Այս մարդն է Տէր Յովհաննէս ծերունի

քահանային խաչկեանց . աղօթենք որ շատ ապրի
և իւր ջանքերը յաջողին :

Ասիայի մէջ շատ տեսակ կենդանիներ կան ,
ինչպէս կապիկ , փիղ , ուղտ , որ իւր տգեղու-
թեան շափ ալ խելօք , համբերօղ և օգտակար է ,
Սիրամարդներն ալ Ասիայէն եկած են ,

Ասիայի մէջ շատ տեսակ բոյսեր ալ կան . որ-
պէս Արմաւենի , Հնդիկ-Ծնկուղինի , որուն անուշ
հիւթով և զսվարար կաթով պտուղը Գօգօ կ'աս-
փի : Նաև՝ Խահվէ , շաքար-եղէգ , աղլոր բոյս մի ,
որ մարայորենի կը նմանի , և որուն արմատնե-
րէն տեսակ մի հիւթ քամելով շաքար կը շնեն .
և այլ բոյսեր :

Ասիաէն կ'ենեն պատուական քարեր , դեղին
կամ կապոյտ գոյնով . ինչպէս Սուտակ (եադուդ)՝
քարը , որ կարմիր կամ վարդագոյն է , և ժամա-
ցոյցներու մաքինաներու մէջ կը դնեն . Մարդա-
րիտ Ասիայի դրացի ծովերէն կը հանեն :



ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Ավրիկէ .

Երկրիս երրորդ մասն է Ափրիկէն : Միջներկ-
րական ծովին կողմի եղերքներուն վրայ պտղա-
րեր լեռներ և բլուրներ շատ կան . բայց այս
տեղերէն վար իջնելով Սահարա կոչված մեծ
անապատը կը տեսնեմք , որ հաղար մղոն եր-
կայնութիւն և երեք հարիւր մղոն լայնութիւն

ունի . բոլորովին աւազ լինելով ջուրէ և կանաչէ
զուրկ , և սաստիկ տաքութեամբ էրված տեղ մի
է . Սահարաէն վար եղող հողերը լաւ են : Եւրո-
պացի ճանրորդները Ափրիկէի ներսերը այնչափ
յառաջ գնացած չեն . մինակ Դաւիթ Լիվինգս-
դըն Անգլիացին շատ տեղ պարտած , բայց այն
ալ կէս ճանրան մեռած է : Այս Լիվինգսդընը
հաղար ուժ հարիւր տամն վեցին ծնած է Սկով-
տիայի մէջ . տղայութեան ժամանակ բամբակի
գործարանի մէջ կ'աշխատէր . և իւր քաղաքին
մէջ գտնըլած գիշերային դպրոցներուն մէջ կեր-
թար դաս կ'առներ գործէն վերջը : Տան ինն
տարեկան եղած ժամանակ ձմեռները բժշկու-
թիւն կը սորվէր , ամառներն ալ ուրիշ բաներ .
այս դասերուն հետ իւր ապրուստն ալ կը ճա-
րէր բամբակի գործարանին մէջ բանելով : Բամ-
պակ մանելու մեքենային վրայ բանած ժամանակ
գիրքը այն մեքենային վրայ այնպիսի տեղ մը կը
տեղաւորէր որ նորա ամեն մէկ դասնալուն
կրնար գիրքէն մէյմէկ խօսք կարդալ : Հաղար
ուժ հարիւր քառոսւնին Լիվինգսդըն Ափրիկէ
գնաց , այնտեղի ժողովուրդին Քրիստոնէութիւն
սովորեցնելու համար : Ափրիկէի մէջ անանկ տե-
ղեր գնաց , ուր դեռ Եւրոպացի մը գնացած չէր .
տասնութ տարի առաջ իւր արած ճամբորդու-
թեանց մէկ գիրքը տպագրեց , այն գիրքէն եր-
սուն հաղար հատ ծախուեցաւ . երսուն հաղար
հատ ! նայեցէք , գիտցէք թէ Եւրոպայի ազգերը
որչափ կը սիրեն աղէկ գիրքէր կարդալ :

Զեզ պէս պղտիկ տղայոց համար գրված գիրքերը աւելի շատ կը ծախվին, ամեն մէկ տեսակէն հարիւրհաղարական հատ. — սակայն այս գիրքն ալ որ ձեզի պէս պղտիկներու համար գրված է. երկու հազար օրինակ միայն տպվեցաւ, վասն զի անկէց աւելին քիչ ժամանակի մէջ ծախվելուն յոյս չ'ունի հրատարակօղը : Լիվինդադըն ուժ տարի առաջ ալ ճանբորդութեան գիրք մի հրատարակեց, և սկսաւ նորէն ճամբորդել . 25 տարի շարունակ պտը տեցաւ Ափրիկէի մէջ, և 1873 ին հոկտեմբեր ամսին հոն մեռաւ :

Ափրիկէի մէջ կը բնակին սև ցեղի մարդիկը, ամենն ալ տղէտ և վայրենի են, 0դը շատ տաք է :

Այս աշխարհին չորս կողմը ծովէ և կանոնաւոր ձև մի ունի :

Ափրիկէի մէջ մէկ կղզի միայն կայ. Հարաւային Արևելքի կողմը, Մատակասգար կ'ասիի, Միջերկրական ծովը կը թափի նեղոս գետը, այս գետը եթէ չլինի, Եդիպտոս՝ որ ահա կը տեսնէք տախտակին վրայ՝ անբեր պիտի լինէր, վասն զի քիչ անձրև կուգայ այն տեղ. նեղոս գետին ջուրերը տարին մէկ անգամ շատնալով կը ջրեն հողերը, և անսր հողը բերրի կը լինի :

Ափրիկէի մէջ շատ կատաղի անսառուններ կան, ինչպէս առիւծ, վագր, յովաղ, չաքալ, փիղ, ընձուղտ, որ զարմանալի կենդանի մի է. նաև ուղտ և ջայլամ թռչունը: Այս աշխարհին մէջ բաօքար կոշուած հսկայ ծառ մի կայ, որուն չորս կողմը երսուն մէթր կամ քառսուն հինգ արշը

կը չափիւ. և հազիւ քսան մարդ կարօղ են զայն գրկել իրենց բազուկները մէկտեղ բերելով :

Ափրիկէի մէջ շատ սակի կայ. և եւրոպացիք փիղի սակորի և սակիի համար շատ կ'երթան այն տեղ:

ՏԱՍՏԷԿԵՐՈՐԴ ԴԱՍ

Ամերիկա եւ Ռվիկանիա :

Ամերիկան երեք հարիւր վաթսուն տարի առաջ դանըլած է Սպանիացիներուն ձեռքով, ձէնովացի Քրիստով Կօլոմբ նաւագնացին առաջնորդութեամբ :

Ամերիկան երկու մասի բաժնըլած է. Հիւսիսի—Ամերիկա, Հարաւակի—Ամերիկա: Ահա հարաւակի կողմը, Հարաւակի Ամերիկան, որու ձեր Ափրիկէի կը նմանի, և որ անոր չափ տաք է, բայց չոր չէ: Ամերիկայի այս մասը հիւսիսի մասին հետ կապված է մի պարանոցով, որու անունն է Բանամա:

Հիւսիսի Ամերիկան շատ երկընցած է դէպ ի հիւսիս, և ալդ հեռաւոր կողմերը այնչափ սաստիկ ցուրտ կը լինի, և ծովերն ու ցամաքը այնչափ լեցուն է սառուցի մեծ կտորներով, որ կարօղ չեն եղած ցամաքին մինչև ծայրը հասնիլ:

Ամերիկայի մէջ է երկրիս ամենէն մեծ գետը՝ Միսիսիպի, Հիւսիսի—Ամերիկայի մէջ :

Երկրիս այս մասին մէջ, և նաև բոլոր աշխարհի մէջ, երևելի է Միացեալ նահանգներու աշխարհը, որ Ամերիկայի մէջ գանըլած մի շատ

տէրութեանց միանալովը կազմըլած է, միշտ իրարու օդնելու խոստումով՝ Ռւսմունք, կրթութիւն և արուեստներ շատ յառաջ գնացած են այս տեղ, նմանապէս վաճառականութիւնը:

Ամերիկան, մանաւանդ Պէրուի և Կալիֆոռնիայի մասը շատ հարուստ է ոսկի և արծաթի հանքերով: Տպագիոն, զբրուխտ և աղամանդ էլ կը դտնըվի: Այս տեղ խոչոր անսառուններ չը կան: Փոքրիկ թռչուն մի կայ, որուն ճանճ-թոյնիկ կ'ասեն. շատ նշանաւոր է իւր խիստ փոքր մարմնով, և բազում տեսակ գոյներով:

Գամք Ովկէանիային: Ովկէանիա կ'ասվին Մեծ Ովկիանոսի մէջի բոլոր կղզիները միասին: Գլուաւոր յամաք-աշխարհն է Նոր-Հոլանտա, կամ Աւստրալիա: Տեսքը տխուր է, բայց Ովկէանիայի շատ տեղերը աղւոր գիրք ունին: Սումադրա, Ճավա, Բունիօ, գեղեցիկ կղզիներ են:



ՏՍՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ

Հայեր եւ Հայատան:

Հայ ազգը, որուն զաւակներն եմք մեք, իրենց անունը առած են Հայկէն, որմէ սերած են բոլոր Հայերը: Այս Հայկը չորս հազար տարի առաջ իւր ընտանիքով, զաւակներով ու թռոներով, Հայաստանի հողին տէր եղաւ: Հայաստանը, ինչպէս որ կը տեսնէք աշխարհացոյցին վրայ, Ասիայի մէջ, Պարսկաստանի ու Ցածկաս-

տանի մէջ տեղն է: Հայկէն սկսելով Հայոց թագաւորութիւնը մինչև ասկէց 500 տարի առաջ կար: Քրիստոսի աշխարհք գալէն 30 տարի վերջը քրիստոնէութիւնը Հայաստան մտաւ, և երեք Հարիւր տարի վերջը տարածվեցաւ բոլորովին: Դրացի աղքերը, մանաւանդ Պարսկիները, այս



ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅԿԱՑ

բանին համար շատ նեղացան Հայերուն, և շատ ջանք ըրին, թէ շողոքորթութեամբ և թէ պատերազմով, քրիստոնէութիւնը ձգել տալ, բայց Հայերը յանձն շառին, և պատերազմով գէմկեցան:


Քրծստոսէ հինգ դար (հինգ հարիւր տարի) վերջը, Հայաստան շատ ծաղկեցաւ ուսմունքով և կրթութեամբ. այն ատեն շտկովեցաւ Հայոց լեզուն, Հայոց գլոր. գիրքեր ալ գրուեցան, զորս վերջէն պիտի կարդաք երբ մեծնաք: Մեր

եկեղեցին մէջ երդված շարականները և ուրիշ ազօթքները, շատը այն ժամանակվան գրված բաներ են:

Ավասոս որ Հայերը միաբան չը լինելով մինչեւ վերջը և մի քանի անխելը թագաւորներու ձեռք մնալով, կամաց կամաց սկսան ցրուիլ, մանաւանդ որ մէկ կողմէն Յոյներուն տէրութեան, միւս կողմէն Պարսիկներու և Տաճիկներու սուրերուն ներքեւ ընկած էին, վասն զի այս աղդերը կ'ուզէին որ Հայաստանին տէրը լինէին: Էինդ հարիւր տարի առաջ, երբ Հայոց թագաւորութիւնը բոլորովին վերջացաւ, ա՛լ աւելի յաւալի եղաւ նոցա վիճակը. ոչխարի պէս կը մորթըլէին որոնք որ Հայաստան կը մնային, և Յոյն կամ Պարսիկ չէին լիներ: Եւ այս աղդը որ երբեմն քառսուն միլիոնի կը համրըլէր՝ այժմ չորս միլիոնի իջած է.... Շատերը սրտվ մեռած են այն քառսուն միլիոնէն, շատերը անօթութենէ և թշուառութենէ, շատ մի ևս օտար երկիրներ փախչելով, ուր մոռցան իրենց լեզուն ու կրօնք և կորարվեցան . . . :

Ամենէն աւելի ցաւ ու վիշտ, Թաթարներու իշխան Լէնկթիմուր կոչված գաղանը բերած է Հայոց գլխաւն. Երբոր կարդաք Հայոց պատմաւթիւնը, ձեր աշքերը արտասուրով պիտի լցվին: Այս Լէնկթիմուրին զօրքերուն հետ էր որ պատերազմեցաւ կարինէ անուն Առւշեցի Հայ կինը: Այս կինը ուժ տարեկան խիստ գեղեցիկ զաւակ մալ ունէր, և ուրիշ կիներու հետ ան-

տառներու մէջ պահված կը կենար, որպէս զի շարագործներուն ձեռքը չընկնի: Բայց անօրէն մարդիկը տեսան և վրան վագեցին: Այն ատեն կարինէ ձեռքը սուր մի առնելով սկսաւ պատերազմիլ բայց տեսնելով որ կարելի չէ ազատիլ, սուրովը նախ իւր որդեակը մեռցուց, և ապա




ՊԱՏԵՐԱԶՄ ԿԱՐԻՆԵՐ

ինքինքը մի ժայռի վրայէն վար նետեց ու մեռաւ, որպէս զի անօրէն մարդերու ձեռքով չը մեռնին :

Այս Լէնկթիմուրէն վերջը Հայաստան եկաւ գաղանաբարոյ Շահաբաս, Պարսից թագաւորը, որ գրեթէ արիւնի լիճ դարձուց խեղճ և անտէր Հայաստանը. Հրամայեց որ բոլոր Հայերը Պարսիկաստան երթան Երասխ գետէն անցնելով: Թշուառական զօրքերը այնշափ անզթութեամբ ճամբայ հանեցին Հայերը, որ գետին վրայի կա-

մուլջները փլան, նաւերը չը բաւեցին, և խեղճ
Հայերը գրեթէ բոլորովին գետին մէջ խղդըլե-
ցան, քիչերը ազատեցան :

Օրէցօր Հայաստան աւելի գէշ վիճակի մէջ



ԱՐԵԱՆԱՆՔ ԵՒ ԱՆԴԻՌՈՒԹԻՒՆ ՇԱՀԱԲԱՍԱՅ

ընկաւ, մինչև հիսուն տարի առաջ Պարսիկնե-
րուն և Տաճիկներուն ձեռքք մնաց: Վերջը Ռու-
սիայի, Պարսկաստանի և Տաճկաստանի տէրու-
թիւնները լաթի կտորի պէս բաժին ըրին դայն
իրենց մէջ:

Հիմակվան Հայերը միայն Հայաստանի մէջ
չեն բնակիր, երկրիս բոլոր կողմն ալ Հայ կը
գտնըի: Ամենէն շատը Տաճկաստանի մէջ է,
երկու միլիոն երէք հարիւր հազար:

Հիմակու հիմայ Հայերը ուսումի և կրթու-
թեան կողմէ շատ ետ մնացած են: Ռուսաստանի

Հայերը ուրիշ տեղի Հայերէն աւելի փափաք կը
ցուցունեն կրթութեան և ազգասրբութեան: Բուն
Հայաստանի մէջ գտնըլով Հայերը չը գիմանալով
թշուառութեան՝ մեծ քաղաքներ կը գաղթեն,
թողելով իրենց կիներն ու զաւակները, ապրուստ
ճարելու :



ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՔ

Ելիք, մեծցէք, Հայ տղեկներ, որ լուսաւորէք
ու կրթէք ձեր Աղդը, վասն զի այս աշխարհի
մէջ կրթութիւնն է ամեն բանի փրկիչ: Զեր
քսակները պարպեցէք որ ուսմունքը աւարածիի,
ձեր գիտցածը սորվեցունել ջանացէք որ Հայ
աղդը փրկըլի :

Հայաստանի Աշխարհացոյց տախտակն այս էջին
ետին կը տեսնէք:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ


ԲԵԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ

Brlyhuf bz wðanynrs.

Արել, Լուսինը և այն բոլոր փայլուն աստղերը,
որք երկնքին մէջ կերևան, կարծես թէ մեր
դլիսուն վրայի և հորիզոնին չորս կողմը պատօղ
կապոյտ կամարին կպած են. բայց իրօք այնպէս
չէ. Ոչ միայն Արել, Լուսինը և աստղերն անոր
կպած չեն, այլ կամարն խել չը կայ, այդ բանը
աչքի երևոյթ մի է. Այս կապոյտ գոյնը երկրիս
չորս կողմը եղող օդինն է, որուն մէջ կը պըտը-
տինք, որ մեր թռքերուն մէջ կը մտնէ կելնէ, և
զոր կրնամք զգալ երբ ձեռքերնիս օդին մէջ
փառաեմք. և երբ ուժգին խռովի կամ շարժվի,
որ առեն առաջ կուգայ հովը :

Օդին այս գոյնը այնչափ զարմանալի չը պիտի
երկի ձեզի, երբ մտածէք թէ կրակին վրայ
տաքցող ջուրին և խահվէին շոգին, որք օդի
նման բան մի են, նմանապէս աւելի կամ պակաս՝
ճերմակ, թուլս կամ գորշ գոյն մի կ'ունենան :
Ամպերն անգամ այլ և այլ գոյներ կ'առնեն :
Ապակին ալ, օդին պէս, ինքնին գոյն մի չ'ունի,



բայց երբ շատ մի ապակի իրարու վրայ դնես,
այն ատեն գոյն մի կ'երեխ . այնպէս է օդն ալ :

Երկիրը, որ ինքն իւր վրայ կը դառնայ, դարձած
ժամանակն օդը իւր հետ կը քաշէ կը տանի,
եթէ օդը անշարժ կենար, շէնքերը կը կործանէին,
ծառերը արմատէն կը խլէին, և երկրա-
դունտին բոլոր բնակիչները կը մեռնէին :

ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ

Զեւ երկրի. Մարմիններու ծանրութիւնը. Երկրի
շարժումը. Արեւին եւ Լուսինին շուրջը.

Երկիրը որ մեզի տափակ կ'երեխ՝ կլոր է. ինչ-
պէս որ են մեր գլխուն վրայ երեցող աստղերը:
Երկիրս տիեզերքէն բոլորովին բաժնըլած դատ
մարմին մի է:

Մարդիկ երկրի վրայ այնպէս զետեղլած են,
ինչպէս որ գնդասեղները կծիկներու վրայ. սա
տարրերութեամբ որ գնդասեղները իրենց սուր
ծայրէն կծիկին մէջ խոթվելով բռնըլած են նորա
վրայ, բայց մարդիկ երկրի վրայ կը կենան այն
զօրութեան միջոցով, որ կարող է թէ երկրէն
հեռացող մարմինները, ինչպէս նետլած քար մի,
նորէն աեղը բերելու, և թէ երկրին մակերեսոյ-
թին (երեսը) վրայ գտնըլող մարմիններն իրենց
տեղը բռնելու:

Այս զօրութիւնը ծանրութիւն կ'ասվի⁽¹⁾. Եր-

⁽¹⁾ Ծանրութիւն կամ ծանրականութիւն բառով կը
հասկնանք այս տեղ թէ բոլոր մարմիններու մէջ զօրու-

կիրս բաղկացունող բոլոր մարմինները ծանր են.
ինչպէս, գետերու և ծովերու ջուրը, ժայռերը
և փոշիները, կենդանիները և բոյսերը, գդնիսկ
և ամղերը, և ծովէն ու լիճերէ և ուրիշ տեղե-
րէ ենուղ ջուրի շոգին ալ ծանրութիւն ունին.
այսինքն՝ դէպի երկրագունադիններս կը քաշվին,
կ'իջնեն, Հոր մի, որչափ ալ խոր լինի, օդը նորա
վարի կողմն ալ կը գտնըլի : Մարդ ամենասեծ
և ամենախօրունկ հանքերու մէջ ալ կրնայ շնչել,
եթէ օդին մէջ վատաւող շոգիներ խառնըլած
չը լինին:

Երբ որ քար մի նետէք ձենէ հեռու, իւր
ծանրութիւնը ունենալով ալ ծանրայ մի կանցնի
օդին մէջ, բայց շիտակ դիծով չերթար այլ կոր,
այս ձեռով, վասն զի իւր ծանրականութիւնը
զինք միշտ դէպի երկրը կը մէկ, և կամ թէ երկ-
րին ունեցած քարչողական զօրութիւնը զայն իրեն
կը քաշէ :

Ենթագրեմքթէ (որ անկարելի է) թնդանօթով
կամ ուրիշ մաքինայով գնտակ մի, ոռւմը մի նետ-
վի օդին սահմաններէն ալ անդին, այս գնտակը
վերջին աստիճան արագութեամբ մեր երկրա-
գունտին շուրջը պիտի դառնար, առանց մակե-
րեւոյթին գպչելու: Այսպէս կը շարժի նաև լու-

թիւն մի կայ, որով նորա կը քաշվին, կը մզվին դէպի երկրի ներսը, այս նկատումով այս բառը հաւասար
նշանակութիւն ունի «Երկրիս քարչողական զօրութիւն»
բառին :

սինը, որ աշխարհի ստեղծվելէն ի վեր միշտ երկրին չորս կողմը կը դառնայ, քարշողական զօրութեամբ քաշվելով :

Երկիրն ալ արևին շուրջը կը դառնայ կանոնաւոր կերպով, ինչպէս լուսինը երկրին կը քաշի, անանկ ալ երկիրը մի քաշող զօրութեամբ դէպ արևը կը քաշի, և նորանէ լոյս ու տաքութիւն կ'առնու։ Այս բաներուն պատճառները և աւելի ընդարձակը վերջէն պիտի սովորիք, երբ բաւական մեծնաք : ✪



ՏԱՍՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Մոլորակմեր, աստղեր և օդայարեր (շանթայար)

Իմացաք արդէն թէ երկիրը արևին և լուսիներ երկրին բոլորտիքը կը դառնան, առանց իրարու դպչելու և վար ընկնելու, բոլոր աստղերն ալ որք արևին և լուսինին պէս միջնոլորտէն՝ այսինքն՝ մեր օդի սահմանէն դուրս են, նոյա գտնրված անջրպետին մէջ կազած են, առանց երբէք վար ընկնելու։ Այս աստղերէն կան որ չեն շարժիր արևին պէս, և կ'ասպին հաստատուն աստղեր, շարժօղները իրենց դործը կանոնաւոր կերպով կը կատարեն առանց իրարու զարնըլելու, և առանց իրենց ճանապարհէն շեղելու։ Արևին, երկիրին և լուսինին պէս աստղերն ալ կլոր են, և գըեթէ դնտակի պէս։

Գիտնական մարդիկ կարօղ եղած են չափել թէ երկիրը որչափ հեռուէ արևէն, լուսինէն և

իրեն նման ուրիշ տասը աստղերէ, որք մոլորակ կ'ասպին :

Լուսինին և երկրիս մէջ տեղը ութառուն հաղար մզոն հեռաւորութիւն կայ, երկիրն ու արևը երառուն քառասուն միջին մզոն հեռու են իրարմէ։ ✪

Մոլորակները, որք տասը հատ են, իրենք իրենց լոյս չունին, ինչպէս նաև լուսինը, սոքա արևին լոյսովը կը լուսաւորվին :

Բայց աստղերը մէյմէկ արևիներ են, և եթէ մեղի շատ պզտիկ կ'երևին, պատճառն այն է որ արևէն շատ շատ հեռու կը գտնըլին, այնչափ որ մարդ գեռ կարօղ եղած չէ այդ հեռաւորութիւնները չափել։

Մոլորակները, երկրին պէս՝ (երկրին ալ մոլորակ մի է, մունալու չէ) ամենն ալ արևին բոլորտիքը կը դառնան զատ զատ (ջոկ ջոկ), ճամբաններով։ Գիտնականները կ'ասեն որ սոքա այսպէս միշտ պիտի դառնան առանց իրարու հանդիպելու։ Մոլորակներէն մի քանիքն շուրջը արբանեակ կոչված ուրիշ շատ աւելի փոքրիկ աստղեր ալ կը դառնան, ինչպէս է լուսինը, որ երկրին չորս կողմը կը դառնայ։

Շատ անգամ երկրիս վրայ խոշոր քարեր կընկնին օդին մէջէն. այս քարերը օդայար կամ շանթայար կ'ասպին, և օդին մէջէ անցած ժամանակ կը բոցավառին, և ետևնուն լուսաւոր հետք մի կը ձգեն, ✪



ՏԱՍՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Մարմիններու անկումը. Դարիվայր ճանրաներ.
Սանդուղներ.

Ամեն մարմին անըզգալի կերպով ծանրութիւն
մի կունենայ, ոչ միայն ընկած ատեն, այլ և այն
ժամանակ ալ, երբ տեղ մի անշարժ կպած է :
Մի մարմինի ծանրութիւնը ո՞րչափ շատ լինի,
անկումն ալ այնքան աւելի շուտ կը լինի: Երբ որ
մէկ տունի բարձր յարկէն դնտակ մի վար նե-
տէք, առաջ կամաց կամաց կ'իջնէ, բայց քիչ ժա-
մանակէն արագութեամբ : Օրինակ. առաջին
երկվայրկեանին մէջ դնտակը հինգ մէդր տեղ
կ'իջնէ . բայց երկրորդ երկվայրկեանին երեք
անգամ աւելի ճանրայ կ'առնու :

Մարմիններու ընդհարումէն (իրարու զարնը-
վելէն) զարմանալի երեսոյթ մի յառաջ կուգայ :

Ո՞րչափ որ նոցա անկումը (ընկնիլը) երկայն
քշէ, ո՞րչափ երկար ժամանակ կրեն ծանրութեան
ազդեցութիւնը , այնշափ աւելի ուժով կը զար-
նըլին իրենց հանդիպած բանին : Մի տունի
բարձրէն ընկած փոքրիկ քարէ դնտակ մի եթէ
մարդու գլուխի վերայ ընկնի, կրնայ զայն ծանր
կերպով վիրաւորել, թէև խիստ մօտէն ընկած
քար մի չէ կարօդ :

Անձրիի կաթիլները, որք ամենաբարձր տեղեր
դտնըլող ամպերէ կը կաթկըթին, խիստ ուժով
պիտի զարնէին եթէ օդին ընդդիմակացութիւնը
(դէմ կենալ) նոցա ուժը չը պակսեցունէր. օդին

այս ընդդիմակացութիւնը կարկուտին ընդհա-
րումին սաստկութիւնն ալ կը պակսեցունէ մեծ
մասով ապա թէ ոչ ամեն փոթորկի ժամանակ
պատուհաններուն ապակիները, մարդոց գլուխ-
ներն ու բոլոր հունձքերը կամր կտոր կը լինէին:

Երբոր դարվար տեղէ արագութեամբ վար
իջնէք, ծանրութեան ձեզի տված արագութիւնը
ձեր անձին շարժումին (վազածքին) արագու-
թեամբը կ'աւելնայ, և կրնայ ձեր կամքին դէմ,
ձեզ առնել տանել և մեծ վասագներ բերել ձեր
գլուխն : Այսպէս կը լինի նաև սանդուղքներէ
վար իջնելու ատեն :

Եթէ ճանրաները շատ կոր լինին, անկարելի
է որ մարդ ոտքի վրայ կեցած քալէ այն տեղէն:
Լեռներու կողերուն և բոլոր դարվար տեղերու
ճանրաները, վազքին արագութիւնը քիչցունելու
կերպով օձիկ-օձիկ շինուած են :

Այս բանը շատ օգտակար է թէ ելնելու թէ
իջնելու համար, եթէ փոխանակ ամենէն կարճ
և ամենէն արագ ճանրայով վեր ելնելու, աւելի
երկայն բայց աւելի գիրք և հեշտ կողմնակի ճա-
նապարհով մի ելնեմք, ամեն մէկ քայլի քիչ մի
բարձր տեղ պիտի առնեմք, և այսպէսով առանց
յոդնելու պիտի կարենամք բարձրը ելնել : Այս
օգտակարութեան համար է որ հին տուներու
մէջ շինված հին ձեռվ, շիտակ գիծով, բարձր
աստիճաններով (աչք) սանդուղքներու տեղ,
այսօր ոլորածոյ և կամ մաս մաս (կտոր կտոր)
բաժնըլած սանդուղքներ կը շինեն, որոց աս-

տիճանները աւելի շատ և աւելի ցած են :
 Դարվար ճանապարհներու վրայ խօսելով՝ մարդկի կներու և անասուններու անոնց վրայէ քայլու մասին քաշած աւելի կամ պակաս գժուարութիւնները ցուցինք, մի և նոյն գժուարութիւնները պիտի պատահին նաև Ծված անասուններու ալ, և վտանգը աւելի մեծ պիտի լինի մանաւանդ արագութեամբ վար վաղած ատեն : Շատ գարվար տեղեր կան, որոյ վրայէ կառքերը առանց անասունի ալ կարօղ են իջնել Ծված կառքերու արագութիւնը նուազեցունելու (քիչցունել) համար զանազան միջոցներ կան : Ծված անասուններուն փոկերուն հետ ուրիշ տեսակ մի փոկեր ալ կան և ձիերը այդ փոկերուն կը կոթընին վար իջնելու տեղ: Երբեմն ալ ձիերը լուծէն կը հանեն, և ետեւ կողմէն կը լծեն : Նաև անիւներէն մէկը անուակալով (անիւրոնօղ) մի կը կայնեցունեն, չը դառնալու համար :

ՏԱՄՆԵՕԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Օդին ճնշումի բոլոր մարմիններու վրայ եւ մասնաւորապէս մարդկային (մարդու) մարմնին վրայ :

Ինչպէս որ երկրագունախն երեսին ու ներսին բոլոր մարմինները, նոյնպէս օդն ալ ծանր է, այսինքն գէպի երկիր կը քաշվի : Եթէ այս բանը չը լիներ օդը թողելով մեր

երկրագունախ, անջրպետին մէջ պիտի ցնդէր, որովհետեւ օդը կազմօղ մասնիկները՝ միշտ իրարմէ զատվելու և աւելի ընդարձակ տեղեր տարածվելու կը նային. օդը իւր այս յատկութիւններովն է որ երկրագունախ վրայ գանըվօղ ամեն մարմիններու ծակերու մէջ ալ կը մտնէ. այսովէ նաև որ մեր մորթին ծակտիկներուն մէջ կը մտնէ, մանաւանդ երբ մորթը լուացումով մաքրըված լինի եղոտ նկւթերէ և աղտերէ :

Զուրն ալ թէ ծովի եղեր, թէ առուի, և թէ աղբեւրի ծակտիներ ունի, որք այնչափ պղտիկ են, որ չեմք կրնար տեսնել. օդը այդ ծակտիներուն մէջ ալ կը գտնըվի : Գիտըրված է որ օդը մեր խմած ջուրին հաճոյ համ մի կուտայ, և թէ առանց օդի ջուրը չը պիտի կրնայինք խմել. փորձեցէք քիչ մի ջուր կրակի վրայ տաքցունելով, մինչև որ մէջի օդը բաւական ենէ, և ապա խմելով : Օդը, դինին և ուրիշ ամեն տեսակ խմելիկներու մէջ ալ կը թափանցէ, ինչպէս նաև փայտերուն և քարերուն մէջ ալ կը մտնէ :

Զեր մարմինին ամեն մասերուն, և ընդհանրապէս ամեն բաներու վրայ օդը միշտ միենոյն ուժով կը ճնշէ, կը ծանրանայ, բեռ կը լինի : Չափած են որ մարդուս բոլոր մարմինին վրայ օդին տված ծանրութիւնը հաւասար է տասնը եօթը հաղար քիլոկրամի : (1)

Օդը ոչ միայն մեր կուրծքին մէջ կը մտնէ

(1) Այսինքն տասնուշորս հազար հարիւր հիսուներկու (14,152) օխայ :

մեր շնչառութեան ժամանակ, այլ նաև մեր բու-
լը անդամներուն, մախն և մարմինին բոլոր մա-
սերուն մէջ անցնելով՝ թէ դուրսէն և թէ ներ-
սէն մէկ չափով կը ճնշըլիմք օդէն, այսինքն օդը
թէ դուրսէն և թէ ներսէն մէկ չափով կը ծան-
րանայ: Եթէ օդը մեր ներսէն ալ չը ճնշէր, չը
պիտի կրնայինք դէմ դնել անոր ծանրութեան,
որ ինչպէս ըսկնք, տառը մէթր բարձրութեամբ
լցված մի աւազան ջուրին ծանրութեան հառա-
սար է:

Եթէ մի ամանի բերանը լաւ մը փակենք և
մէջի օդը մէքէնայով քաշենք անկարելի է որ
մարդիկ բանան. չորս ձիու ուժով հաղիւ կը
բացվի այն ամանը:

ՏԱՍՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Մինոյութին (օդին) մէջ գտնիլած աղեւայլ
կազերը. — Նեչառութիւն. — Անշնչացումն. — Օդին
ազդեցութիւնը կրակին վրայ:

Օդը միշտ մեր կուրծքին մէջ կ'ենէ և կը
մտնէ յաջորդաբար. այս գործողութիւնը շնչա-
ռութիւն (շունչ առնել) կ'առի: Օդը, որ կը
շնչեմք, մեր թոքերուն մէջէ անցնող և շրջան
ընօղ (դարձօղ) արիւնին երթալով, նորա գոյնը
վարդի գոյնի կը փոխէ:

Օդին այս գործողութիւնը, նորա բոլոր մաս-
նիկներուն ազդեցութեամբը չէ որ կը լինի.
Վասն զի այդ մասնիկներուն մէջ, որք շատ են
թիւով, կան որ ցնդած ջուր, այսինքն ջուրին

շոգի են. Կան որ փրփրուն գարէջսւրէ կամ
շամբանիակ գինիէ ենսօղ կազին պէս կաղեր են,
որք չէ թէ արիւնին վարդի գոյն կուտան, այլ
հակառակը, մահ կը պատճառեն և խեղդամա-
հութիւն (խեղդուելով մեռնիլ) կամ անչնչա-
ցում յառաջ կը բերեն եթէ օդին մէջէ չը նշեմք,
որ շատ քիչ բան մի է. այս կաղերը ածխային
թթու կ'առվին, կան մասնիկներ ալ, որք օդին
ամենէն մեծ մասը կը կազմեն, արիւնին վրայ ոչ
լաւ և ոչ գէշ ազդեցութիւն մի կ'անեն: Գլխա-
ւոր աեսակը, որ արիւնը վարդագոյն կ'անէ և
շնչառութեան մէջ գլխաւոր գործը կը տեսնէ,
թթուածին կ'առվի:

Թթուածինն է որ փայտը, ածուխը, քարա-
ծուխը, լամպաները, ճրագները, պատրոյգները
և բուր կրակ առնօղ բաները բոցավ կամ առանց
բոցի կ'այրէ օդին մէջ: Օդին միւս մասերը չեն
կրնար մարմիններ այրել:

Եթէ օդին մէջ թթուածին չը լինի, կարելի
չէ լոյս և կրակ վառել: Երբոր հորի, այրի, կամ
բուրի մէջ մտնեմք, և այն տեղի օդը աւրլված
լինի, այսինքն թէ որ բաւական մեծ չափով
թթուածին չը գտնըվի օդին մէջ, վառված
ճրագները կը մարին և մարդիկ ալ կ'անչնչան:

Թէն ջուրը օդ կը պարունակէ, ասկայն ջուրին
մէջ ընկնօղ մարդիկ մի քանի վայրիւանէ աւելի
չեն ապրիր. օրովհետեւ այդ օդը խիստ քիչ է,
և մեր շնչառութեան համար ջուրէն գիւրու-
թեամբ չը բաժնըվիր. ընդհակառակը ձուկերը

այն կերպով շինված են, որ այսչափ քիշիկ օդով
և զայն ջուրէն դիւրին կերպով քաշելով կրնան
ապրիլ:

Երբ որ փայտին կամ ածուխին այրիլը շատ-
ցընել ուղեմք, ածուխին կամ փայտին վրայ կը
փշեմք, որպէս զի այրելու համար պէտք եղած
թթուածին տամք նորէ նոր, Շատ անգամ փշելու
տեղ, փայտը կամ ածուխը վառված սենեակին
կամ վառարանին մէջէն պատուհան մի կամդուռ
մի կը բանան. այն ժամանակ օդի հոսանք մի
շուտութեամբ կրակարանին վրայ կ'երթայ և
կրակը կը նորոգէ աղւորիկ բոցով մի :

Երբ որ սենեակ մի կրակ առնու, պէտք չէ
դուռներն ու պատուհանները բանալ. կրակա-
րանին ծակուծուկերը գոցելու է, օդ մտնելը
արդիելու համար. և ամեն բանէ առաջ կրակ
առած իրերը (բաները) ծածկել նայելու է ոչ
միայն ջուրով այլ և հողով կամ թրջըված լաթե-
ղէններով. Գիւղերու մէջ երբ որ տուն մի այրի,
հողը ջուրէն աւելի գործ կը տեսնէ. վասն զի
աւելի գժուար է ջուր գործածել:

Նաև երբոր մէկը զգեստներէն կրակ առնու,
բնաւ վազելու չէ, թէ ոչ՝ այդով օդը կը նորո-
գի և բոցը կը շասնայ : Եթէ մօտիկ տեղ մի
ջուր չը դանուի մէջը նետվելու համար, աւելի
լաւ է ուրիշ լաթեղէններու մէջ պլլըմելով բոցը
մարելու ջանալ, և կամ աւելի լաւ՝ նայն լաթով
գետնին վրայ թափըլարկելու է :



ՏԱՄԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Տայութիւն կամ ջերմութիւն. — Մարմինները
շփելով կը սանան. — Արեւին տայութեան
գործը. — Մարդկային մարմինին ջերմութիւնը.
— Շնչառութիւն եւ Արտաշնչութիւն:

Զերմութիւն (տաքութիւն) ըսելով անմիջապէս
կրակն ու արևը միտք պիտի բերէք. բայց տա-
քութիւն տվօղ միայն արևն ու կրակը չ'են. և
մեք արևէն ու կրակէն որչափ ալ հեռու լինիմք,
գարձեալ մեր մարմիններուն մէջ և մեր բոլոր-
տիքը դժնըվօղ բոլոր բաներուն մէջ տաքութիւն
մի կայ :

Զեռքերնիդ իրարու շփեցէք, կամ ձեր մար-
մինին մէկ տեղը ժանելյափ կտորով մի շփեցէք,
կամթէ շուտ շուտ փայտի կտոր մի, ուրիշ մի
կտորի վրայ. այն ատեն բաւական տաքութիւն
մի առաջ պիտի դայ : Շատ անգամ կառքերու
սաստկութեամբ վաղած ժամանակ անիւներուն
առանցքները ուժով շփվելով կրակ կ'առնուն .
բայց երբոր առանցքին վրայ քչիկ մի իւղ քավի,
այդպէս բան չը պատահիր: Այս եղը ոչ միայն
անիւներուն շփվելը մեղմացունելու և դառնալը
դիւրացունելու համար կը գործածեն, հապա-
նակ անիւներու տաքութիւնը քիչցունելու հա-
մար: Մարմին մը տաքցունելու համար, շփելէ
շատ ուրիշ միջոցներ ալ կան, բայց զանոնք երբ
որ մեծնաք՝ այն ժամանակ պիտի սովորիք :

Արեւին դէմ աղիւս մի տաքցուցէք, և յետոյ

փեղկերով գոյգած մի սենեկի մէջ տարէք, ա-
զիւսին տաքութիւնը դեռ պիտի զգաք, թէեւ
գուք տաքութիւնը և զայն պահօղ մարմինը
(աղիւսը) չէք կրծար տեսնել: Այսպէս տաքու-
թիւնը մինչև ձեզի կը հասնի մի ուրիշ առար-
կայէ, թէի այդ առարկայն (բան) կրակի կամ
արևի պէտքոց չունենայ և դուք չը կարենաք
տեսնել:

Այն ըստոք կրակները, զորս մարդիկ կը գոր-
ծածէն իրենց բնակարանները (տուները, բնա-
կած տեղերը) տաքունելու և լուսաւորելու,
կամ իւրեանց գործարաններուն աշխատութեանց
համար, շատ ոչինչ բաներ են արևին տաքու-
թեան նայելով, որ շարունակ երկրիս վրայ կը
տարածի:

Երբ գիշերները համի, արևն ալ չեմք կընար
տեսնել բայց նա երկրիս մէկ ուրիշ կողմը, և
այն կողմը գտնըլիող ժողովուրդները կը լուսա-
ւորէ. այսպէտով միշտ մեր բնակած երկրագուն-
ար կը տաքունէ: Այս տաքութեան մեծ մասը
օդին մէջ կը ցըփի:

Երկրիս այլ և այլ աշխարհները հաւասար
կերպով չեն տաքնար արևէն. Թուրքիան, որուն
մէջ կը բնակիմք մեք, աւելի շատ տաք է Ռու-
սիայէն և Անդլիայէն: Բայց եգիպտոս, Երուսա-
ղէմ և հասարակածին մօտ եղող ուրիշ տեղեր
աւելի տաք են Թուրքիայէն: Աշխարհներու
տաքութեան միակերպ (մէկ կերպով) չը լինելէն
առաջ կուգայ կիմաներուն (օդ) զանազանու-

թիւնը, (տեսակ տեսակ լինելը, Թուրքիայի կի-
ման շատ առողջարար է:

Շնչառութեան ժամանակ երբոր օդը՝ արիւնին
միանայ, և անոր վարդի գոյն մի տայ, այդ բանը
տաքութենէն առաջ կուգայ: կընամք ասել որ
այս միջոցին արիւնը կ'այրի, որպէս փայտը կրա-
կին մէջ. սա տարբերութիւնը կայ որ փայտին և
օդին միանալը բոցով և սաստկութեամբ կը լինի,
բայց արիւնը քիչ զօրութեամբ և առանց բոցի
կ'այրի:

Շնչառութեամբ առաջ եկած այս տաքութիւնը
ցուրտ տեղերու մէջ մարդուս մարմինը անվաս
կը պահէ, և մի և նոյն տարիքի ու կաղմու-
թեան աէր եղող մարդոց մէջ գլեթէ մի և նոյն
շափով կը գտնըլի:

Սաստիկ յոդնելով կամ մարմնական խաղեր ու
կրթութիւններ անելով, մի տաքուկ արևի
ճառագայթներուն, կամ մեծ կրակի մը դէմ կե-
նալով մեր մարմինին տաքութիւնը խիստ կը
շատնայ. բայց նաև նոյն ժամանակ արտաշնչու-
թիւնն (դուրս չնչել) ալ կ'աւելնայ, և մեր մար-
մինին մորթին ծակերէն ելող շոգիներն այդ
տաքութեան մէկ մասը կ'առնուն կը տանին:

Մարդը միւս ամեն կենդանիներէն աւելի
կընայ տաքի կամ ցուրտի գիմանալ. զանազան
գործարաններու գործաւորներ՝ ամենասաստիկ
կրակներու դէմ դժուարին գործեր կը գործէն:
Ընդհակառակը նաև շատ ճանբորդներ բաւունե-
րուն մօտ եղող նահանգներու մէջ կը բնակին:

ուր ցուրտը այնչափ շատ է որ կրնայ ջերմաշափին անդիկը սառեցունել :

—————♦—————

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Տախովինը մարմիններու ծաւալը կ'առելցունէ :

Տաքըլված մի երկաթի կամ տապակի մէջ շիշի խից մի դիր և լաւ մի տաքըլուը , տաքնալէն վերջը երբոր խիցը նորէն շիշին բերանը խօթես , ք պիտի կրնայ մտնել . ուրեմն տաքութենէն խիցը մեծցեր , ծաւալը աւելցեր է :

Նոյնպէս երբոր դարբին մի բանալի մի դնէ կրակին մէջ նորելու համար , բանալին տաքնալէն վերջը չը կրնար կղզանքին մէջ մտնել . պէտք է սպասել որ պաղի , և անով իւր առաջվան ծաւալը առնու :

Կրակարանին մէջ ջուրով լեփ-լեցուն քահվէ-եփոց (քահվէ եփելու աման) մի դիր , անմիջապէս ջուրը տաքնալով ծաւալը աւելցուցած է , բանալին և շիշի խիցին պէս :

Կամ կրակին մէջ կամ արեին դէմ դառափուշտէ կամ խեժապատ կերպասէ փամփուշտ մի (պալօն) դրէք , որոյ հետ դուք յաճախ կը խաղաք : Երբոր փամփուշտը տաքըլունելէդ առաջ աղէկ ուռած չը լինի , տաքութեան միջոցով շուտով կուռի . բայց այս ուռենալը փամփուշտի մէջի օդէն է , որ տաքնալով իւր ծաւալը կ'աւելցունէ վերը յիշվածներուն նման :

+ *

Ինչ որ տաքըլունէք , նոյն արդիւնքը առաջ պիտի դայ . բայց քանի մը մարմիններ , օրինակ փայտերը , իրենց ծաւալը այնչափ քչիկ կը մեծցունեն որ դրեթէ կարելի չէ նշմարել , և շատ անդամ ալ հակառակը կը պատահի , չը մեծնար , այլ կը պատիկնայ . այսպէս երբ ո՛ և է մի դարանի դուռը , կամ բարշարկողիկ (չեքմէճէ) մի որ ցուրտ և խոնաւ (թաց օդով) սենեակի մէջ մինելով դժուար կը բացվին , դրեթէ ինքնիրեն կը բացվին եթէ սենեակը կամ դարանը քիչ ժամանակ մի տաքըլվի արևով կամ կրակով : Այս բանիս պատճառն այն է որ ձմեռ ժամանակ դուռին կամ քարշարկդիկին մէջ մնացած քիչ մի ջուրը կամ խոնաւութիւնը (թացութիւն) տաքութեան զօրութեամբը կ'երթայ մէջէն : Եթէ այս դուռին կամ բարշարկողիկին դուռը առաջվընէ աղէկ չորցըլված լինէր , տաքութեան զօրութիւնովը իւր ծաւալը քչիկ մի պիտի աւելցունէր . բայց , ինչպէս որ ասացի , այդ աւելնալը հաղիւ կը տեսնըլի :

Մարմիններու այս յատկութիւնը գիտնալէ վերջ , որ տարածութիւն (տարածվիլ , երկըննալ , լայննալ) կ'ասվի , պէտք է գիտնալ նաև որ տաքըլված մարմինները անմիջապէս պաղելէ վերջն ինչ կը լինին : Եթէ քանի մի վայրկեան սպասեմք , պիտի տեսնեմք որ շիշին ապակիէ խիցը և բանալին իրենց առաջի չափը կ'առնուն , և կրնան իրենց տեղերը մտնել : Արդ՝ եթէ տաքութեան աղդեցութեամբ մարմիններու ծաւալը

Կաւելնայ, ցրտութեան աղդեցութիւնով ալ այն
ծաւալը կը պղտիկնայ կամ կը իսանայ .

ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՍ

Զերմայափ.

(Հարկ է որ ուսուցիչն ձեռքը չերմաշափ մի լինի, տղայոց ցուցա-
նելու համար :)

Նայեցէք սա պղտիկ դործիքին, որ տաքու-
թեան առտիճանները (չափը) կը ցուցանէ, որ նաև
լուացվելու համար պատրաստըլած տաք ջուրին
մէջ կը գնեն՝ տաքութեան բաւական, կամ քիչ
կամ աւելի լինելը դիտնալու համար, Այս պղտիկ
տախտակին վրայ աւելի պղտիկ ազակիէ շիշիկ
մի կայ, որ երկայն ու նեղ պարանոց մի ունի,
և մէջն ալ կարմրագոյն հեղուկ մի կայ: (Հեղուկ
կ'ըսպի ջուրի նման բոլոր բաներուն. իւղ դինի,
շուրուպ և այլն հեղուկ են): Այս դործիքը զեր-
մայափ կ'առի, որ տաքութիւն չափող ասել է :

Զերմաչափը ձեր ձեռքին մէջ բռնեցէք պինդ,
կամ թէ կուրծքերնուուգ վրայ գրէք. յետոյ կար-
միր հեղուկին նայեցէք, կը աեսնէք որ ձեր
ձեռքին կամ կուրծքին արլած տաքութեան աղ-
դեցութեամբը վեր կ'ենէ, Ալիքն դէմ ալ դնէք,
կամ թէ եռացօղ ջուրի մէջ, կամ կրակի դէմ,
անմիջապէս պիտի աեսնէք որ՝ կարմիր հեղուկը
աւելի շատ վեր կ'ենէ, եթէ զերմաչափը շուրքին
մէջ դնէք, կամ կրակէն հեռու տեղ մի, հեղու-
կը իւր առաջվան աեղը կ'իջնէ .

Զերմաչափին պարանոցին վրայ գիծեր քաշ-
ված են, գիծերուն դէմ ալ թուանշաններ
դրված: Այս թուանշանները կը ծառայեն գիտ-
նալու՝ կարմիր հեղուկին կպած տեղերը տաքու-
թեան աղդեցութեամբ վեր ելնելուն կամ ցրտու-
թեան աղդեցութեամբ վար իջնալուն համեմատ:

Այս կարմիր հեղուկը զտված օղի է, որ կը
կոչի ալգօօլ. թէև այս ալգօօլը ջուրի պէս ան-
գոյն է, բայց վերջէն զերմաչափին մէջ դնողները
կարմրցուցած են ներկով :

Հեղուկին բարձրանալն ու ցածնալը տաքու-
թենէն ու ցրտութենէն առաջ կուգոյ, տաքու-
թեամբ նօսրանալով՝ վեր ելնելով, ցրտութեամբ
խոտանալով՝ վար իջնելով: Երբոք զերմաչափին
հեղուկը հասնի այն կէտին որ 0 (զրօ) նշանով
նշանակված է, այն ատեն սառողյի հալելու ժա-
մանակ տրված ցրտութեան աստիճանը կը լինի:
իսկ երբ 100 նշանակված տատիճանին հասնի,
տաքութիւնը եռացօղ (եփ ելնօղ) ջուրի տա-
քութեան չափ կը լինի :

Շատ անգամ ալգօօլի տեղ՝ զերմաչափին մէջ
ծանր հեղուկ մի կը գնեն, որ քիչ շատ անագի
և արծաթի գոյնն ու տեսքն ունի, և որ հայե-
լիներու եռեկի կողմը դրված ճերմակ ծեփին
մէջ ալ կը գործածեն: Այս հեղուկը սնդիկ
կ'ասիի: Կը նօսրանայ երբ տաքութիւնը շատնայ,
կը խտանայ՝ երբ քիչնայ:

ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ

Չուրի շոգին . — Շոգիով շարժող մեժենաներ .
— Օդին խոնաւութիւնը (Խացութիւն) . — Ամպեր .
— Անձրեւ, ձիւն . — Կարկուտ . — Սառոյց .

Երբ որ ամանով ջուր դնեմք կրակի մէջ և
տաքցունեմք , կը տեսնենք որ նախ և առաջ
փոքրիկ պղպջակներ կ'ելնեն , որք ջուրին երեսը
դալով կը պայմին . այսինքն երբ որ պաղը ելնեն ,
նորէն հեղուկ կը լինին , ինչպէս որ էին : Քիչ մը
յետոյ ջուրը այնպէս խոշոր պղպջակներ կը հանէ ,
որ դուրս կը ցատիէ . բայց վերջէն եռացումը
կանոնաւոր կը լինի , և քիչ քիչ ամանին մէջի
ջուրը կը հատնի , ոչ թէ եռալով՝ այլ շոգիի
ձեռվ , որ շատ անդամ չը տեսնըվիր :

Ջուրին այս շոգին օդին մէջ կ'ելնէ կը մնայ ,
օդը կազմող ուրիշ բաներու պէս . ինչպէս թըժ-
ուածին և ածխային թթու ասվածները : Ասել
է թէ այն պղտըտիկ հիւլէները , որոցմով բաղ-
կացած է ջուրը , այնչափ բաժնըված են իրար-
մէ , որ իրենց խիստ պղտիկութեան պատճառով
չենք կրնար տեսնել : Տաքութեան զօրութիւնը
ջուրին հիւլէները իրարմէ բաժնըվիլ ստիպած է .
ուրեմն ցուրի շոգին հեղուկ ջուրէն այն տաք-
բերութիւնն ունի՝ որ տաքութեան սաստիկ ու-
ժովը իւր հիւլէները ցնդած և իրարմէ բաժ-
նըված են :

Շատ վառարաններու (սօպաներու) վրայ ջու-

րով լեցուն աման մի կը դնեն , որպէս դի այս
ջուրը շոգի դառնալով վառարանին տաքութեան
սաստիկութեան դէմը առնէ : Եթէ կրակարանը
քիչ շատ պաղած ալ լինի , ջուրը դարձեալ կը
շոգիանայ , բայց շատ կամաց :

Գիտնալու էք որ ջուրը միայն կրակով չէ որ
կը շոգիանայ . ամանով ջուր դրէք չոր տեղ մի
որ խոնաւ չը լինի , մի քանի օրէն ջուրը բոլորո-
վին շոգի կը դառնայ , կը հատնի : Նոյնպէս մի
պարտէզի աւազանին ջուրը կրնայ շոգի դառ-
նալ և աւազանին յատակը չոր թողուլ , եթէ
մէջը ուրիշ տեղէ ջուր չ'երթայ : Այս բանին
պատճառն այն է որ երկրիս և բոլոր նիւթերու
մէջ , աւազանի ջուրին , հողին , փայտին , լաթին ,
վերջապէս աշխարհքիս վրայ գտնըված բոլոր
իրերուն մէջ՝ քիչ կամ շատ տաքութիւն կայ . և
այս տաքութիւնը ջուրին քիչիկ քիչիկ շոգի
դառնալուն կ'օգտէ :

Ծովերու և երկաթուղիներու (երկաթէ ճան-
րայ , զարավարօրի ճանրայ , չըմէնաըֆէր) վրայ
քալող շոգենաւներուն և շոգեկառքերուն մէջի
շոգիով շարժուզ մէքէնաները , որոնք այնչափ զօ-
րութեամբ նաւեր ու կառքեր կը քաշեն , ասոնց
բոլոր ուժը ջուրին տաքութեամբ շոգի դառնա-
լէն յառաջ եկած է : Մեծ կաթսայ մի կայ այդ
մէքէնաներուն մէջ , որ ջուրով լեցված է , և վա-
ռած հանքածուխով տաքցած : Երբ ջուրը շոգի
դառնայ , խողովակի մը մէջ կ'երթայ , այդ խո-
ղովակը երկաթէ խուփով մի գոցված է . ներսի

շոգին այս խուփին սուժով կը հրէ, և մէքէնատ-
յին վրայ երթալով՝ նաւը կամ կառքը յառաջ
կը քչէ :

Օդը միշտ շատ շոգին ունի իւր մէջ : Արևին
տաքութիւնը նաև երկրին ունեցածն ալ, ծո-
վերուն, գետակներուն, գետերուն և լիճերուն
ջուրերը կը շոգիացունեն. այս շոգին օդին մէջ
կը պաղի և պղտիկ կաթիւներու կը փոխի .
որք իրար գալով օդին մէջ բարձրը կ'ելնեն, և
կ'ասվին ամպ : Եւ ինչպէս որ մուխը կը լողայ
օդին մէջ, այնպէս ալ ամպը կը լողայ :

Երբոր երկրէն վեր ելնող շոգիները բաւական
ծանր կը լինին և չեն կրնար օդին մէջ լողալ,
վայր կը թափին, որուն մեք անձեռ կ'ասենք :
Զիւն ու կարկուտն ալ ջուր են, բայց սաստիկ ցըր-
տութեամբ սառած են: 1875, օդոստոս 30 ին,
Պաղչէճիկ գիւղին մէջ այնպիսի խոշոր կարկուտ
եկաւ, որ 50—60 տրամ կշռեց: Երբ որ երկրին
վրայ ալ օդին մէջ եղած ամպերը ձիւնի և կար-
կուտի փոխող խիստ ցուրտերուն պէս ցուրտ մի
լինի, լիճերը, պղտիկ գետերը և առուները կը
սառին: Ծովին ջուրը որչափ շատ աղի լինի, այն-
չափ ալ շատ կը դիմանայ սառելու :

Ջուրի շոգին ծովէն ալ ելնէ աղ չունի իւր
մէջ: Նոյնպէս և երբ անձրև լինի:

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ

Ելեֆտրականութիւն կամ շիհուր. Կայծակ.
Շամթարգել .

Շատ ժամանակ առաջ գանձված է որ սաթը,
քիչ մը շփելէ վերջ, իւր կողմը կը քաշէր չոր
ծառի տերեւներ, մազեր, թղթի կտորներ, և ու-
րիշ թեթև բաներ: Այս զօրութիւնը դատն նաև
ծծումբի, կնքամոմի և ապակիի վրայ :

Նմանապէս երբ կատուին կոնակը շփէք,
պղտիկ ձայներ կը լուէք որ կարծես թէ կատուին
մուշտակէն կ'ելնեն: Երբ այս փորձը դիշերվան
կամ մութին մէջ անէք, պղտի տեռնէք որ կա-
տուին կոնակէն լոյսի կայծեր կը կածկըռաեն
(ցայտել): Այս ձայնը, լոյսը և թեթև մարմին-
ները քաշելու զօրութիւնը ելեֆտրականութիւն
կ'ասվի :

Եթէ ձեռքով մետաքսի կամ կաշիի կաոր մի
շփէք, միենոյն ելեքտրականութիւնը յառաջ
պիտի գայ: Բայց փոխանակ ձեռքով շփելու
ծծումբի, կնքամոմի կամ ապակիի կտորով մի
շփեցէք պղտըռտիկ ձայները աւելի պիտի լովին և
լոյսերը աւելի պիտի տեսնըլին .

Թող ձեր մէջէ մէկը ապակիէ չոր ամաններու
վրայ կանգնի, և ուրիշ մէկն ալ կատուի մորթով
նորա հանդերձներուն վրայէ զարնէ, կամ դլու-
խին վրայէ շփէ, ապակիին վրայ կայնողէն ալ
այն ելեքտրական լոյսերն ու ձայները կ'ելնեն
և թէ մատդ անոր քթին կամ երեսին գպցունես

լոյս ու կայծ կ'ելնէ ու մատդ կը ցնցըլի և
լոյսը ցորեկվան մէջ ալ կը տեսնըլի: Եթէ ձեռքդ
նորա գլուխին վրայէ անցունես, և եթէ գլուխին
մազերը բաւական չոր են և շատ երկայն չեն,
կը տնկուին և մութին մէջ լոյս կը հանեն: Եթէ
նորա մարմինին բարակ փետուրներ, գերձաններ
մօտեցվին, անմիջապէս կը քաշվին, և քիչ մի
վերջը կը մզվին (կը քշվին): \times

Ելեքտրականութիւնը օդին մէջ ալ կը գտնըլի
ամպերու վրայ ալ. երբ որ ամպերը իրարու
շփվին, նոցա ունեցած ելեքտրականութիւնը
խիստ շատ լինելով շատ լոյս, կրակ և շատ ձայն
կը հանէ: Լոյսը կասվի փայլակ, կրակը կայծակ,
ձայնը որոտում: Ասել է թէ կայծակն ու որո-
տումը (ամպ գոռալ) ելեքտրականութենէ ա-
ռաջ եկած են:

Երբ որոտումի ձայն կը լսէք, պէտք է ծա-
ռերէ հեռանալ, որովհետեւ կայծակը շատ ան-
գամ ծառերու վրայ կընկնի: Եթէ տունի մէջ
գտնըլիք, պէտք է պատուհանները գոցել և վա-
ռարաններու քովէ հեռու կենալ: Նաև եկեղե-
ցիներու զանդակատուններէն հեռու կենալու
է և որոտումի ժամանակ զանդակ զարնելու չէ:
Բնակարանները և մեծ շինքերը կայծակէ պահ-
պանելու համար տանիքներուն վրայ պրածայր և
երկայն երկաթէ ձողեր կը տնկեն, որք շանթար-
դել կ'ասվին, և գետնին հետ կապ մի ունին
շղթայով մի. կայծակները այս շանթարգելնե-
րուն վրայ ընկնելով և տունին մնաս մի չը տա-

լով շղթային վրայէ կ'երթայ գետնին տակը
կանցնի :

Շանթարգելը գտնըլեցաւ Ամերիկացի դիտ-
նական ֆրանկլինի ձեռքով: Մառերն էլ բնական
շանթարգելներ են, բայց անկատար (պակաս):
Եթէ մի շանթարգելի բարձրութիւնը հիսուն
կանգունի կը համնի, կրնայ իրմէ մինչև 100
կանգուն հեռու եղող տուներն ու տեղերը կայ-
ծակէն աղատ պահել: \times



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐՀԵՍՏՆԵՐ

ԵԿ


ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆՔ

ՔՍԱՆԵԿՉՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ

Երկաթ . — Երկաթի հանելու .

Մեր սեղաններուն, խոհանոցներուն, տուներուն, կառքերու և սարք ու զարդերուն գործածված նիւթերէն մեծ մասը երկաթէ է: Նմանապէս արհեստներու մէջ գործ դրված գործիքներն ու մեքենաները գրեթէ բոլորն ալ երկաթէ շինված են: Մարդիկ երկաթը մինչև անդամ ուկիէն ու արծաթէն օդտակար կը սեպեն, Բայց գիանալու է որ այդ գործիքներուն, չենքերուն և մեքենաներուն գործածված երկաթը բոլորովին զուտ երկաթ չէ. վասն զի չը զավածը աւելի օդտակար կը լինի շատ բաներու մէջ :

Բարակ պողպատը, որ երկաթին չափ մեզի օդտակար է, և որով մլրատ, գնտասեղ, զմելինի բերան, խարառոցներ, սղոցներ և ուրիշ բաներ կը լինեն, այն ալ երկաթ է, ածուխի հետ միացած: Պողպատը աւելի ամուր, աւելի տարածվող կը լինի և ապակիի պէս գիւրատ կը կոտրի: Զուրածոյ (ձուլված) երկաթ կը գործածվի կրակարաններուն բոլոր երկաթներ և ջուրի խողովակները



շինելու, որ պողպատին չափ մաքուր և ամուր չէ, բայց զտված երկաթէն աւելի ամուր է. շատ դիւրաւ կը կոտրի, և մեծ գին չունի:

Քիչ կը պատահի որ հողին մէջի երկաթը զուտ լինի. բայց գրեթէ բոլոր աշխարհի մէջ ուրիշ բանի հետ խառնրված երկաթ կը դանուի: Երկաթը երբ այս վիճակով հանվի հողէն, հնոցներու մէջ հալեցունելով կը զատին (կը մաքրեն):

Կաւուա հողերը և աւազները երբ երկաթունենան իրենց մէջ՝ կարմիր, դեղին կամ մոխրագոյն կը լինին: Եկեղեան կարմիր կամ դեղին հողերը. որոցմով բնակարաններու տախտակամածները կը ներկեն, իրենց գոյնը իրենց մէջ գտնըլող երկաթի կտորիկներէ առած են: Յատանդամ երկաթը ծծումբի հետ ալ միացած կը լինի:

Ծծումբը դեղին գոյնով նիւթ մի է, որով լուցկիներուն ծայրիկները կը ծեփեն. և խաղողի որթերու վրայ ալ կը ցանեն, զանոնք աւրելէ պահպանելու համար:

Ծծումբի հետ եղած երկաթը այնչափ օգտակար չէ. քանզի շատ դժար է երկաթը ծծումբէն զատել. զատվածն ալ կոտրան և արհեստներու անյարմար կը լինի:

Երկաթի հանքածոյներու (հանքէն հանված) դետին տակի մեծամեծ տեղերը հանի կամ բոլի՛ կ'ասին. որ միշտ խորունկ տեղեր չն գտնըլիք, հապա՛ շատ անգամ երկրիս երեսկուկ տեղերն ալ կան:

ՔՍԱՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Երկաթը հանքային նիւթեր լուացվելէ վերջը, տեսակ մի գործօղութեամբ, որ քանի մի ժամ կը տեսէ՝ կրնան երկաթի դառնալ. Պէտք է այդ հանքային նիւթերը սաստիկ կերպով ածուխի հետ տաքցունել, որ այդ նիւթերուն մէջ գտնըլված երկաթը բոլորովին կը զատէ ու կը զտէ, և այսպէս ձեռք բերված երկաթը շատ անգամ լաւ կը լինի.

Բայց երկաթի հանքածոյներէն շատերը աւելի երկար և մանրամասն գործօղութիւն կը պահանջեն (կ'ուզեն): Հանքածոյները լուալէ վերջը՝ մեր տուներուն չափ բարձր փուռերու մէջ կը տաքցունեն, և ածուխի կամ փայտի հետ կը խառնեն, և սաստիկ կրակ մի կը տան խիստ մեծ փքոցներու (փուք, քէօրիւկ) միջոցով, այնչափ մեծ, որ կամ ջաղացքի անխին պէս ջրով կամ շոգիով կը շարժին: Այս ժամանակ երկաթը միւս նիւթերէն զատվելուն պէս՝ հեղուկ կը լինի և վար կը թափի պատրաստըլված տեղը, խողովակներու կամ կաղապարներու մէջ:

Այս կերպով հալված և կիսով չափ մաքրըլված երկաթը ձուլածոյ երկաթ (թափած երկաթ) կ'ասի: Այս երկաթը կրնան նորէն հալեցունել և ուզված կաղապարներու մէջ թափել այսինքն վառարանի, ջուրի խողսվակի, երկաթուզիներու

երկաթի և ուրիշ դործիքներու կաղապարի մէջ։
Չուլածոյ երկաթը մաքրելու և զտելու համար զայն ուրիշ մէկ փուռի մէջ կը դնեն, որ դարբնոց կը կոչվի, և չորս կողմը ածուխ լցունելով կը տաքցունեն, յետոյ սալի վրայ կը տանին և մեծկակ մուրճերով կը ծեծեն։ Ամեն մէկ զարնըլածքին երկաթին աղտոտութիւնը վար կը թափի բարակ և չորցած տերևի պէս։ Քանի որ այս բարակ աղտերը թափին, երկաթը կը մաքրըվի և կը խտանայ, և ասանկով կակողութիւն կ'ըստանայ։

Աղէկ տեսակ երկաթով միայն կը շինվին այն թելերը, որք առանց կոտրաելու ամեն կողմ կը քաշվին և կը ծռմոկին։ սուտ ծաղիկները այս տեսակ թելերով շինված են։ Երկաթով կը շինեն պատուհաններու նիդեր, փականքներ, ձիի սանձեր և ուրիշ շատ բաներ, որոնք եթէ թափված երկաթով շինեն կը կոտրաէին։

Զէյթունի լեռներուն երկաթները շատ անսւանի են մանաւանդ շնոքեր շինելու մասին։ Այդ տեղի երկաթի հանքերը գրեթէ ամենն ալ Զէյթունցի Հայերու ձեռքն են. նոքա կը հանեն, կը հալեն և կը ծախեն։ Եթէ այդ մեր եղբայրները փոքր ինչ ուսամունք ունենան և արհեստներ սորվին, անշուշտ նոցա վիճակը խիստ լաւ կը լինի։ Այս ատեն՝ հանած երկաթնին առանց բանելու ծախելու տեղ, իրենք կը բանէին անոր վրայ, ապրանք կը հանէին և իրենք կը շահէին։ Ֆրանսըները աղւոր երկաթ կը բանին, բայց

Անգլիացիներուն չափ չեն հաներ և աժանալ չեն ծախեր։

ՔՍԱՆԵԿՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Երկաթ. — Բնական պողպատ. — Ազնիւ պողպատ. — Զրնուխ։ — Ժանգ.

Երկաթի այլ և այլ հանքածոյներէ առնըլած ձուլածոյ երկաթը շատ աղէկ կուգայ սուրերու, դանակներու, մանգաղներու և ուրիշ բաներու, բայց բարակ սուրերու և զմելիներու բերան, և վիրաբուժական դործիքներ շինելու համար երկաթը բաւական չէ, այլ պողպատ պէտք է։

Բուն պողպատը ձեռք բերելու համար զուտ և մաքուր երկաթ պէտք է. այդ երկաթին մէկ կտորը ածուխի փոշի մէջ դնելով կը տաքցունեն. փոշին երկաթին մէջ մեծ փոփոխութիւն մի յառաջ կը բերէ։

Երկաթը դիւրակոր (դիւրաւ ծռօղ) լինելուն համար դիւրին է զայն մի մուրճով ուղլած կերպով ձեփ բերել. տղայ մի անդամ կրնայ խարսոցով խարսոցել կամ քանդակել մի բրյիկով (բրյիկ, քանդակագործներու դործիք)։ Երկաթը երբ պողպատի դասնայ, կընայ մուրճի զարնըլածներուն դիմանալ, և երբ ծռած լինի կը շակըվի. և աւելի ուժով խարսոցով միայն կը քերթըվի կամ կը խարսոցվի։

Պողպատ շինվելիք երկաթը պէտք է որ թրջած լինի, ջրմուխ (ջրին մէջ խօթված) լինի, այսինքն

սաստիկ կերպով տաքնալէ յետոյ՝ անմիջապէս պաղ ջուրի մէջ պաղեցի՝ բոլոր կտորը մէկէն ջուրին մէջ խօթելով։ Այսպէս երբ գնդասեղ կամ ասեղ մի բաւական ուժով չէ, և կտաւը աղէկ չը բռներ, կամ թէ շատ դիւրաւ կը ծռի, պէտք է զայն բոցի մէջ կարմրցունելէ վերջը՝ ջրով պաղեցունել։

Երկաթը թթուածինին կամ օդին ազդեցութեամբ՝ երբոր խոնաւ լինի, շուտով կ'աւրի. և մի կարմիր կամ դորչ նիւթի կը փոխուի. այդ նիւթը ժանդ (ժանկ) ասված է, ժանդը երկաթի հանքածոյներուն կը նմանի, ծովին ջուրը երկաթին ժանդ կուտայ. Չուլածոյ երկաթը աւելի կամաց և ուշ կը ժանդստի. իսկ պողպատը երկաթէն ալ շուտով։

Զէթը, կարսագ իւղը և ուրիշ իւղեր, ոչ ձուլածոյն, ոչ երկաթը և ոչ ալ պողպատը կ'աւրեն։ Այսպէս դանակները, պատառաքաղները, դրդալներն ու սաները իւղու կերակուրներով ժանդոտելու վախ չունին։

ՔՍԱՆԵՒԵՕԹԵՐՈՌԴ ԴԱՍ

Անագ. — Խոհանոցի ամօթները անագելու օգուտները. — Զինկօ. — Զինկօ շինել.

Երկաթը ժանդէ պահպանելու համար զայն անագէ, կամ զինկօյէ և կամ արոյրէ բարակ խաւով մի կը ծեփեն։

Այս գործին մէջ ամենէն շատ գործածվածը անագն է։ Անով երկաթէ գրդալներն ու պատառաքաղները կ'անագեն (անագ զարնել), և անշուշտ դուք շատ անգամ անագօղներ տեսած էք որ կրակին վրայ հալեցված անագին մէջ կը թաթխեն այդ բաները. և երբ դուրս հանեն՝ այնչափ փայլուն կը լինին որ կարծես թէ նոր արծաթազօծված (արծաթմով ծեփված) են։ Թիթեղի թերթերը, որոնցմով քաֆէ-եփողներ, սաներ և ուրիշ բաներ կը շինեն, երկաթի թերթեր են հալած անագի մէջ թաթխըլված։

Երկաթ անագելը ուրիշ օգուտ մի ևս ունի. շատ մարդիկ անհաճոյ համ մի կը դգան երկաթէ սաներու մէջ եփված կերակուրէ, և ինչպէս քացախը, խոհանոցի վերաբերեալ ուրիշ բաներ ալ երկաթին կը զարնեն և ասով կերակուրները գարշելի համ մի կըստանան. նաև ամաններն ալ (եթէ անագված չը լինին) շուտով կը ճղբրտին։ Անագը այդ կերպ բաներով շուտով չաւրըլիր, և կերակուրները չապականեր, ուստի երկաթը անոնց (կերակուրներուն) գործին յարմար կը պահէ։ Աման մի անագելէ ամսմիջապէս վերջը կը լուան, վասն զի անագին հետ նիւթ մի կը խառնեն անուշաղը ասված, որ ամսնին երեսը կը մնայ և վնասակար կը լինի, թէփը կը ջնջէ զայն։ Չուտ անագէ սաները սանագված սաներուն տեղ չեն կրնար բռնել, վասն զի սաստիկ կրակի վրայ դրվածին պէս կը հալին, և մանաւանդ շատ սուղ կը լինին։ Անագով սեղանի սպասներ, թա-

սեր, պնակներ, դրեխներ կը շինեն։ Նաեւ խիստ բարակ թերթիկներ կը բանին և անոնցմով թանձրաքարտէ և փայտէ ամանները կը պատեն, որոց մէջ թէյ, խավչէ և բժշկական դեղեր կը պահեն։

Այսպիսի թերթերով կ'անագեն նաև հայելիները, բայց այն ժամանակ պէտք է որ անագը փոքր ինչ մնդիկով խառնըված լինի։ Մնդիկը անագին փայլունութիւնը և ապակիին կպչելու զօրութիւնը կ'աւելցունէ։

Անգլիայի և Հնդկաստանի մէջ անագի մեծ հանքեր շատ կը գտնըվին։ Մեր երկրին մէջ ծախսվածները դրեթէ բոլորն ալ այս երկիրներէն կուգան։

Սնագելու նման մի գործողութիւն ալ կայ, որ է երկաթը զինկօի խաւով մի ծածկել։ Զինկօն երկաթը լաւ կը պահէ ժանդոտելէ, սակայն խոհանոյներու մէջ չեն գործածեր զինկօյով երկաթամաններ, վասն զի զինկօն շատ կերակուրներ կ'աւրէ և վնասակար ալ կ'անէ. զինկօյով երկաթները կը գործածվին վառարաններու և քիւերու խողովակ (օլուխ) շինելու, և ուրիշ բաներ ալ որը կերակուրի հետ գործ չունին։

Մինակ զինկօն ալ կարելի է առանց երկաթի գործածել, եթէ շինվելիք բանը կրակի մէջ մտնելու պէտք չունի. ինչպէս որ քիւերն ու տանիքները միայն զինկօյով կը շինին, ինչպէս նաև կնիքներ, լոդարաններ (պանեօ) և ջուրի ամաններ։

Թուրքիայի մէջ զինկօի հանքեր չկան, Ռուսիայի, Անգլիայի և Գերմանիայի մէջ խիստ շատ կը գտնըվին։

ՔԱԱՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Պղինձ. — Արոյր. — Անագապղինձ. — Ժանզառ.
Խոհանոյի պղինձէ սաները անագելու պէտքը.

Արոյրը անագին պէս երկաթը ժանդոտելէ կը պահպանէ, բայց որովհետեւ շատ մեծ տաքութիւն մի պէտք է զայն հալեցնելու համար՝ այս մետաղը շատ քիչ կը գործածվի այս գործին։ Երբոր երկաթը պղինձի խաւով մի կը ծածկեն, աւելի անոր համար է որ երկաթին երեսին աեղը բռնէ, վասն զի եթէ պղինձը չը լինի շուտով կը սեանայ և գոյնը կը նետէ։

Ամեն ժամանակ այս կերպով շինված երկաթը ուտելիք եփելու և պահելու գործածվելու չէ, որովհետեւ ուտելիքը անոր մէջ աւրըվելով մինչեւ անդամ թոյն կը գտնայ։

Արոյրը կարմիր պղինձի և զինկօի խառնուրդ մի է. կարմիր պղինձը անշուշտ շատ տեսած էք, 5, 10, 20, 40 փարանոցները անով շինված են։

Որովհետեւ այս մետաղն ալ արոյրին պէս վնասակար է ուտելիքներու, շատ խնամով կ'անագաղօծեն կերակուր եփելու վերաբերեալ բոլոր պղինձէ ամանները, և շուտ շուտ անագաղօծելը կը կրկնեն։

Արոյրին վրայ աւելի դիւրին կը բանիի քան

թէ կարմիք պղինձին, երկաթին և զինկօխն վրայ, Մուրճին օդնութեամբ զայն կը ծռեն, կը գարձնեն և առանց նեղութեան ամեն տեսակ ձև կուտան անոր: Ճախարակ և աշտանակ շինողները խարտոցով մի շատ դիւրութեամբ կը կտրտեն և գործի կը բերեն արոյրը: Վերջապէս այս գործին դիւրութիւնը այնչափ է որ երկաթէն և զինկօխն աւելի նախապատիւ կը համարին արոյրը շատ արհեստներու մէջ, թէև այդ երկու մետաղներէն չը գործըված աւելի սուղ է. գործըվածներուն աժանութիւնը նիւթին գինէն կ'անցնի:

Այս պատճառով է որ այսօր դրեթէ բոլոր լամպաները, ժամացոյցի ճոճանակները, լապտերները, աշտանակները, զանազան զարդեր, կղպակներու կոճակներ, վարագոյրներու կանողներ, և ուրիշ մետաղական բաներ արոյրով կը շինվին: Ճոճանակներու, լապտերներու, աշտանակներու և ուրիշ արժեքաւոր կահերու մէջ արոյրը ոսկիի բարակուկ խաւով կը ծածկեն. սանկ ասենք կը ծեփեն, կամ մէկ ուրիշ նկարով, որ անագապղինձով կը շինվի:

Անագապղինձը՝ ինչպէս անունէն ալ յայտնի է, պղինձի և անագի խառնուրդ մի է և անագին սղութեան պատճառով արոյրէն ալ սուղ է, և նաև անկէ աւելի նախապատիւ է դիմացկունութեան մասին. Գրեթէ բոլոր թնդանօթները, (որոց որ առաջ վերնալուն համար աղօթելու ենք), և յիշատակի համար կանգնըված արձանները անագապղինձով կը շինվին, Այս ալ մոռնալու չէք, թէ

յիշատակի արձանները՝ գիտութեանց բարեպատութութեան և ազգասիրութեան մէջ երևելի եղօղ մարդերու պատկերները լինելով նոցա յիշատակը շատ ժամանակ անմոռաց պահելու համար, այդ երևելի մարդը որ ազգին որ կը վերաբերի՝ այն աղգին իշխանները կամ ուրիշ երևելինները շինել կուտան: Կ. Պօլսի Աղգային հիւանդանոցին մէջ սոյն հիւանդանոցը շինել տըվօղ Պէզճեան Յարութիւն ամիրային, որուն կենսագրութիւնը պէտք է որ ամենքդ ալ կարդաք, մէկ արձանը կայ, բայց անագապղինձէ չէ, այլ գաճէ, որուն վրայ վերջէն կը խօսիմք:

Զանգակները պղինձի և անագի խառնուրդով կը շինվին՝ անագը աւելի շատ դնելով, շատ անդամ փոքր ինչ արծաթ ալ կը դնեն այդ խառնուրդինչ մէջ: Ճոճանակները, աշտանակները և տունի վերաբերեալ ուրիշ բաներ երբեմն անագապղինձով շինված կը լինին. բայց շատ անգամ ալ ինչպէս արդէն ասացինք, արոյրով շինված են, թէպէտ և անագապղինձով է կ'ասեն:

Անագապղինձը բաց օդին մէջ, մերթ փայլուն կանաչ, մերթ մութ կանաչ գոյն մի կ'առնէ: Այս գոյները անագապղինձին ու ածխածին թթուին երար միանալին առաջ կուգան. յայտնի է որ ածխային թթուն մեր շնչած օդին մէկ փոքր մասն է:

Կարմիր պղինձը, արոյրը և անագապղինձը, գրեթէ միշտ կրնան լաւ պահպանվիլ օդին և ջուրին մէջ ալ: Անգամ մի եթէ նոցա մակերևոյթը

(Երեսի կողմը) օդին կամ ջուրին աղդեցութեամբը ապականլած բարակ խաւով մի ծածկը վի, բնաւ այդ մետաղներուն ներսի կողմը չը քայքայիր, չավը վիր: Այս նկատմամբ այդ մետաղները երկաթէն գերազանց (վեր, լաւ, աղէկ) են:

Բայց ընդհակառակն երբոր պղինձը քայախի, ձէթի և ընդհանրապէս իւղոտ նիւթերու մէջ դրվի, խիստ շուտով կաւը վի, այն ատեն անոր մակերևոյթին վրայ կանաչի զարնող խաւ մը կը կազմը վի, որ ժանգառ կամ ժանգ կ'ասվի: Այս ժանգը խիստ ազդող թոյն մի է, ասկից պէտք է հասկանաք նաև թէ ինչո՞ւ համար մեծ խնամով պէտք է անագել կերակուրի եփացները:

Թուրքիայի մէջ թօխաթ քաղաքին կողմերը՝ երկու պղինձէ հանգեր կան, ուրիշ աեղեր ալ կը դըմնը վին, բայց տակաւին այնչափ ընդհանրացած չէ բանելը, անոր համար ուրիշ երկիրներէ: Անգլիայէն, Շվեյցին և Ռուսիայէն կը դայ այդ հանքը թուրքիա:

ՔՍԱՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ.

Սնդիկ. — Ոսկի. — Սնդիկով զօժել. — Արծաթ ոսկեզօծեալ (ոսկեցրված). — Գոհարեղիններ. — Դրամներ. — Ոսկի եւ արծաթէ շինված թերթիկներ.

Մնդիկը՝ զոր շատ կը գործածեն ջերմաչափներու մէջ, և որ հայելիներ և ապակեղէններ անագելու մէջ ալ կը գործածվի, մետաղ մի է արծա-

թի, ոսկիի, անագի, երկաթի և պղինձի նման, թէև հեղուկ է: Երբոր խիստ շատ պաղութեան ենթարկվի (ներքեւ լինի, մնայ) այն ատեն կը պընդանայ. շատ ճանբորդներ, երբ բևեռային կողմերը կը ճանբորդեն, դիտած են որ իւրեանց ջերմաչափին մնդիկը հաստատուն կը դառնար երկաթի պէս, և եթէ զինքը պարունակող ապակիէ ամանն կատրէին ալ միշտ նոյնը կը մնար:

Մնդիկը ոսկիի, արծաթի, պղինձի և անագի հետ կը միաւորի և զանոնք կը հալեցունէ, երբոր իւր մէջ դրված այդ մետաղի կտորներէն աւելի շատ լինի: Այսպէս եթէ ոսկիէ մատնի մի դնեմք մնդիկին մէջ, անմիջապէս կ'աներեւութանայ, կը հալի և կը լուծվի:

Խոկ եթէ մատնին մէջը չը դնենք և մնդիկով միայն շվենք, այն մնդիկէն որչափ ալ փոքր մաս մի ծծէ, անմիջապէս կը ճերմկնայ և գիւրաւ կը կոսրի Մատնին քչիկ քչիկ տաքցունելով մնդիկը կը շոգիանայ և մատնին նորէն իւր գոյնը, զօրութիւնը և զուտ վիճակը կը ստանայ: Մատնին եթէ արծաթէ և կամ պղինձէ լինի՝ դարձեալ միևնոյն աղդեցութիւնները կը կրէ:

Մնդիկը այս յատկութիւնը ունենալուն համար կրակով յախճապակին, անագապղինձը և սուտ անագապղինձը (որ արոյրով շինված լինելու է) կրնայ ոսկեղծել: Այս մետաղներով շինված բաները նախ տաքցունելէ և մաքրելէ վերջը մնդիկի և ոսկիի խառնուրդ մի կը ծեփեն նոցա մակերևոյթին վրայ և վերջը աւելի սաստկու-

թեամբ նորէն կը տաքցունեն, սնդիկը կը շոգիանայ և ոսկիի բարակ խաւ մը միայն կը մնայ ոսկեզօծված բաներուն վրայ . սոյն կերպով կ'ոսկեզօծեն նաև արծաթեղէնները :

Սնդիկի և ոսկիի խառնուրդը նաև կը գործածի խիստ օգտակարապէս, հանքերու մէջ ուրիշ հանքային նիւթերու խառնըլված ոսկին դտելու և առնելու համար: Այս հանքային նիւթերը փոշի գարձունելէ վերջ սնդիկով երկար բարակ կը հարեն և երբ խառնուրդը կատարեալ լինի՝ կրակին միջոցով ոսկին սնդիկէն կը դատեն. անշուշտ մնացած չէք որ սնդիկը տաքնալով պիտի շսդիանայ :

Ամենէն աւելի Ամերիկայի մէջ կը դանուին հարուստ ոսկիի հանքեր. հռչակաւոր են կալիփորնիաի հանքերը, որոց պատճառաւ այն տեղ շատ մարդիկ գաղթած են, Ասիան և աւելի Ասիական Ռուսիան ալ հարուստ ոսկիի հանքեր ունին, Եւրոպայի մէջ միայն Հունգարիան լաւ ոսկիի հանք ունի: Երկրիս ամեն կողմերէն ալ լեռներու վրայէ թափող գետերուն մէջ ոսկիի փոշիներու կտորուանքներ կը դառնըլին: Այսպիսի գետերը աւելի Ամերիկայի մէջ կան:

Ոսկին շատ սուղ լինելուն պատճառը միւս մետաղներէն աւելի հաղուագիւա լինելը չէ միայն, այլ իւր փայլունութիւնն է. նաև բաց օդին կամ ջուրին և ուրիշ նիւթերու մէջ մնալով որ է բանէ բնաւ շապականիր: Այս յատկութեամբ ոսկին մինչև վերջը կը պահուի եթէ

երկար ժամանակ այլևայլ առարկաներու քրսվելով ու շփվելով՝ ամէն անդամին մէյմէկ կտորիկ չը վերցունէին և չմաշեցունէին: Այս յատկութեամբ է նաև որ ոսկի մատանիները, օղերը, մանեակները, և յուրիշ զարդերը, զորս կը գործածեմք մեր մորթին վրայէ, չեն ապականիր. նաև ոսկիէ կամ ոսկեզօծ արծաթէ և կամ ոսկեզօծ յախճապակիէ ամաններու մէջ ինչ կերակուր ալ դրվի՝ չաւրվիր:

Արծաթն ալ քիչ շատ ոսկին չափ անեղծանելի (չաւրըլօղ) է, և միւնոյն կերպով կրնայ օգտակար լինել: Արծաթը ոսկիէն աւելի շատ կը դառնըլի, և աւելի շատ աժան է: Ամերիկան ամենէն հարուստ աշխարհն է արծաթի հանքերու մասին, ամեն տարի այս մետաղէն միլիոնաւոր դուրս կը հանէ իւր հողերէն: Եւրոպացի բնակիչներու մեծ մասին սեղանի սպասները արծթէ շինված են: Երբեմն հարուստ ընտանիքներ մինակ արծթէ սպասներ կը գործածէին, ի բաց առնելով մի քանի աշխարհներ, և մասնաւորապէս Սպանիան. իսկ այսօրվան օրս յախճապակիէ սպասները գերադաս կը համարին :

Ոսկին ու արծաթը շատ դիմացկուն և կպչուն չեն. դրամի հատերը, ականակապ զարդերը և սեղանի սպասները շատ դիւրաւ կը ծռմուկին և շատ շուտով կը մաշին, եթէ այս երկու մետաղներուն մէջ փոքր ինչ պղինձ չը խառնըլի, որ զանոնք աւելի դիմացկուն կ'ընէ: Երբոր ստակ կտրեն 10 մասէն կամ բաժինէն մէկ մասը պղինձ, 9 մասը ոսկի կամ արծաթ կը լինի :

Ոսկին, արծաթն ու պղինձը որչափ ուղեռ, այնշափ կը տարածվին, կ'երկըննան կամ կը լայննան մուրճով զարնելով, և այնչափ բարակ թերթ կը շինեն որ թեթև հով մը կրնայ զանոնք ցրուել ու պատռտել:

Այս ոսկի կամ արծաթ թերթերով հայելիներու և պատկերներու շրջանակներ և ուրիշ զարդի ծառայօղ փայտէ կահերը կը զարդարեն. Նաև այդ թերթիկներով գեղահատներ կը ծածկեն և խանութներուն նշանատախտակներուն վրայի դրերը կը գրեն, գերքերու կռնակը և շուրթերը կը զօծեն, և այլն :

Այս ոսկի թերթերը այսպէս կը գործածեն, սակեզօծ վելիք շրջանակը կամ ինչ որ է ձեթով կամ սոսկինձով ազւոր մը կը ծեփեն, վերջը ծեփվածին վերայ այս ոսկիէ թերթերը կը զատեն, բամզակով մի կոփերով, որպէս զի աղէկ փակչի շրջանակին : Այսպէս իրարու վերայ շատ ոսկի թերթեր կը շարեն, շատ անդամ այս գործը կատարելէն վերջը՝ վրայէն ջրնարակ մի կը զարնեն,

Պղինձը, արոյրը, ոսկին և արծաթը երկաթին պէս կրնան թելերու նման երկըննալ, որոց ուղված բարակութիւնը կարելի է տալ. Արոյրին և անդապղինձին թելերը խիստ շատ բաներու կը գործածվին, այդ թելերով կը շինեն դաշնակի հաստ թելեր, մետաղեայ վարագոյրներ, կրակարաններու և այլ բաներու համար, թռչուններու մեծ վանդակներ և գնդասեղներ որոց վերայ վերջէն կը խօսիմք: Ոսկեհուռ և կամ արծաթա-

հուռ ժապաւէնները, ուսադիրները (ուսի վերայ դրուելիք զինւորական զարդ) և կերպամները արծաթի կամ սոկեզօծած արծաթի թելերով կը շինեն և որովհետև այս թելերը խիստ բարակ են և շատ չեն դիմանար, նախ զանոնք մետաքսէ թելերու վերայ կ'ոլորեն:

ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Խեցեղէն (խեցիով շինված) ամօթներ. — Կոպիճ. — Կոպնուս հոդ. — Հոդէ աղիս. — Յործուն (Յործած եղած) աղիս. — Լիւշէ հոդ. — Զինու խեցեղէններ. — Յախճապակի.

Հողէ ամանները և ընդհանրապէս բոլոր խեցեղէն ահօթները կաւախառն հողի և բարակ աւազի խառնութով մի շինված են: Այս խառնութին ամանի ձեւ տալու համար պէտք է զայն ջուրով կակուզցնել, և խնամութրել, մինչեւ որ կակուզ խմոր մի դառնայ: Յետոյ երբ ամանը շինեն, կրակով կը կարծրացունեն, կան երկիրներ ուր արևին տաքութիւնը շատ լինելով, արևին մէջ կը չորցնեն ամանները, բայց այն ատեն այնչափ կարծր չեն լինիր:

Գրեթէ ամեն տեղ կը գտնըլին անանկ հողեր որք կաւի և աւազի խառնութներ են, խիստ յարմար խեցեղէն անօթներ շինելու :

Հասարակ կաւով ոչ միայն խոշոր ամաններ, այլ և մեր տառներու շինքին պէտք լինելիք աղիւս-

ներ կը շինվին, որոնք փուռ շինելու մէջ ալ
կը գործածվին. այս կաւը տեսակ մի ժանդ կամ
երկաթէ կազմուած տեսակ մի նիւթ ունի իւր
մէջ։ Այս նիւթէն է որ մոխրուկ, դեղնուկ կամ
կարմիր գոյն մի կ'ունենայ, այս գոյնով միւս
կաւերէն կը զատվի։

Խեցեղէն ամօթներ շինելու կաւը սապօնի պէս
կակուղ և փրփրօղ պէտք է լինի մարդու ձեռքի
մէջ։ Լիւլէի հողը որով սեղանի ճերմակ սկաւա-
ռակներ և այն կը շինեն, շատ կակուղ կաւ մի
է, որ փուռը դրվելէն առաջ անդամ ճերմակ
գոյն մի կ'ունենայ։

Անշուշտ տեսած էք Զինական խեցեղէններու
կտորտուքներ, դիտած էք որ հողին ներսի կող-
մը դուրսի կողմին չափ ճերմակ ու փայլուն չէ,
որովհետեւ այս Զինական խեցեղէնին դուրսի
կողմը կաւէն տարբեր ուրիշ նիւթով մի շինված
է. եթէ այս ծեփը չը լինի, որ ամանը շինելէն
վերջը կը ծեփէն, Զինական խեցեղէնի մէջ լեց-
ված ջուրը կը վազէր։

Գրեթէ բոլոր խեցեղէններն ալ այս ծեփով
ծեփված լինելու են. շատ անդամ այս ծեփին
այլեայլ գոյներ կուտան, բայց ընդհանրապէս
ճերմակ գոյնովը դերազանց է։ Ժամացոյցի ճո-
ճանակներուն աախտակներն ալ շատ անդամ այս
ծեփին նման ծեփով մի ծածկըլված կը լինին։

Յախճապակին՝ որ հարուստ տուներու մէջ կը
դժնըփի և որ մեր խեցեղէններէն աւելի օդտա-
կար չը լինելէն զատ թերևս փսասակար է սուզ

գնովը, կէս մի թափանցիկ է, կը շինվի երկու
տեսակ ճերմակ հողերու խառնուրդով, հողին
մէկ տեսակը կաւուտ է, միւսն աւելի ամուր հող
մի է, զոր նախ շատ բարակ փոշի կը դարձունեն,
Զինաստանցիներն են յախճապակի շինելը մեզ
սորվեցունօղները։ Յախճապակիներուն վրայի
պատկերները բարակ վրձինով ու ներկով կը
շինեն, երբ ամանը մինէով ծեփված և մէկ ան-
դամ միայն տաքցրված լինի, պատկերը շինելէն
վերջը դարձեալ փուռը գնելու է։ Այս պատ-
կերները եթէ ուզվի, կ'ուկեզօծվին ալ։

ԵՐԵՍՈՒՆԵՒՄԷԿԵՐՈՐԴԻ ԴԱՍ

Ապակի. — Հայելի. — Բիւրեղ. — Շիշ.

Ապակին, աւազը և սօսա կամ բոդաս ըսմած
նիւթն իրար խառնելով կը շինեն։ Այս սօսան
կամ թօթար վառած փայտի մոխիրէ ալ կրնայ
հանվիլ կամ թէ ուրիշ բաներէ ալ որ հիմա ձեր
հասկնալու ժամանակը չէ։ Աւազը հալելու
մասին օդնելու համար կը դործածվին այս բա-
ները, որովհետեւ աւազը թէ և մինակ ալ կրնայ
ապակիին պէս լուսանցիկ նիւթ շինել բայց կոշտ
և կարծը կը լինի։ Այս նիւթին կառներէն ժոյ-
ուերու հողի մէջ կը տեսնըվին, որք կը լավին
ժայռի բիւրեղ (պիլլօռ)։

Երբեմն այդ բիւրեղները շատ կը փնտովէին
զարդարանքի համար, բայց այս օրվան օրս անկէ

ալ աւելի աղւոր և փայլուն կը շինեն, շատ դիւ-
րին է այս ապակին տաշել կոկել, և ձեմի բերել,
որ աւելի աժան կը լինի և աւելի զարդ ու յարդ
կուտայ: Բիւրեղը կը շինեն աւաղի և սօսայի
(կամ թօդասի) հետ ուրիշ նիւթեր ալ խառնելով.
մասնաւորապէս նիւթ մը կայ որ կապար կը պա-
րունակէ:

Հարուստ տուներու մէջ գործածված գաւաթ-
ները, բաժակները և բոլոր ըմպամանները (խմե-
լու աման) բիւրեղէ շինված են: Հասարակ գա-
ւաթները և պատուհանի ապակիները կապար
չեն պարունակեր, և շատ անդամ կանչոտ (կանաչի
գոյն) գոյն մի ունի: Հայելիներու ապակին ալ
առանց կապարի կը շինվի, բայց աւաղն ու սօ-
սան կամ թօդասի շատ ինսամքով լաւը կը զատեն,
այնպէս որ այն ապակին գոյն չունենար.

Հայելին կը շինեն խառնուրդը երկաթէ շիտակ
սեղանի մը վերայ թափելով: Յայտնի է թէ
խառնուրդը մէկ երկու օր սաստիկ տաքցունելով
հալած լինելու է: Թափելէն վերջը ապակին
շորս կողմէն վար վեր քաշելու է, որպէս զի աղւոր
շտկը և երկու կողմն ալ մէկ հաստութեամբ
լինելով լաւ լուսանցիկ լինի: Յետոյ ապակին
երկու կողմէն մէկուն վրայ մնդիկով հալած անագ
կը զարնեն և ապա ապակին կը պըլլեն կը փաթ-
տեն, որպէս զի անագը վար չը թափի:

Գաւաթները և ապակիէ ուրիշ ամանները ապա-
կին կաղապարի մէջ թափելով կը շինեն, բայց
շատ անդամ ալ կը փշէն, մանաւանդ շիշերը:

Ապակադործը հալօցին մէջ հալօղ ապակիէն
երկաթէ խողովակի մը ծայրովը կ'առնու և այս
խողովակին վերէն կը փէտ, ինչպէս որ դուք կը
փէտք օճառի գնդակները. այն ատեն ապակին
կ'ուռենայ և կը կլրնայ և գործաւորին ու ղած-
չափով շիշ մը կը շինվի:

Գինիի շիշերը կը շինվին աւաղով ու թօդասով,
որոց մէջ քիչ մ'ալ կիր և աղ կը խառնեն և
փշելով կը շինեն:

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ

Վառելու փայտի զանազան տեսակներ. — Փայտի
ածուխ. — Փայտի բացախ. — Հանգածուխ.

— Փարածուխ :

Այն փայտը որ կտրըվելէ վերջը միայն տարի
մի անձրեսի ներքեւ մնացած է, մոխիր-ջուր (լու-
ացքի համար) անելու խիստ յորմար մոխիր կու-
տայ: Բայց երկար ժամանակ ջուրի ներքեւ մնա-
ցած և թրջըված փայտերը լաւ մոխիր չեն տար, որ
կարելի լինի լուացքի գործածել փայտի ածուխ-
ները փայտէն քիչ մոխիր կուտան: Նոր փայտերը
այսինքն մէկ տարվան կտրըվածները միւս փայ-
տերէն աւելի տաքութիւն կուտան:

Փայտի ածուխը կը շինվի բարակ փայտերով,
զոր կը տաքցունեն վառելու համար գէտք եղած
տաքութենէն քիչ մի պակաս: Այս տաքութեան
զօրութեամբ փայտին մէջի չուրը և ուրիշ հե-

զուկ նիւթերը քամվելով՝ փայտը թուխ կամ սեւ գոյն մի կ'առնու, ինչպէս որ ուղէ ածխագործը (ածուխ շինող)։

Բաց գոյնով ածուխը պէտք եղածին չափ քամված չը լինիր, և խանձօղ (մարսըք) կ'ասվի. վասն զի վառած ատեն բոցով մուխ մի կը հանէ, և լաւ չէ տուներու համար. եթէ վառվի ալ, վառարանի մէջ դրվելու է։

Ածուխը փայտէն քիչ տաքութիւն կուտայ, բայց ինչու փայտի տեղ ածուխ կը գործածենք, դուք ձենէ կրնաք դտնել, երբ քննէք որ եթէ կերակուրի սաները փայտով տաքցըվին, սեւ մուր մի կը նստի ամանին ներքեն ու բոլորտիքը և սուր հոտ մի ունի։ Ածուխը ոչ անօթները կը սեցունէ և ոչ ալ մուխ կը հանէ, այլ նաև կերակուրին համը չը փոխեր։

Ածուխը երկու կերպով կը պատրաստըվի. ոմանք հով չառնօղ անտառներու մէջ քիչ մի բարձր գետինի վրայ կոճղերէ և մանր փայտերէ գէղ մի կը շինեն, անանկ որ անձրևի ժամանակ ջուրը գէղին տեղը չը դիպի, այս գէղը կոնաձե կը շինեն վարէն լայն սկսած, վերը նեղցըված, և մէջ տեղէն թողված մի ծակէն կը կրակեն։ Օդը այստեղ չը կարենալով շատ մտնել, փայտերուն այրըվիլը կամաց կամաց և անկատար կը լինի, և գրեթէ երեք օրէն ամենն ալ ոհ ածուխ դարձած կը պաղին։

Նաև փայտը ածուխ կը շինվի երկաթէ մնտուկի մէջ դրած տաքցունելով։ Այս կերպով, որ

եւրոպակի մէջ կը գործածվի, փայտէն տեսակ մի քացախ կը հանեն, որ նորա շոգիէն կ'ելնէ. այդ շոգին ալ խողովակով ջուրի մէջէ անցունելով, օղիի պէս հեղուկ կը լինի և պատրաստըված ամանին մէջ կը թափի։ Ներկարարները շատ կը գործածեն զայն։

Երկրիս ծոցը խիստ շատ ածուխ կը գտնըվի, տեղ տեղ մաքուր և տեղ տեղ աղտոտ. առանք տեսակ տեսուակ են և կ'ասվին հանճածուխ, որոց մէջէ երկելին է յարածուխ ասվածը։

Հանքածուխի հանքերու մէջ շատ կը գտնըվի քարածուխը։ Անդլիան այս հանքէն խիստ շատ ունի. Թուրքիայի մէջ ալ կը գտնըվին. բայց գործածութեան մէջ չեն. Քարածուխը շատ դիւրին կը վառի և պայծառ լոյս մի կուտայ. տեսակները շատ են։

ԵՐԵՍՈՒԽՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ

Զուխա. բուրդ. գուղպա. Թաղիք. Մանված բուրդ ի գործածութիւն.

Ոչխարը, այծը, ուղտամաքին և ուրիշ քանի մի կենդանիներ գանգուր մազեր ունին, որք բուրդ կը կոչվին. Այս բուրդը վրան իւղոտ հիւթ մի կ'ունենայ, նախ պէտք է հանել այդ հիւթը օճառի ջուրով և հնացած մէզով լեցուն աւազանի մէջ թրջելով և վերջէն մաքուր ջուրի մէջ լուարվանի մի անգամ։ Այն ատեն բուրդը իւր ծանրութեան կէսը կը կորսնցունէ, Բուրդը աւե-

թ լաւ կը ճերմինայ, եթէ ծծումբը այրելով նորա
մուխին մէջ դրվի:

Բուրդին թելերը ոլորելով և գործելով այն-
պէս աղողը կը միանան իրարու և կերպաս մի կը
կազմեն, որուն ուղղած թեթևութիւնն ու բա-
րակութիւնը կրնան տալ գործօղները:

Բուրդով կը շինվին նաև թաղիքներ, որուն
համար պէտք է որ նախ գզված լինի և մաք-
րութած, թաղիքէն գլխարկ ալ կը շինվի, զոր գիւ-
ղացիները կը գործածեն:

Դուլպա շինելու բուրդը նախ կը սանտրեն, և
այն սանտրը երկալթէ թելերով շինված է երկու
հատ դէմ դէմի շրակըլած:

Թացի թաղիքէն, բուրդը եթէ ուրիշ բաներու
այսինքն գորդ, չուխա, կապերտ և այլ բաներ
շինելու գործածվի, նախ պէտք է ոլորելով թել
շինել:

Չուխան գործըլելուն պէս կը լուան, աղտը կը
մաքրեն, թակերով կը ծեծեն, կարծր խողանակ-
ներով կը շփեն. որպէս զի չուխային երեսը մնա-
ցած թաւ բուրդը հանելով՝ չուխան բարակ,
փայլուն և կակուղ լինի. Յետոյ մլրատներով
նորէն կը խուզեն և ծանր բաներու ներքեւ կը
թողուն:

Բրդեղէն զգեստները բոլոր ձմեռվան մէջ շատ
օգտակար են մարդուս, նոյն իսկ ամառվան մէջ
ալ խոնաւ և հով դպուկ տեղեր աշխատօղներուն
համար որք պէտք չէ թեթև զգեստներ հադնին;
Բուրդէ դանամաններն ալ շատ օգտակար են:

ԵՐԵՍՈՒՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ

Շերամ. — Մետախ. — Շերամի
կերպարանափոխութիւն.

Մետաքսը յառաջ կուգայ այն որդերէն որ
դուք կը ճանաչէք և որք շերամ կը կոչվին:



Ծամերը, ինչպէս ամեն որդ, հետըզետէ կեր-
պարանքնին կը փոխեն:

Գրեթէ մէկուկէս ամիս թթենի (թութ) ծա-
ռին տերեւներով սնանելով և չորս անգամ մորթը

փոխելէն (շապիկ փոխել) վերջը տեղ մի կը քաշ-
վի, բերնէն տեսակ մը թել հանելով իւր չորս
կողմը խցիկ մի կը շնէ, զոր երեք չորս օրէն
կը լմնցունէ, այն խցիկին մէջ փակված կը մնայ
բոլորովին տարբեր որդ մի եղած :

Տամ և հինգ օր մնալէն ետքը թիթեռնիկի
կերպարանքով դուրս կ'ելնէ իւր խուցէն, որ
խոզակ կ'ասվի, մէկ ծայրը ծակելով. այս թի-
թեռնիկները որք ութ կամ տասն օր կապրին և
բան մի չեն ուտեր, այդ տասը օրվան մէջ պըզ-
տըտիկ հաւկիթներ կ'ածեն: Այդ հաւկիթներէն
ալ ժամանակին պղտիկ շերամները կ'ելնեն, որք
մեծնալով նորէն խոզակ կը շնեն. խոզակէն
դուրս կ'ելնեն թիթեռնիկ (բարանակ) եղած և
հաւկիթ կ'ածեն, հաւկիթը նորէն պղտիկ շե-
րամներ կը ծնի :

Շատ տեղ կը դարմանեն այս օգտակար որդը,
սկիզբը Զինացիներէն եղած է: Եերամը խնամելու
համար շատ հոգ պէտք է: Պէտք է հաւկիթները
զով տեղ պահել մինչև որ թթենիկն տերեները
ենեն. այսինքն մինչև մայիս, տերեները երեսելէն
վերջը հաւկիթները տաք սենեակի մէջ պահելու
է և այն ատեն որդերը կ'ելնեն :

Երբոր խոզակները շնված լմնցած են, կը մնայ
նոցա վերայ եղած մետաքսը առնել և կարժել.
բայց ինչպէս որ գիտէք խոզակին ներսը դանը-
վող շերամը թիթեռնիկի փոխվելով դուրս կ'ել-
նէ, և այն ատեն աղւոր մետաքս չը հանվիր,
անոր համար խոզակները փուռը դնելու է, որ

շերամները տաքութեան զօրութեամբը մեռնին:
Յետոյ գործարաններու (Փապրիգա) մէջ տաք
ջուրով լի ամաններու մէջ կը լեցունեն և մե-
տաքսը մեքենաներով կը քաշեն:



ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Բամպակ.—Խոր բազմաթիւ զործածութիւնները.
— Ի՞նչպէս պէտք է ցանել. —Մանած բամպակ.

Բամպակը տաք երկիրներու մէջ կը մշակվի,
բոյսը թուղի պէս է և կուտերուն բոլորտիքը
ճերմակ աղուամազ մի կայ, որ ժամանակը հա-
սածին պէս կուտը պարունակին ամանէն դուրս
կ'ելնէ, այս աղուամազը բամպակն է:

Բամպակը խիստ շատ կը գործածվի, անով
կը շնեն թուղթ, խաւաքարտ, կանթեղի և մո-
մերու պատրոյդ, գուլպա, դդակ, կտաւ, բեհեղ,
շղաշատեռ, (թիւլպէնտ) թաւիչ, բիբէ, ժապա-
ւէններ և ուրիշ շատ ու շատ բաներ:

Թուրքիայի մէջ բամպակը բաւական կը մշակվի,
իզմիր, Ատանա, Շամ, Հալէպ, Էտիլինէ, Ռոտոսդօ,
Կէյվէ, և այլ տեղեր: Ինչպէս որ ասացի, բամպակը
տաք տեղ կ'ուզէ, միայն այս բաւական չէ, պէտք
է երբեմն հողը կակուզցունել. արմատները իրա-
լու շատ մօտիկ լինելու չեն: Բամպակը հունտէն
զատելը բաւական դժուար գործ մի է. Եւրո-
պայի մէջ ընտիր մեքենաներով կը զատեն, այն

մեքենաները հունտը մէկդի՞ և բամպակը մէկդի կը նետեն :

Բամպակը քթանէն և կանեփէն ալ նախապատիւ է, վասն զի քթափնքը աւելի լաւ կը ծծէ, աւելի շուտով կը չորնայ, և նոցանէ աւելի տաք կը պահէ մեր մարմինը : Բայց վէրքի վրայէ, կամ մորթին հիւանդ եղած ատենը հագնիլ լաւ չէ, այս պատճառով խթանը և կանեփը թաշկինակի և ճերմակեղէնի համար բամպակէն աղէկ է : Ինչպէս որ բուրդը մեքենաներով կը դործըլի, այնպէս և բամպակը մեքենայով ոլորելով կը դործըլի :

Բամպակը կը մաքրըլի թէ՛ ճեռքով և թէ մեքենաներով, որք գլխապատճառ են նորա աժանութեանը :



ԵՐԵՍՈՒՆՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՍ

Կանեփ. — Վուշ (թթան).

Կանեփը և քթանը շատ տաք երկիրներու մէջ լաւ չեն յաջողիր : Սոքա բոյսեր են որոց ցողունները փափուեկ և նուրբ թելեր կը պարունակեն : Այս թելերէն կ'ելնեն քթանի և կանեփի դերձան և այն դերձանով շինված կտաներ :

Քթանը կանեփէն աւելի բարակ թել մի կուտայ, տանդելաներու և գեղեցիկ կտաներ շիներու շատ յարմար :

Այսբոյսերուն տուած թել ստանալու համար՝

նախ պէտք է նոցա ցողունները թրջոց դնել : Յետոյ զանոնք արևը կը դնեն չորնալու համար, և երբ չարնայ՝ խուրձերու կապուած թելերը հանելու կըզբաղին ծեծելով և մասնաւոր գործիքով սանտրելով :

Եւրոպայի մէջ մեքենաներով կը մանեն քթանը, մեր կողմերը գրեթէ մեքենա չը կայ, եթէ լինէր, երկրագործ ժողովուրդներու համար շատ լաւ բան կը լինէր, քթանէ կտան և դերձանը կ'աժընար և աւելի շատ կը ծախսէր :

Քթանը ներկի մէջ բամպակին չափ գեղեցիկ դպյներ չ'առնուր, կանեփը քթանէն ալ քիչ :

Բալոր պարանները, տռասաններէն սկսեալ մինչև նաւերուն խօշոր պարանները, կանեփէ շինված են :

Գրելու, գծագրելու, տպաղբութեան, տան պատերու համար մեր գործածած թուղթը կը շինվի, կանեփի, քթանի և բամպակի կտաներու կտորներով (քուրջերով): Այս քուրջերուն հետ բուրդի և մետաքսի կտորտուքներ ալ կը խառնեն, նաև հող ալ, երբ շինվելիք թուղթը ծրարներու համար պիտի պատրաստըլի :

Թուղթին մէջ բամպակ, բուրդ և մետաքս որչափ քիչ լինի, նոյնչափ ամուր և գրելու յարմար կ'լինի :



ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՌԴ ԴԱՍ

Ասեղ. — Գնդասեղ.

Ասեղներն ու գնդասեղները ճարտարարուեստ ձեռագործներու գործածված ընդհանուր գործիքներէն են:

Վայրենի ազդերու մէջ երբոր մէկը գործիք մի կամ զէնք մի շինէ, մինչև այն զէնքին լրանալը ձեռքէն չը ձգեր, այսինքն շինածին բոլոր կտորները, եթէ սուրէ, երկաթը, կոթը, պատենքը, և այլն, բոլորն ալ մէկ մարդ կը շինէ, որ գործի գժուարութիւն կը տայ. բայց քայլաքակիրթ ազդերու մէջ այսպէս չէ. երկաթը զատ մէկը կը շինէ, անոր վրայի գիրերն ու զարդերը ուրիշ գործաւոր մի, կոթը ուրիշ և պատենքը ուրիշ մասնաւոր գործաւորներ կը շինեն, և որովհետեւ մէկ անդամին խիստ շատ կը շինեն, այս կերպավ մեծ դիւրութիւն կը լինի և շինվածը աւելի լաւ:

Այսպէս է ասեղ կամ գնդասեղ շինելն ալ:
Մտիկ արէք.

1. Ասեղը երկաթէ կը շինվի: Նախ և առաջ այդ երկաթը գետնէն հանել և մարել պէտք է ձուլելով. և ապա կրակով ու մուրճով մէկ տասնորդամէթը թանձրութիւն (հաստութիւն) ունեցող ձողերու գարձունելու է:

2. Երկաթի այս խոշոր ձողերը ասեղի չափ մանր կտորներու բաժնելու համար՝ պէտք է

զայն տափակցունել երկու մեծկակ (տաքցուցած) դլաններու մէջէ անցունելով, որք իրենց վերայ դառնալով երկաթը կը սեղմէն, կը ճղմէն, և այնչափ անդամ որ երկաթը առաջվան թանձրութիւնը տասը անդամ կը կորսնցունէ:

3. Այսպէսով ձողը տախտակ կը լինի: Այս երկաթէ տախտակները մէկ սանդիմէթը լայնութեամբ կը կտըրածեն խոշոր մկրատներով, որոց բերանները երկու մէթը երկայնութիւն ունին (մէկուկէս կանգուն է մէկ մէթը, երկու մէթը քանի կ'անէ): Այսպիսով բարակ ցողեր կը լինի երկաթը:

4. Այս բարակ ձողերը պէտք է պողպատի փոխել, որ կարելի է անել՝ երկաթէ ձողը ածուխի փոշիի մէջ սաստիկ տաքցունելով:

5. Այս գործէն վերջը ձողը իրմէ նեղ մի ծակի մէջ կը խոթեն զօրով. այս ծակը պողպատէ տախտակի վրայ ծակլած է: Ասով ձողը աւելի կը բարակնայ. այսպէս քանի մի անդամ տաքցունելէ և հետզհետէ իրարմէ նեղ ծակերէ անցունելէ վերջը, այն ձողը թել մի կը լինի ասեղի պէս և շատ կ'երկընայ,

6. Այս բարակ թելով՝ կարելու ասեղներ շինելու համար գործաւոր մի խնամով այն թելը ասեղի երկու մեծութեան չափ կտորներու կը բաժնէ. մի ուրիշ գործաւոր ալ այս կտորները շտկըտելով՝ ծուռիկ մուռիկ տեղերը կը հարթէ. երրորդ գործաւոր մի այս շտկըված կը տորները կ'առնէ և արագութեամբ (շուտ) գարձօղ

երկանի վրայ (գտնակ սրցունելու քարի վրայ) շփելով երկու ծայրերը կը սրէ . մի ուրիշ գործաւոր ալ այս սրվածները մէջ տեղէն երկուքի կը բաժնէ , որով ասեղի չափ կը լինին : Ուրիշ մի ասեղներուն գլուխները մուրճով քիչ մի կը տափակցունէ . մի ուրիշ ալ այս գլուխին վրայ ծակ մի կը բանայ , որով ասեղը լման կը շինիի :

7. Այս գործերէն վերջը կը մնայ ասեղը կարծը և ամուր շինել , որուն կ'աշխատի ուրիշ գործաւոր մի . նախ ասեղները գոց տուփի մէջ կը տաքցունէ մինչեւ որ կարմրին . յետոյ պաղ ջուրի մէջ կը նետէ , որով կարծրութիւն և ամրութիւն կ'առնենան . ասկէց վերջը նորէն կը տաքցունեն և կը թողուն որ կամաց կամաց ինքնին պաղին : Մի ուրիշ գործաւոր ալ ասեղներուն մէջ գայլախաղի փոշի խառնելով՝ իրար կը շփէ (չագմագթաշը) և կը յդիէ (կը շտկէ , կը մաքրէ , կը փայլեցունէ) : Պիտի ասէք թէ դեռ չը լմնցան . — ոչ . — տամներորդ գործաւոր մի ասեղներուն ծայրը մի ժարի վերայ կը քսէ նորէն բարակցունելու համար . ասով կը վերջանայ գործը :

Գնդասեղներն ալ գրեթէ ասեղին պէս կը շինուին :

Գրեթէ բոլոր գնդասեղները արոյրով (փիլինձ) շինված են : Արոյրին առւած գիւրութիւնը ուղվածին չափ բարակնալու , կոտրավելու , ծայրը սրցնելու և գլուխները տափակցունելու մասին , պղին . ձէն ու երկաթէն գերազանց արած են զայն գնդասեղ շինելու գործին մէջ :

Պողպատէ , պղինձէ և երկաթէ գնդասեղները արոյրէ շինվածներէն աւելի լաւ կը լինին . իսկ այս վերջինով շինվածները շուտով կը ծռին և կը բթին (կը քորնան) . սակայն , ինչպէս որ ասացի , բոլոր գնդասեղները արոյրով կը շինվին , նորա աժանութեան պատճառով :

Արոյրէ գնդասեղները ձեռքով հետեւեալ կերպերով կը շինեն .

1. Գործաւոր մի արոյրի թելի ծրար մի կառնու և կտրոցներով գնդասեղի երկանքը ունեցող կտորներու կը բաժնէ :

2. Երկրորդ գործաւոր մի այս կտրված արոյրներուն կտորները կը շտկէ :

3. Երրորդ գործաւոր մի յեսանի (սրցունելու քար) վերայ այս թելերուն մէն մի ծայրերը կը բարակցունէ :


4. Չորրորդ մի՝ այս ծայրերը բոլորովին կը սրցունէ :

5. Հինգերորդ մի՝ գնդասեղներուն միւս ծայրերը կը կտրէ ամենը մէկ չափով :

6. Գլուխը շինելու համար զանազան կերպեր կը գործածեն . կայ որ մեքենայով ուժով սեղմել կուտան գնդասեղին ծայրը , որ այս կերպով կը տափակնայ :

7. Վերջապէս՝ գնդասեղները գինեքարի աղի մէջ կը տաքցունեն անագէ տախտակի մի վերայ , որով կը գրուագփին : ✕ ✖





ՄԱՍՆ ԶՈՐՌՈՐԴ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

- Բառնթեան կրեմ ցեղերը . — 1. Կենդանիներ .
2. Բոյւեր . — 3. Հանձներ . — Կաթևուն
կենդանիներ .

Բնական պատմութիւնը գիտութիւն մի է, որ
լուսութեան մարմինները ճանչնալ որոշել և կար-
դագրել կ'ուսուցանէ : Երբոք աչքերնիդ ջրս
կոզմ դարձունէք, ամեն տեղ օդին մէջ, ջուրին
խորը, երկրիս ծոցն ու մակերևոյթին վրայ շատ
մարմիններ կը տեսնէք, որք մարդուս գոր-
ծած ճարտարութեանց և արուեստներուն ար-
դիւնքը չ'են, և մեք ինչպէս որ կը տեսնեմք, այն
կերպով ստեղծած է զանոնք Աստուած . ահա
ասոնք են բնութեան կամ բնութեական մար-
մինները, որք երկու տեսակ կը լինին, կամ գոր-
ծարանաւոր կամ անզործարան : Գործարանա-
ւորները կեանք կ'ունենան, իսկ միւսները ոչ :

Կենդանիները և բոյսերը բնութեան գործարանաւոր մարմիններուն կարգէն են։ Սոքա անգործարան մարմիններէն կը աարքերին ինքզինք-

Նին մննդական մարմիններով սնուցանելու կարողութեամբնին. մի ժամանակէ վերջը ապրելէ դադրելու, փճանալու կամ մեռնելու հանդամանքովը. վերջապէս իրենց սեռը (տեսակը) բազմացունելու յատկութեամբնին :

Հանդերշ, որպիսի են կոպիճ քարը, ոսկին, կապարը և այլն, բնութեան անդործարան մարմիններն են. սոքա մշտնչենաւոր անդործութեան և անշարժութեան մէջ են, և երբէք գործարան չունին. Նաև սնունդի ալ պէտք չունին, ոչ ներսէն, ոչ ալ դրսէն կ'աճին: Իրենց նման մարմիններ յառաջ չեն կրնար բերել:

Կենդանիները և բոյսերը ընդհանուր կոչուած, այսինքն՝ աճելու (մեծնալ) և սնունդ առնելու կարողութեանց կողմէ միայն իրար կը նմանին:

Բայց գլխաւորաբար ասով կը տարբերին որ կենդանիները կը զգան և իրենց ուղածին չափ կրնան շարժիլ, մինչդեռ բոյսերը այս յատկութիւնները չունին:

Բնութեան մարմիններուն իրարմէ ունեցած այս զանազանութեանց համեմատ նոքա երեք ցեղի կը բաժնըին:

1. Կենդանական ՑԵՂ, որոյ մէջ են չորքուանիները, թոյունները, սողունները, ձուիները, միջատները, որդերը, խեցեամորթերը:

2. ՇՈՒՍԱԿԱՆ ՑԵՂ, որք են բոյսերը:

3. ՀԱՆՔԱԿԱՆ ՑԵՂ, որք են հանքերը:

Կենդանիներէն մի քանին քիչ շատ մարդուամարմին կաղմութեան նման կաղմութիւն մի

ունին. զոր օրինակ մարդուն պէս ուղեղ, սիրա, երակ և ողնայար մի ունին, որ մարդուու թիւ կունքին մէջ տեղն է, և կարդ մի պղաըտիկ ունկուներէ կաղմբալած է: Այս կենդանիները կ'ըստին ունսւարտութ, որոնք չորս կարգի կը բաժնըին. կաթնառներ, (կամ ծիծ աւող կենդանիներ), թոյուններ, սողուններ և ձուկեր:

Կաթնառները փոքրիկ ողջ ձագեր կը ծնին, և ոչ թէ թոչուններու պէս հաւակիթ կը հանեն. այս ձագերը իրենց մօրը ծիծէն կաթ ծծելով կ'ապրին:

~~~~~

### ԵՐԵՍՈՒԽԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ


(Կաթնառներ). Ա. ԶԵՂԻԿԱՆԵՐ. Բ. ԿԱՊԻԿԱՆԵՐ.

Կարդ մի կաթնառներ կան որք օդին մէջ թոչելու համար գործիք ունին և իրենց որուը ծիծեռնիկ թոչունին նման կ'որսան: Այս կարգի կենդանիներն են չշղիկները (գիշերհաւուկ): Պէտք չէ զանոնք թոչուններու հետ շփոթել. այն ամեն կենդանիները, որք թեւ ունին և կը թոչին, թոչան չեն. ինչպէս որ բոլոր ջրակենցաղ (ջուրի մէջ ապրող) կենդանիները ձուկ են, թէ և գլսանց նմանութիւն մի ունենան:

Կաթնառ կենդանիներու մէջ միայն չդիկն է որ կրնայ թոչիլ բայց գետնի վրայ չէ կարող պարտիլ:

Գիշերհաւուկներուն բոլորն ալ, մատներ ու

ակուաներով ծնօտներ, թոքին ներքեւը ծիծեր, մորթով և մաղով ծածկված մարմին մի ունին : Ասոնց թևերը շատ տարրեր են թռչուններու թևերէն, վասն զի ետևի երկու ոտքերը և առջևի մատները մարմինին վրայի մորթին կըպված են, և շատ երկայն են : Զղջիկին դոյնը ու եւ



27.2.14

մարմնով մկան կը նմանի. ականջները շատ մեծ են. Միայն գիշերները թռչելուն համար գիշեր հաւուկ ալ կ'անուանի :

Կան կարգ մի կաթնառուներ ալ որք շարունակ ժառերու վերայ ապրելու սահմանված են, և պտուղներով, միջատներով կամ հաւկիթով կը սնանին. սոքա են կապիկները որք խիստ ճարպիկ են ցանկութելու մասին. անոնց ձեռքերը այն-

պէս կազմըված են որ խիստ դիւրաւ կրնան ծառերու ճիւղերը բռնել, մէկէն միւսը անցնիլ և երբեմն խիստ հեռուն ցատկել :

Կապիկներու սեռէն եղող անասունները քիչ շատ մարդու կը նմանին իրենց դէմքովն ու մարմինովը, ինչպէս օրանկ-ութամբ : Կապիկներուն այտերը խիստ տարածական լինելով, երբ որ գողութիւն մի անեն, իրենց գողցածները բերաններնուն մէջ կը լեցունեն իրը գրպանի մէջ և այնպէս կը փախչին :

Պոչաւոր կապիկներուն կարգը՝ կան այնչափ երկայն պոչ ունեցողներ, որոնք իրենց պոչը ձեռքի տեղ ալ կը դործածեն, ժառերու վրայէ պտըտելու, ցատկելու կամ կախվելու ժամանակ. այսպէս է Ամերիկայի փամու ըսված կապիկը :

Կապիկները շատ նշանաւոր են մարդուս ամեն արած բաները մէկ տեսնելով իրենք ալ անելու մասին, բայց շատ անխելքութեամբ : Օրինակի համար, կը պատմըմի թէ մի պատերազմի ժամանակ խումբ մի կապիկներ նոյն պատերազմին դաշտին վրայ դանըվող ծառերուն վրայ են եղեր, և մինչև վերջը պատերազմը դիաեր են. գիշերլան մէջ երբ պատերազմը կը դադրի, կապիկները ծառերէն վար կ'իջնեն, ցորեկվան տեսածնին անելու համար . մէկը թնդանօթ մի կը լեցունէ, միւսը կըակ կու տայ և ուրիշ մի թնդանօթին բերանէն ներս կը խօթէ գլուխը, որպէս զի գիտնայ թէ ներսը ի՞նչ բաներ կը լինին որ այնչափ ահարկու ձայներ և կրակներ

կ'ելնեն թնդանօթէն. բայց տեսնելու չմնար,  
խեղճ կապիկին գլուխը անդիի աշխարհը կ'երթայ  
թնդանօթին հարուածովը :

ՔԱՌՍՈՒՆԵՐՈՐԴ ԴԱՍ

(Կաթնառութեր), Գ. Մասկերներ.

Կաթնառու կենդանիներու մեծ մասը սովորա-  
բար երկրիս երեսը հողի վերայ կ'ապրին, որով  
հետևաբար չորքոտանի կամ չորս ոտք ունեցող  
կենդանիի ձեւը կ'ունենան. Բայց այս հողաբնակ  
չորքոտանիներուն մէջ կան՝ որք կենդանական  
նիւթերով սնունդ կ'առնուն. ասոնք կ'ասուին  
մասկերներ. կան նաև որ բոլորովին խոտերով,  
պտուղներով և ուրիշ բուսական գոյացութիւն-  
ներով կ'ապրին. ասոնք կ'ասվին խոտակերներ:

Այս երկու խումբերը իրարմէ որոշելը գժուար  
բան մի չէ. իրենց ոտքերուն և ակտաներուն  
տեսքէն կ'որոշվին:

Մասկերներուն ակաաները սրածայր և սուր կը  
լինին, ինչպէս որ կընամք տեսնել երբ ողնի,  
արջու, շան և կատաւի ակտաները դիտեմք.՝  
նաև այս կենդանիներուն ոտքերուն մատները  
իրարմէ զատ և ծիրանով կը լինին :

Ընդհակառակը, խստակերները խոշոր և ատ-  
փակ ակտաներ ունին, և ոտքերնուն մատները  
ծիրան կամ ըլունդ չւնին, այլ միայն տեսակ մը  
կըր կատոշ, որ ամբակ կ'ասվի :

Փոքրիկ մսակերներ ալ կան, որք միայն որ-  
դեր կամ միջաներ և պտուղներ ուտելով կը  
մանին. օրինակ խղուրդները, ոզնիները, սրային  
մուկները :

Ուրիշ փոքրիկներ ալ կան, որք երկայն մարմին  
ունենալով խիստ կարճ ոտքեր ունին. առով



ԽՈՒՐԴ

կարօղ կը լինին ամենէն նեղ ճեղքերէն խոկ անց-  
նիլ. օրինակ, այիսը, կուզը որ մեր հաւացնե-  
րուն վառեկնեալն ու հաւեկները կը խղդէ, և  
վայրի այիսը. այս կենդանին նապասակին  
շատ թշնամի է, և անոր տնը բունը կընայ գմնել.  
ասոր համար որսորդները բերանակապով հետեր-  
նին կ'առնուն երբ որսի երթան,  
Արջերը գլխաւորաբար պտուղներով և ծառի  
մարմատաներով կապրին. միուր միայն անօթի մատ-

ցած ժամանակ կուտեն։ Կապիկի պէս շատ գիւրութեամբ կրնան ժայռերու վրայ ենել և քաւել, թէև ոչ այնչափ վազել գետնի վրայ։

Այն անսասունները որք աւելի մսակեր են, և իրենց մուռնդը գտնելու համար որսի ետեւէ պիտի վազեն, իրենց մասներուն ծայրը կոխելով կը քալեն, որ քալվածքի թեթևութիւն կուտայ։

Այսպէս են,

1. Աղուէսը, որ կենդանիներու մէջ ամենէն խորամանկն է և որ ոչ միայն խելքէ դուրս վարպետութիւններ ունի, այլ և եթէ ստիպվի որսորդի առջևէ փախչիլ օրերով մեռել կը ձեանայ։ Ուժէ աւելի խելքով կրնայ որս գտնել. անոր համար հայերը խորամանկ և խարդախ մարդոց Աղուէս կ'ասեն։ 2. Գայլը, վախկոտ և ճարտար է. գայլը աղուէսին պէս, գէշ ուտելով կ'ապրի, այլ երբ շատ ձիւն գայ, անօթութենէ մինչև իսկ գիւղեր ու քաղաքներ կը մտնէ և որս կը փնտոէ, ինչպէս եղաւ 1874 ին սաստիկ ձմեռվան ժամանակ կ. Պոլիս թերայի կողմը։ 3. Առիւծը. 4. Կատուն. 5. Շունը. Շունը ընկերական և խելացի մի է, խիստ արագընթաց (շուտ վազող) է, և շատ բարակ հոտառութիւն ունի. շուններուն այս յատկութիւնը շատ բանի մէջ մեղի օգտակար է, վասն զի անով կրնայ շատ հեռու տեղերէ իսկ իւր տունը գտնել և հարիւրաւոր մարդերու մէջ իւր տէրը ճանչել. շունը մարդուս ամենահաւատարիմ և անբաժան ընկերն եղած է ամեն տեղ։ Տուարները պահպանելու մէջ քաջ է, իւր

տիրոջ տունին գրան առջև մինչև լրյա կը հսկէ. բեռ անգամ կը կըէ, և ուրիշ տեսակ տեսակ ծառայութիւններ կ'անէ, շատ երախտիք ճանչող է։ Կատուն ալ շունի պէս մարդուս ընտանի է, բայց անոր չափ օգտակար չէ. շունէն աւելի մսակեր է, սուր ճանկեր ունի, հաւատարիմ չէ, այլ ապերախտ է. ջուրէ, հուրէ և ցուրտէ կը վախնայ և շատ կը սիրէ արևի մէջ մնալ. կատուններու քունը թեթև է. շատ մաքուր են և իրենց մազերը միշտ փայլուն և չոր կը մնան։




## ՔԱՌՍՈՒԻՆՄԷԿԵՐՈՐԴԻ ԴԱՍ

Աղուէս.

Աղուէսը իւր խորամանկութեամբ անուանի և ըստ մասին համբաւի արժանի կենդանի մ'է. ինչ որ գայլն ուժովը կընէ, նա հնարքով կընէ և շատ անգամ կը յաջողի, շուններուն կամ հովիւններուն հետ կոռուել ջանալով, հօտերուն (ախրիւ) վերայ չյարձակերով և մեռեալ գիեր փախցնելու ջանք չ'անելով. ապրելու մասին ապահով է, աւելի խելք քան թէ շարժում կը բանեցնէ, Խորագէտ, զգոյշ, հնարագէտ, խոհեմ, համբերող է. թէև գայլէն շատ աւելի թեթև և անխոնջ է, սակայն բոլորովին իր արագընթացութեան չը վստահիր, ապաստան մը գտնելով կրնայ ինքինք ապահութեան դնել, ուրթէ վտանգի ժամանակ կը քաշվի և կը բնակի, և



թէ իր ճագերը կը մեծցունէ։ Թափառական չէ,  
այլ բնակարանաւոր (բնակարան ունեցօղ)։ կեն-  
դանի մի է։ Գիւղակներու մօտիկ անտառներու  
մէջ կը բնակի, աքաղաղներուն ձայները և  
թռչոց երգերը հեռուէն մօտիկ կ'ընէ և ախոր-  
ժանօք կը ճաշակէ զաննք։ Պատեհ ժամանակով




Աղոհէս

և խոհեմութեամբ գործ կը տեսնէ, դէմքը և  
քայլերը կը ծածկէ, կը սպրդի, կը յարձակի և  
քիչ անդամ։ կը պատահի որ իր որսը փախցնէ։  
Եթէ կարենայ հաւնոցին տախտակէ պատին  
վրայէն կտրել անցնիլ, վայրկեան մը չը կորսըն-  
ցունելով բոլոր հաւերը ջարդել կ'սկսի և բոլորն  
ալ կը մեռնէ, և անմիջապէս իր որսը առնելով  
արագութեամբ ետ կը քաշուի ու զայն կը տանի  
կամ հողին տակը կամ իր բնակարանը կը պահէ։

քանի մը վայրկեան վերջը կրկին իր որսին տեղը  
կը դառնայ, ուրիշ մ'ալ կ'առնու և մի և նոյն  
կերպով, սակայն ուրիշ տեղ կը պահէ։ յետոյ  
կրկին կը վերադառնայ։ երրորդ մ'ալ չորրորդ  
մ'ալ . . . մինչև որ առտուան լուսնալը կամ տանը  
մէջի ձայները իմանայ, որ ատեն կը քաշիլի եւ  
մէյ մ'ալ յետ չը դառնար։ Մի և նոյն հնարքը  
կը բանեցնէ նաեւ որսական վարմերու (աղ)  
մէջ ալ, որովք պեղաս և սարեկ (արտըճ) կոր-  
սան, որսորդէն առաջ, առաւօտուն խիստ կա-  
նուխ, և յաճախ օրը մէկ անդամէն աւելի, կ'եր-  
թայ վարմերուն և սոսնձապատ փայտիկներուն  
այցելութիւն մը կուտայ, և բռնըլօղ թռչուննե-  
րը մի առ մի այլ և այլ տեղեր կը տանի կը տե-  
ղաւորէ, մանաւանդ ճամբաներու քով, արահետ-  
ներու (սովորական անց ու դարձ ճամբայ) մէջ  
մի գեհի (արտըճ աղաճը) ծառի տակ, և թէ  
մինչև 23 օր հոն կը թողու, սակայն վերջը ամ-  
բողջ կը գանայ զանննք. դաշտերու մէջ նապաս-  
տակի ճագեր կ'որսայ, և երբեմն ալ որջերնին  
երթալով նապաստակ կը բռնէ։ ճագարներու  
(ատա թավշանը) արգելոցներու մէջէ նոցա ճա-  
գերը դուրս կը հանէ։ կաքաւներու և լորա-  
մարդիներու բոյները կը մտնայ, և հաւկիթի վրայ  
նստած ատեննին կը բռնէ :

թէ և մսակեր է, սակայն ամէն բան ալ մի և  
նոյն անյագութեամբ կ'ուտէ. թէ հաւկիթ, թէ  
կաթ, թէ պանիր, և թէ պտուղք՝ մանաւանդ  
խաղող, երբոր նապաստակ կամ կաքաւ չը դանայ.

կատուներու, դաշտամկներու, օձերու, մողէզներու, գորտերու և այլոց վերայ կը յարձակի. Եր ըրած աղէկութիւնը միայն այսչափ է: Մեղքը խիստ կը սիրէ, մեղուներու, պիծակներու և իշամեղուներու հետ կը կռվի, որ նախ կը ջանան զայն վանել իրենց խայթոցներուն հաղարաւոր հարուածներովը. աղուէսը վերջապէս ետ կը քաշվի բայց գլորվելով և այնչափ կ'երթայ կռւ գայ՝ որ կստիպէ մեղուները բոյներնին ձգել երթալու. այն ատեն մեղքն ու մոմը դուքս քաշելով կը սկսի ուտել: Ողնի ալ կը բռնէ, ինչպէս նաև ձուկ, խեցգետին և մարախ:




## ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ

Առիծ.

Առիծի գոյնը գրեթէ բոլորովին շէկ (դումրաւ) է, պոյն ծայրը մազերու վնջիկ կայ, և արուին ուսերն ու գլուխը բաշով (մազ) ծածկըլած են: Այս կենդանին որ հին աշխարհին մէջ երբեմն խիստ շատ կը գտնըվէր, այժմ գրեթէ միայն Ափրիկէի և Հնդկաստանի անապատներուն մէջ կը գտնըվի, ինչպէս նաև Ալճէրիի սահմաններուն վերայ: Հին մարդիկ առիւծը չորքոտանիներու թագաւոր կոչեր էին. ինչպէս նաև արծիւը թռչուններու, և բնականաբար բոլոր առաքինութիւնները, բարւոյ ազնուութիւնը, ուժի շատութիւնը, աներկիւղութիւնը և

վեհանձնութիւնն ալ այս երկու թագաւորներուն յատկացուցել էին. սակայն հիմա բոլոր այդ յատկութիւնները՝ ուսման առջևէ կը փախչին չեն երեար: Ինչ որ կը պատմեն առիւծի վերայ, բոլորն ալ յանկարծահաս յարձակմամբ եղած են, զոր օրինակ իրմէ տկարագոյն և խոնարհ կենդանիի վրայ յարձակելու համար դարանակալ կ'սպասէ, մութին մէջէ կը սպրդի ցերեկվան



Ա. Ռ. Խ. Մ

լուսէն կը ծածկըլի, եթէ եզի կամ ձիի վրայ յարձակիլ համարծակի՝ վերջին ծայր անօթի եղած պիտի լինի. ճամբորդները ի՞նչ որ կը պատմեն փիղին և վագրին դէմ՝ առիւծին արած կոիւներուն վրայ, բոլորովին սուտ և սխալ են: Իւր կերակուրը կապիկներէ և վիթերէ (եապան քէշիսի) կը ճարէ, երբոր կարենայ այդ կենդանիները գետնին վրայ բռնել: Սովորաբար ջրատ տեղերու մօտ

Եղէգներու մէջ կը տեղաւորի , և կծկելով կատուի պէս երկար ժամանակ կըսպասէ , և եթէ մօտէն կենդանի մի անցնի , զարմանալի ոստումով (ցատկուուք) նորա վերայ կը ցատկէ , իւրահուելի ճիրանները նորա կողը կը խօթէ և գանկը կը կոտրտէ . եթէ իւր յարձակումը վրիպի (պարապն երթայ) , ալ նորէն չը յարձակիր , և այս բանը վեհանձնութիւն կը սեպեն : Վաղել չը կընար , և դանդաղ կը քալէ : Անօթի չեղած ատեն կենդանիներու վրայ չը յարձակիր , վասն զի դիտէ որ իւր անտառին մէջ իրեն դէմ կեցող մի չի կայ . և ասով կերակուրի կողմանէ նեղութիւն չը քաշեր :

Շունի պէս կ'ընտանենայ մարդու :




### ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ

(Կաթնառութեր). 4. — Կրծող կենդանիները .—  
5. Պարկաւորներ .— 6. Անատամներ:

Կրծող կենդանիները ծամելիքներուն առջեները երկերկու սուր և երկար ակռաներ ունին , և բաւական հեռու ալբերնիններսի կողմը ուրիշ ակռաներ կան . այս ակռաներով իրենց սնունդը կը կրծեն կրծողները , դլխաւորաբար պառւզներ , ծառի արմատներ , փայտեր և կեղեներ : Կրծող կենդանիներուն կարդէն են . 1. կուրդը . 2. նապաստակը , որ փախկոտ կենդանի մի է , և աչքերը բաց կը քնանայ , խիստ նուրբ լսողութիւն

ունի , և որովհետեւ նապաստակներուն առջեն ոտքերը ետելիններէն կարճ են , նոցա համար աւելի դիւրին է դարվեր վազել քան թէ դարվար : 3. մեր անական թշնամի մուկերը : 4. սկիւռները , որք սիրուն կենդանիներ են , չայատանի մէջ շատ կը գտնըլին . ընտանի և խելօք են , բայց ինչ որ տեսնան կը կրծեն , և այլ կենդանիներ :



ՍԿԻՒՐ

Պարկաւոր անատամները իրենց փորին ներքեր աեսակ մի պարկ կամ գրավան ունին . այս պարկին մէջ կը պահեն իրենց նոր ծնող պղտիկ ձագերը , մինչեւ որ բաւական մեծնան : Մեր երկրն մէջ չը գտնըլիր :

Նմանապէս մեր երկրէն չեն անատամն կոչված կենդանիները որք ակռայ չունին . նշանաւոր է միջնակեր ասվածը , որ երկայն քիթ ունի , և

նեղ որկոր, իւր կլոր և երկար լեզուն, բերնէն  
դուրս հանելով կ'երթայ մըջիւններու բոյնին  
կամ խումբին մէջ կը թաթիւ և երբ վրան բա-  
ւական մըջիւն կպին, բերանը կը քաշէ զանոնք  
ուտելու համար :

### ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ

(Կաթնառուներ). 7-8 Որոճող և Չորոճող  
խոտակերներ .

Արդէն գիտէք որ խոտակեր կենդանիները  
միայն խոտեղէն ուտելով կ'ապրին : Այս կեն-  
դանիները բոլորն ալ իրենց ոտքերուն վրայ  
ամբակ ունին, որոց առջևի կողմի ծայրերը սիւ-  
ներու բաժնուածի պէս են: Խոտակերները եր-  
կու տեսակ են որոճող, և չորոճող :

Որոճօղները անոնք են որ գոմէշի կամ կովի  
նման իրենց կերը ուտելէն վերջը, կը հանդչին,  
կը նստին իրենց կերածը նորէն բերանին մէջ  
բերելով ծամելու, աջէն ձախը և միւնիյն ժա-  
մանակ առաջ ու ետև տարուբերելով :

Բոլոր որոճօղներն ալ իրարու հետ մօտիկ  
նմանութիւն մի ունին: Կղակին առջևի կողմի  
ակռաները միայն վարի կղակներուն վրայ կը  
գտնըվին: Ամենուն ոտքերն ալ երկերկու ամբակ  
ունին, ամենն ալ չորս ստամոքս ունին և ամե-  
նուն ալ ծիծերը զիստերուն մէջ տեղն են:  
Ամենն ալ կոտոշ ունին:


Մեզի ամենէն կարևոր եղող ընտանի կենդա-

նիները որոճօղներն են: Որոճօղներէն կրնամք  
առնել մեր մնունդին պէտք եղած միօր. որոճօղ-  
ներէն շատը մեր բեռը կը կրեն, կամ լուծը կը  
քաշէն. իրենց անուշիկ կաթը, պատուական իւղը,  
որ կարագ կ'ասվի, դիմացկուն կաշին, տաք պա-  
հող բուրդը և դանկի կոթ եղող կոտոշները  
կուտան մեզ: Աստուած օրհնէ, շէն պահէ և  
աւազի հատերուն ու երկնքի աստղերուն չափ  
շատցունէ :

Կոտոշ չունեցօղ որոճօղներէն են ուղտերը,  
լամաները ևայլն. Կոտոշ ունեցող որոճօղներէն  
է. 1. ընձուղար, որ կենդանիներուն մէջ ամենէն  
բարձրահասակն է. 7-9 մէթը կամ 10-14 կան-  
դուն բարձրութիւն ունի: Գեղեցիկ և խատու-  
տիկ մորթ մի ունի, վիզը մարմինէն երկար է,  
շատ քաղցր կենդանի մի է, և ուր որ տանիս  
անտրասունջ կուգայ: Ծառերու տերեններով և  
պտուղներով կ'ապրի: Գետնի խոտերը դժուա-  
րութեամք և ծունկ չոքելով միայն կընայ խլել:  
2. Լաման, որուն վրայօք անշուշտ կարդացած  
էք կամ պիտի կարդաք Ռոպէնսօնի պատմութեան  
մէջ: 3. Լեռնայծ: 4. Արագընթաց եղջերու: 5.  
Եղնիկ: 6. Խարբուզ այծը և մեր ընտանի կեն-  
դանիներէն եղը, այծը, ոչխարը: Եղին կարգէն  
են ցուլը, գոմէշը, կովը, որոց ձագերը որթ կամ  
հորթ կ'ասվին:

Խոտակերներուն մէջէ չորոճօղները ամբակաւոր  
կենդանիներն են, որք հաստ կաշի ունին և մա-  
զերնին կարճ և քիչէ, և որք բացի ձիէն, ծանր,


Խոշոր և տծե են. աղտոտ տեսք մի ունին և  
շատ կը սիրեն տիղմի մէջ թապլառկիլ, կամ  
չուրի մէջ մտնալ: Այս կարդէն է, 4. Փիղը



ԸՆՉՈՒՂՑ

(Փիլ), որ Ասիայի և Աֆրիկէի մէջ կը դտնըվի:  
Փիղերը շատ նշանաւոր են իրենց հասակովը, մուշ պատիճովը և փղոսիրովը: 2. Անգեղջիւրը որ փիղն պէս նշանաւոր է, քթին վրայ կոտոշ մի ունի:


3. Վայրենի կինձերը և 4. ընտանի խողերը:  
Խողը օգտակար կենդանիներէն մին է, մանաւանդ գեղացիներու համար, իրեն մսին և ճար-



ԸՆԳԵԶԻՒՐ

պին և ապլելուն ու շատնալուն դիւրութեանը  
համար :

Զիերը շատ գերազանց են միւս կենդանիներէն իրենց հասակի գեղեցկութեամբ և քալուածքի արագութեամբ: Այս կարդէն են էշը, զէպը:



### ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Փիղ.

Տաք երկիրներու մէջ մարդուս ծառայելու շատ յարմար կենդանի մը սեպլած է փիղը: Ուժով,  
դործունեայ և հաստատուն է, հեղահոդի և ընկերական է, և այնչափ ճարտար է, որ գրեթէ

ամեն կերպ ծառայութիւններ անելու կը վարժը վի : Անճոռնի կերպարանք մի ունի . գլուխը մեծ , աչքերը պղտիկ , ականջները լայն ու կախ , մարմինը խոշոր , կոնակը բարձր ու ստքերը ծառի բունի պէս անձև . մորթը մութ գոյն մի ունի սևի մօտ : Նոր ծնած ժամանակը երեք ոտք բարձրութիւն ունի այս կենդանին . մինչև տասնըլից տասնեօթը տարեկան լինի նէ , կը մեծնայ և հարիւր տարիէն աւելի կապրի : Կատարեալ մեծնալէն ետքը կսկսին դուրս ցցվիլ իւր երկու խոշոր ակոսները որ երթեմն եօթը կամ ութը ոտք կերկընան : Ընդհանրապէս իւր բարձրութիւնը ինը կամ տասը ոտք է . իր կերակուրը բոյսեր են :

Փիղին ճարտարութիւնը , ուժն ու վարժութեան ընդունակութիւնը շատ զարմանալի են . զարմանալի յաջողակութեամբ կը գործածէ իւր կնճիթը՝ ձեռքով կատարելու բօլոր բաներուն մէջ , ոչ թէ միայն իւր կնճիթը շարժելու զօրութիւն ունի , այլ և կրնայ երկընցունելու կարճցունել անիկա . կրնայ դէպի ի վեր ու դէպի ի վար ոլորելու ամէն կողմ դարձունել : Այս կնճիթին ծայրը շրմունքի պէս է , ու վրայի կողմը երկընցած է մատինման , ու ահա ասով է որ կը կատարէ ամէն այն բաները զորս մենք մեր մատներով կ'անեմք . կը նայ գետինէն մէկ փարան առնել , ծաղիկը կը փետտէ մէկիկ մէկիկ , կապերը կը քակէ , գուռները կը բանայ ու կը գոցէ բանվիքը դարձունելով ու կղզանքը ետ քաշելով : իր զէնքերը , այսինքն երկար ակոսները իւր

պաշտպաններն են և անոնցմով վագրի կը յաղթէ : Կնճիթովը ծառերը կը կրծծանէ . իր մարմինը պատի մի կոթընցունելով կրնայ պատը պատռել : Զարհուրելի է իւր ուժովը ու անյաղթելի միայն իւր մարմինին ծանրութիւնովը ու մորթին հաստութիւնովը : Կոնակին վրայ աշտարակ մի զէնքերով կազմած ու մէջը շատ մարդով կը նայ տանիւլ պատերազմելու : Քիչ մի ջանք ընելով մեքենաներ կը շարժէ ու բեռներ կը քաշէ վեց ձիի զօրութեամբ :

Նաև շատ սրտոտութիւն , խոհեմութիւն , հանդարտութիւն ու կատարեալ հնազանդութիւն կը ցուցունէ իր տիրոջ : Բարկութեան ժամանակը բնաւ իւր բարեկամները չի մոռնար , բայց իրեն վնաս տրվողին կը վնասէ անպատճառ : Երկարժամանակ կը յիշէ իրեն եղած բարերարութիւնները՝ ինչպէս նաև վնասները :



### ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

Գրարնակ (ցրի մէջ բնակող) կաթնուներ.

Կարդ մի կաթնուներ ալ կան , որք ջրին մէջ կ'ապրին , որք շատ երկար ժամանակ չեն կրնար մնալ , այլ շուտով վեր կենեն օդ ծծելու համար : Այս կարգի կաթնուները կարճ ոտքեր ու ձեռքեր կունենան , որք լողալու յատուկ ձև ունին և մարմինին ընդհանրապէս ձուկերու մարմիններու պէս կը լինի :

Այս կենդանիներէն ոմանք չորս կարճիկ ոտքեր ունին, և մարմիննին ալ փայլուն մազերով ծածկըլած է, և կըսվին երկարնակներ, որովհետև թէ ջուրին մէջ և թէ հողին վրայ կրնան ապրիլ Մի քանին ալ ետեւ ոտք չ'ունին, և ոչ ալ մազ մորթերնին ողորկ է, ասոնք գետազգի կ'ասուին, Երկարնակ են վիոկ կոչուածները. քաղցրաբարոյ կենդանի մի է, ծովային կով ալ կըսուի. ընդհանրապէս ձուկ ուտելով կապրի: Գետազգիներն ալ դրսանց ձուկի ձև ունին. բայց ձուկ չեն, վասն զի ներսանց բոլորովին կաթնտուներուն կարգէն են: Վասն զի անոնց պէս տաք արիւն սիրտ, թռքեր և ծիծեր ունին. ձագը ողջ կը ծնին. հաւկիթ չեն ածեր և իրենց կաթով կը մեծցունեն ձագերը: Խոչոր ականջներ և ակռաներ և դլուխներնուն վրայ ալ երկու ծակեր ունին, ուսկից դուրս կը հանեն այն ջուրը որ որսին հետ բերաննին կ'երթայ:

Դլիքինները կը ճանչէք. այն ալ ձուկ չէ. այլ կաթնտու կենդանի մի որ ճիշդ անոնց նման ակռայ, ծիծ և այլն ունի:



## ՔԱՌԱՍՈՒՆԵԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Թուչուններ.

Արդէն դիտել տված եմ Զեղ թէ այն ամէն կենդանի, որ թեեր ունի և կը թռչի, անպատճառ թուչուն չը կրնար լինել: Թուչունները տաք ա-

րիւն, փետուրներով ծածկըլած մարմին մի, երկու ծնօտով շինված կտուց մի, երկու թեեր, և մէկ ոսկերով շինված երկու ոտք կ'ունենան: Այլ և հաւկիթ կ'ածեն, և հաւկիթէն կը հանեն իրենց ձագերը, և ոչ թէ ողջ կը ծնին: Ահա այս բաներուն թռչունները կը զանազանվին կաթնտուններէն. թռչուններու վիզը որ կողմ ասես կը ծոփ, կը ծոմըռկի: Թողք ունին և կաթնտուններու սրտին պէս սիրոտ:

Թուչուններու հաւկիթները հագված կը լինին ամուր կեղևով մի. բնաւ անխնամ չեն թռղուր ածած հաւկիթնին. այլ մեծ ինտմօք կը պահպանեն իրենց շինած զարմանալի բոյներուն մէջ, և անոնց վրայ թռուխի կը նստին, կամ կուռթ կը նպտին ձագ հանելու համար, և ձագ հանելէն վերջը վերջին ծայր գորովով զանոնք մեծցունելու ետևէ կը լինին: Շատ թռչուններ նշանաւոր են իրենց չուռվը, կամ երկար ճամբարդութեամբ, զոր կ'անեն ամեն տարի շատ բազմութեամբ:

Դիտած էք ծիծեռնիկներու չուն, որ օր առաջ ամենն ալ կը ժողովին, թռչելու կրթութիւններ կ'անեն, որպէս զի ճամբան խաղը չը լինին:

Թուչուններուն մի քանին ջրաբնակ են, և շատերը հողաբնակ: Եթէ կուղէք ճանչել թէ այս ինչ թուչունը ջրաբնակ է թէ չէ, դիտեցէք անոր ոտքերն ու կտուցը, և կը գտնաք. վասն զի ջրաբնակներուն թալթերը այն կերպով կաղմըլած են, որ լողալու կամ երկսկուք ջրի մէջ քալելու կարօղ լինին, այսինքն բարակ կաշխալ մի անոր

մատները իրար միացած են, և թիակի տեղ կը ծառայեն, ինչպէս կը տեսնէք սադերու, բադերուն և կարապներուն ոտքերուն վրայ . ատնք ջրաբնակ են, իսկ հողաբնակները այս բանը չունին:

Եզերի թոյուններն, որք նմանապէս ջուրի մէջ քալելու յարմար մաշկէ թաթեր ունին, խիստ երկար ոտքեր, վիզ և կտուց ունին. այս թոչունները կրնան ժամերով մէկ ոտքի վրայ կանգնած մնալ, և թոչած ժամանակնին ոտքերը դէպի ետե կը տնկեն հակառակ միւս թոչուններուն :

Այս կարգէն են կտցար, արագիլ, կռունկի:

Հողաբնակ (հողի վրայ բնակօղ) թոչուններէն ցեղ մի կայ որ կարճ թեեր, այլ ծանր մարմին ունին, և կտուցներնուն վերի կողմը կամարաձև են. քթին կէսն ալ մաղով ծածկըլվածի պէս. շուտով կը մեծնան, և գետնին վրայ առանց բոյն շինելու հաւկիթ կ'ածեն. այս ցեղէն են դրեթէ բոլոր մեր ընտանի թոչունները, հնդկահաւը, հաւը, աղաւնին, սիրամարգը, փասիան և կաքաւ :

Որսորդ թոյուններու ցեղն ալ կայ, որ շատ դիւրաւ կը ճանաչվի : Սոյա կտուցը սուր է և ծայրէն ծռած. կարճ, և հաստ մագիլով ոտքեր ունին. ոտքերուն մատներէն երեքը առջնի կողմը և մէկը ետեկի կողմը երկնցած են : Այս կարգէն են արծիւը, ցին (չայլագ), անգղը, բուն. և այլն :

Մագլցող (ճանկռտօղ) թոյուններէն է թութակը, որ շատ դիւրութեամբ ծառերէ կամպա-

տերէ վեր կ'ելնէ մագլցելով. չորս մատներէն երկուքը առջնի և երկուքը ետեկի կողմը տնկը-ված են :

Ճննդուկները փոքրիկ թոչուններ են, որոց մատներէն երեքը ոտքերուն առջնի կողմը և մէկն ալ ետեկի կողմը ուղղըլված են : Այս թոչունները խիստ շատուոր են. ամեն ցատքըու-տօղ և երգող թոչունները այս ցեղէն են. բարակ և կարճ թաթիկներ, շիտակ կտուց և մագիլներ ունին. պտուղներով ու ճճիներով կը կերակրին: Սոքա են, սոխակ, շիկահաւ, կարմրալանջ, ծիծեռնիկ, ճնճուղիկ, արասյտ, սարեկիկ, ագռաւ, անծեղ, դրախտահաւ, ճնճուղ և ճանճ :



### ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Թոյուններու վերայ մի բանի խօսք աշ.

Ընդհանրապէս կը կարծըլի թէ թոչունները շատ մեծ վնաս կուտան հունճքերու և պարտէղներու. բայց պէտք է գիտնալ որ նոցա տրված օդուտը աւելի մեծ է,

Անծեղը, ուրուրը, ագռաւը սատկած կենդա-նիներու գէշերը (մարմին) կ'ուտեն, որք եթէ մնային՝ հոտելով օդը կ'ապականէին: Բազէները և ագռաւները դաշտի մուկերը կը ջնջեն, որք եթէ բաղմանան, շատ մեծ վնասներ կուտան հունճքին: Փոքրիկ ճնճուկները, ծիծառնիկները խիստ շատ որդեր, թրթուրներ ու ճճիներ ու-տելով երկրագործին մեծ օդուտ կուտան: Կան

ուրիշ թռչուններ ալ՝ որք կարծես յատկապէս վատ խոտերը լաւերէն զատելու համար ստեղծված են։ Արդգիլները օձեր, խլէզներ և գորտեր կը ջնջեն։ Հապա բագերու, հաւերու, սագերու միսը և ձռւն, նոցա օգուտը բնաւ մոռնալու շեմք։ Հապա որ անուշիկ պիւլալիլը (սոխակ) առաւօտուն կանուխ կանուխ կ'ենէ և կ'երդէ ճըվճըվալով։

Այս գեղեցիկ թռչունը գիւղերու մէջ շատ կը գտնուի. և գիւղացիները շատ կը զուարճանան երբ որ առաւօտուն ելնեն իրենց գործերուն սկսին՝ նորա երգերը լսելով։

Եատ ճանաչված թռչուններէն մին ալ թռւթակն է, որու ձայնը մարդու նմանելու մօտ է, և դիւրավլիսիկ կ'ուսանի։

Երծեռնիկն ալ բաւական ճանաչված է. մարդու ընկերութենէ շատ կ'ախորժի, և իւր բոյնը մեր տուններուն տանիքներուն ներքեր կը շինէ, դիւրավլի ընտանենայ և զանազան ճճիներ ջնջելով մանաւանդ ճանճ ուտելով զմեղ մեծ նեղութենէ կ'աղատէ։

### ՔԱՌԱՍՈՒՆԻՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Սողուններ. — Կրիա, Կովրծուծ, Օձ, Գորտ  
Սալամանսր.

Կաթնտուններուն և թռչուններուն արիւնը միշտ տաք է, թէև ամենացուրտ տեղեր ալ բնակած լինին. ընդհակառակ սողուններն ու

ձաւկերը պաղ արիւն մի ունին, որով երբոր ձմեռ ատեն զանոնք բունեք պաղ կ'երեան։ Այս կենադանիներուն մորթը մերկ կամ թեփով ծածկը ված կը լինի։ Սողունները օդին մէջ կը չնշեն թոքով։ Խակ ձաւկերը միայն ջուցին մէջ, ուրիշ գործարաններու միջոցաւ։

Սողունները կրնան երկար ժամանակ առանց շնչառութիւն առնելու մնալ, կրնան ժամերով ջուրին մէջ ընկղմած կենալ, կրնան երկար ժամանակ առանց բան մի ուտելու համբերել։ Յուրա երկիներու մէջ դրեթէ բոլոր ձմեռը թմրած կ'անցունեն։ Սողուններէն ոմանք դրեթէ քալելու կամ բռնելու անդում չունին և սողալով կը շարժին, մէկ քանիին ոտքերն ալ այնչափ կարճ են՝ որ չես կը նոր որոշել կը քալե՞ն թէ կը սողան, ասկէց է որ սողուն կ'ասալին, որ կը նշանակէ սողալով գետինը քալուտելով քալու։

Այս կարդէն է, կրիան որ շատ դիւրաւ կը ճանչէք, իւր պատեանին մէջ մի քանին փափուկ միս ունին, մի քանին դեղեցիկ թեփով ծածկը ված են։ Ծովի կրիա ալ կայ։

Սողէզները կամ կողմածուծները (քէրթէնքէլէ) շատ բազմաթիւ են. ինչպէս որ տեսած էք, երկնցած մարմին մի ունին, չըրս ցածուկ ոտքեր, և երկոյն պոչիկ. Մի քանին ջրաբնակ են։ Այս խումբէն է կոկորդիլոսը։

Օձերը առանց ոտքի սողուններ են, երկայն բարակ մարմնով. այնպէս կլակներ ունին որ կրնան ուղած կողմերնին դարձունել ու բանալ.

և իրենցմէ մեծ որս մ'իսկ ուտել ու լափել։ Սուր  
ակռաներ ունին։ թունաւորներուն ակռաները  
փոս և շարժուն կը լինին, և թոյնը իրենց խածա-  
ծին մէջ կը թափեն։ Անթոյն օձերուն ակռանե-  
րը ահշարժ կը լինին։ այս կարգէն է խոչոր և  
ուժով պօա օձը։ թունաւոր օձերուն ակռաները  
փոսցած, ծռած և շարժուն կը լինին վերի կղա-  
կին մէջ բռւսած, և ուրիշ ակռաներէ երկայն։  
Դլուխներնուն ետևի կողմը թոյն կը լինի։ Սո-  
վորական թունաւոր օձը բարբ, թուխ դոյն, և  
կրան այս ձեռլ օձիկ-օձիկ սև դիծ մի.  
ամեն կողմը սև բիծեր, և թեփով ծածկըլած  
երեքանկիւն գլուխ մի ունի։ Բոժոժաւոր օձ մի  
ալ կոյ, որ մեր կողմերը չերեիր,

Գորտերը և սալամանդրները առանց թեփ  
մորթոյ սողուններ են, որք նշանաւոր են կեր-  
պարանափոխութեամբ։ Նոր ծնած ժամանակնին  
ձուկի ձև և մեծ գլուխ կ'ունենան, բայց շու-  
տով անդամներու տէր կը լինին։ և սովորական  
սողունի կը փոխուին։ Գորտերը պոչ չունին։

### ՅԻՍՈՒՆԵՐՈՐԴ ԴԱՍ

Զուկեր.

Պէտք չէ շփոթել ձուկերը իրենց պէս ջուրին  
մէջ ասլրով ուրիշ կարգ մի կենդանիներու հետ。  
ինչպէս են խեցգետինը, խեչեփառը, և այլ պա-  
տենաւոր (պատենք ունեցող) կենդանիները։

Չուկերուն կմախքը ներսէն կը լինի, ձեռք ոտք  
չունին, բայց նոցա տեղ լուղակներ ունին։ ար-  
իւննին պազ է և կարմիր։ և իրենց երկու ական-  
ջովը ու շնչեղջիւրներովը կը շնչեն։ Շնչեղջիւրները  
թոքի տեղ կը բռնեն՝ ծովի ձեռլ շորս հատ։  
ու մորթին ներքեւ ծածկըլած են։ ձուկը ամէն  
շունչ առնելուն խր կլլած ջուրը այս ծովերուն  
մէջ կ'անցնի և ականջներէն դուրս կը ցայտէ։  
Ջուրին մէջ դտնըլած օդն ալ շնչեղջիւրներուն  
միջոցաւ ջուրէն կը զատիփի, և այսպէտով ձկնե-  
րուն շնչառութիւնը կը կատարվի։

Չուկեր կան որոց կմախքը ոսկըուտ (ոսկրով)  
է, ողնայար ունեցող կենդանիներուն նման։ մի  
քանիներուն ալ ոսկորները խիստ թոյլ, բարակ  
և կոտրտող՝ երբեմն ալ կէս թափանցիկ են։  
այս տեսակ ոսկըները կոճիկ կ'առվին, ինչպէս որ  
դիտէք։

Չուկերը շատ նշանաւոր են իրենց արգասա-  
ւորութեամբը։ իրենց հաւկիթները, որք պատեան  
չունին, հազարներով միլիոններով կը համըլլին։

Ծովի ձուկերը շատ անգամ բազմաթիւ խում-  
բերով մէկտեղ կ'ապրին, բայց մամնաւոր տեղ  
չունին, և մի քանի թռչուններու պէս՝ ձմեռը  
զատ, ամառը զատ տեղ կ'երթան։ Այս կենդա-  
նիները մարդոց համար շահաւոր որսեր կը լինին,  
և ծովեղերքի մօտ քաղաքներու համար մեծ  
հարստութիւններ են։

Չուկերուն լուղակները հովհարի ձև իրարու-  
թան դրուած ոսկըներ են։ Չուկերը երկու

կարդ կը բաժնըլին։ Ա. Ովկորով ձուկեր, որոց  
ոսկորները ամռար, հաստատ եւ ուժով կը լինին։  
Բ. Կոճիկով ձուկեր, որոց ոսկորները թոյլ գիւ-  
րաբեկ և կէո թափանցիկ կը լինին։

Ոսկորուտ ձուկեր են ծածան, դայլածուկ ըս-  
տած լիճերու, և լոտակներու ձուկերը, ոսմանը,  
ծովի ձուկ, տառեխը, թխնիկ, թխնուա  
Թուչօղ ձուկերը որք իրենց երկու կազմերը  
բաւտկան մեծկակ լուղակներ ունին, որով կրնան  
թռչիլ։ Օծածուկերը, որք օծի պէս երկայն բա-  
րակ մարմին մ' ունին։ Այս կարդի ձուկերը միւս-  
ներէն կը զանազանին իրենց շնչեցիւրներուն  
ձևով, լուղակներու գիրքովն ու բնութեամբը,  
որ մերթ թոյլիկ, մերթ ձիդ և մերթ ոսկորի  
պէս կը լինին։

Կոճիկով ձուկերուն կարդէն է թառափը, որ  
մեծ ձուկ մի է, Տափածուկը և շանտածուկը, որ  
կատաղի է։

### ՅԻՍՈՒՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՍ

Յօդաւոր կենդանիներ եւ միջատներ.

Ա.յս բոլոր կենդանիները որոց վերայ առա-  
ջուց խօսեցանք, կաթնտուները, թռչունները,  
սողուններն ու ձուկերը կարմիր արիւն մի եւ  
ոսկորուտ կմախք և ունացար մ' ունին։ Ա.յժմ  
պիտի խօսիմք այն կենդանիներուն վերայ, որոց  
արիւնը միշտ պաղ է, որքա ոսկոր չունին, և

ասոր համար անողեայար (աղնացյար չունեցօղ)՝  
կենդանիներ կ'ասովին։ Սակայն շատերը իրենց  
մարմինին վերայ հաստատ և պինդ մասեր ունին,  
որոց կպված են իրենց դնդերքը. բայց այս մա-  
սերը, որք քարի կամ եղջիւրի բնութենէն իրօք  
ուկոր չեն։ միշտ մարմին գրսի կոզմը մորթին  
փակած կը լինին. այսպէս են խղունջ, ծովի ոզնի,  
ծովու աստղ, ևայլ։

Շատ մի անողնայար կենդանիներ կան որք մի-  
ջատներու պէս են, որոց մարմինն ու թաթե-  
րը ետեւէ ետեւ շարված կարդ մի յօդերու կամ  
մանեակներու վրայ բաժնը ված միւս մանեա-  
մանեակաւոր կենդանիներ կը կոչվին։ Մանեա-  
կաւորներուն արտաքին անդամները միշտ չորս  
մատէն աւելի կը լինին։

Մանեակաւոր կենդանիներէն շատերը զանա-  
զան կերպարանափառութիւնք կը կրեն. այսինքն  
շերամին բարանակին ոլէս հաւկիթէն այն ձևով  
չեն եներ՝ զոր պիտի ունենան օր մի. այլ հետը-  
զէետէ այլկայլ վիճակներ կ'ունենան մինչեւ որ  
կատարեալ լինին։

Միջատներուն մարմինը երեք որոշ մասերէ  
բաղկացած է, և ութը մանեեկաւոր թաթեր ունի  
բաղկացած է, և եղեցը իրենց ծայրի կողմը

Մեզի ծանօթ միջատներու խումբ մի կաց, որք  
չորս թեւեր ունին. առայց վարի կողմի անդամ-  
ները կարճ են. և էգեցը իրենց ծայրի կողմը  
ասեղի պէս բան մի ունին, որով կը կճեն ըզմարդ։  
Ա.յս միջատներէն շատերը խումբ կ'ապրին, և  
զարմանալի կարգագրութեամբ միասին կաշխա-

տին, այս կարգէն են մըջիւնները, պիծակները, մեղունները, Մեղուն շերամին պէս մարդուս ամենաօգտակար կենդանիներէն մին է. դիտէք արդէն որ բազում խմբով մէկտեղ կ'ապրին, բոլորովին կարգով օրէնքով, և մեղուններու մէկ խուռմը մի քանի արու և 25-30 հազար էզ մեղուններէ կը բաղկանայ, որոց մէջ միայն մէկը, որ թագուհի կը կոչին, կը կոչի հաւկիթ ածել: Միւս էդերը աշխատաւոր կ'ատին, վասն զի բոլորովին աշխատութիւնները իրենց վրայ են: Մեղունները կը բնակին խորշերու մէջ, որք փեթակ կը կոչին. այս փեթակները փոքրիկ կանոնաւոր բջիջներու բաժնըված են. այս բջիջներուն նիւթն է մեղրամում առվածը, և մեղքն ալ բջիջներուն մէջ դրված և պահված է:

Բոլոր միջատները, որոց վրայ խօսեցանք, աւելի կամ պակաս կատարեալ կղակներ ունին: Առանց կղակի միջատներ ալ կան, որոց բերանը միայն կտուցի կնճիթի տեսակ բան մի է, կ-օ թեւեր ունին, և ուրիշներ ալ կան որ այս բաններէն բոլորովին զուրկ են: Այսպէս են մլուկները, լուերը, ճանճերը, թիթեռնիկները, մժեղները, ճպուռը. և այլն:

Թիթեռնիկներէն կաղմբիված է թեփաթեռներու ընտանիքը. թեփաթի կ'ատին, որովհետեւ իրենց թեւերուն վրայ տեսակ մի բարակ փոշի ցանված կայ միշտ: Սոյա որդերը (ձագերը) կատարեալ կերպարանափոխութիւնք կը կրեն: Այս խուռմին միջատները իրենց ձեւին վայելութեամբը և

թեթեւաշարժութեամբը և սովորութիւններովը գոյններուն փայլունութեամբը ու հարատութեամբը մարդուն ուշն կը դրգուեն և արմանքն ու զարմանքը կը դրաւեն:

### ՅԻՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ

Սարդ. Խեցեմորթ կենդանիներ. Որդեր.

Սարդերը՝ կամ մամուկները դիւրաւ կը ճանաչվին իրենց ունեցած ութը թաթերովն և իրենց մարմնին երկուքի բաժնըված լինելովը, մինչդեռ միւս միջատներուն մարմնը երեքի բաժնըված է:

Սարդերը թեւաւոր չեն, իրենց թաթերը խիստ երկայն են և ծայրերնին երկու փոքրիկ ակիներ ունին: Այս կենդանիները գարշելի տեսք ունին, բայց իրենց սովորութեամբը, խորամանկութեամբը և ճարտարութեամբը նշանաւոր են. իրենց մալմին վարի ծայրը սպունդի պէս փոքրիկ մսեր կան, որոց մէջէ մածանող (փակչըտօղ) հեղուկ մի գուրս կենէ, որ կը կոչի թեւերու նման երկարիլ և օդին մէջ չորնալ: Այս թեւերով իրենց հաւկիթները պահելու համար կամ խօզակներ կը յօրինեն և կամ ոստայն, որ նաև որոդայթ կը լինի միջատներ բռնելու, որովհով կը մնանին:

Այն մետաքսէ ճերմակ գնդակները, և այն մանկամանը թեւերը՝ որ փորված գետնին վրայ տրեւաւն դէմ կը փայլին, տեսակ տեսակ սարդերու շնչքեր են: Այս կենդանիին շատ տեսակ-

ները իրարմէ քիչ շատ թունաւոր են, բնանի ասրդին խայթուածը կը մեռցաւնէ ճանճերը և ուրիշ փոքրիկ միջաները, բայց մարդուն չի կրնար վնաս մի տալ: Շատ տեսակներ ալ կան, ինչպէս են կարիճները, որոնց ագին տեսակ մի ասեղով զինված լինելով, նորա խայթուածը կընայ մինչեւ անգամ մահ պատճառել:

Խեցեմորմները այնպիսի յօդաւոր կենդանիներ են, որք չնչեղիւրներով կը չնչեն, և ջուրի խոնաւ և մուժ տեղուանք կրնան ապրիլ իրենց մորթը կարծր կեղեւով ծածկը ված է, որմէ խեցեմորթ անունը տապացած են. այսինքն խեցի պէս կաշի ունեցօղ՝ շատ ծամելիք ունին որոնք խոտորնակի կը շարժին, Ասոնցմէ ունանք հինգ թաթ ունին, ինչպէս է խեցգետինը, ունանք ալ եօթն, ինչպէս նեպուկն (թէսպիհ պէօճէք):

Խեցգետինները և խառնիքները (մանր չէքիրկէ) թանձր ու երկար ագի մի և հովտարինման տեսակ մի ձկան թեւ ունին. Խեցգետիններուն առաջն զոյտ մի թաթերը խիստ զարգացած և ունելիքի ձեւ առած են. այս կենդանիններուն յառաջակողմի (առջեւի կողմի) թաթերուն այսչափ մեծ լինելը կը ստիպէ զիրենք ցամաքի վերայ կողմնակի քալել:

Թէտէսի խեցգետինները չնչեղիւրներով կը չնչեն և ձուկերուն պէս ջուրի մէջ կ'ապրին, սակայն ձուկերուն հետ շփոթելու չեմք. որովհետեւ իրենց մարմինը դուրսէն յօդաւորված է և ներուէն ոսկոր չունին. արխւնի ալ կարմիր չէ:

Յօդաւոր կենդանիներ կան, որոց մարմինը երկար և որդի ձեւով է, բայց խիստ թաթեր ունին, և հազարօաննեայ (հաղար ուաք ունեցող) կը կօչին.

### ՅԻՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ

Բոյսերու վրայ առ հասարակ. Արմատներ Յողութ. Տերեւ. Բոյքոց.

Բոյսերը թէև կեանք ունին, բայց չեն կընար ըզգալ և իրենց կամքին համեմատ շարժիլ: Սուցանէ շատերը սերմէ կ'ելնեն, այդ սերմն ալ ունտ կամ հունտ կոչված մի տեսակ հաւկիթի մէջ փակված է: Երբ որ սերմը բողբոջներ տայ, այսինքն ծլի, այն ժամանակ բոյսը բոլոր կեանքին մէջ երկու գործ կ'ունենայ. Խւր արմատներուն, ցողունին և տերեւներուն միջոցաւ գետնէն և օդէն մնունդ առնուլ և ծաղիկներուն, պտուղներուն և ունտերուն միջոցաւ ծնունդ տալ Բոյսերու կաղմութիւնը կենդանիններու կաղմութենէն աւելի պարզ է. վասն զի սոցաւ ունեցածներուն պէս ոչ ջիդ ունին, ոչ կը զգան, ոչ ալ կընան շարժիլ:

Արմատ կ'ասովի բայսերու այն վարի մասը, որ սերմին բաղբոջնելէն (ծլելն) անմիջապէս վերջը կ'երեւնայ, և վար, հողին մէջ կ'երկըննայ, նախ որ բոյսը խւր տեղը ամուր կը պահէ և երկրող որ խւր բարակուկ թելերուն միջոցաւ բոյսին պէտք

եղած մնունդին (կերակուրին) մէկ մասը հողէն կ'առնէ, Ասել է թէ արմատը բոյսերուն ամենատօդակար գործարանն է, մանաւանդ մարդուն ալ բաւական օգուտ կընծայեն. ինչպէս ստեղղինը, բաժաթէսը և գետնախնձորը, որք լաւ ուտելիքներ են. բանջարին արմատն ալ թէ կ'ուտովի և թէ շաքար կը շինի: Տորոն կոչված բոյսն ալ, որ Ռուսի Հայաստանի մէջ կայ և կը գործածի, ներկ կուտայ, ուրիշներ ալ լաւ գեղեց կուտան. ինչպէս են խաչնդեղը (բալէնտ) տուզոր (կիւլհաթէմ): Յողուն կ'ամին բոյսին այն մասը որ արմատէն վեր կ'երկըննայ և տերեւներով ծածկըլված է. գեւին կերպով կը կոտրի, երբ դեռ մատաղ և կանաչ է. այլ շատ կարծր կը լինի, երբ կատարեալ փայտի վիճակ ունենայ: Ցողունին կամ նորա ճիւղերուն վրայ տեսնըլված կը լր կնտիկները բողոք կ'առին. սոքա մեծնալով կ'երկըննան և ճիւղ կը լինին. ճիւղերը բողըոջէ կ'ելնեն, և մեծնալով ուս կը լինին:

Արմաւենիները և տաք երկերներու ուրիշ ծառերը հազիւ թէ սատեր կ'ունենան. արմաւենին սիւնի նման կանդուն և բարձր կը լինի և տերեւները նորա գագաթին վերայ կը գտնըլի: Մեր կողմերու ծառերու ցողունները քանի բարձրանան, կը բարակնան և սատեր կուտան: Միքանի ծառերու կեղեկի (ծառին երեսքի կաշին) թելերը այնչափ կարծր կը լինին, որ մարդիկ հիւսքեր և պարաններ կը շինեն այդ թելերով. Հորի չուանները թմբի ծառին կեղեւէն կը շինին:

Բամպակին վերայ խօսեցանք արդէն: Այն առնկը որով խիցեր (շիշի բերան փակօղ) կը լինին, Ֆրանսայի մէջ բուսնող մի տեսակ կազմի կեղեւէն կ'ելնէ:

Տերեւները ծառերու թոքերն են, որք բոյսին չնշառութեան կը ծառայեն: Տերեւները օգտակար են նաև մարդու համար՝ անով որ՝ թէ անտեսութեան և թէ բժշկութեան մէջ կը վինտուվին: Այսպէս կաղամբը, կանկարը, լսիտուրը, որք մեր կերակուրներու մէջ շատ կը գտնըլին, յայտնի են ձեզ. վարսակը և առուոյտը մեր անասուններուն կեր կը լինին: Բժշկութեան մէջ կը գործածին իբր դեղ՝ բաղրջուկը, բաղրուկի, անանուխի, ջրկոտեմի, և այլ բոյսերու տերեւները: Թէյլ ծաբոնէն և Զինէն ելած մի փոքրիկ տուփի տերեւներէն է:

### ՅԱՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ

Բոյսերու ծաղիկը, պտուղը, հատիկները կամ կուտը.

Ոչ թէ իբր զուարճութեան առարկայ միայն նայելու եմք ծաղիկներուն վերայ, այլ իբր օդակար բաներ:

Ծաղիկներն ունին երկու գլխաւոր մասեր, որք պասուղներ և կուտեր բոււցունելու գլխաւոր գործարաններն են:

Առաջին բաժակ, որ ծաղիկն վարի կողմը գանըլված գուրսի տերեւներու շրջանակըն է և կանաչ կը լինի:

Երկրորդ՝ պանակ. որ բաժակին վերայ դաշնը լած  
մասն է և ծաղկի ներքին կողմն է, տակի կողմէն  
բաժակի գոյցված՝ շատ կարգ տերեւներուլ է և  
զանազան սիրուն գոյներ կ'ունենայ. առէք օրի-  
նակի համար շահողրամ ծաղիկը, պիտի տեսնէք  
որ իւր գուրափ կողմը կանաչ բաժակ մի ունի  
խողովակի ձևով, այս խողովակին մէջ՝ որուն  
վերի կողմը հինգ մասերու բաժնը լած է՝ պիտի  
դաշնէք սովորակ կամ բունաւոր կտորներ նեղ և  
բարակ, ուրա ծաղկատերեւ կ'առավին և ամենը  
միասին կը կաղմեն ծաղկին պատկը, Պատկին ճիշտ  
մէջտեղը կլոր բան մի կը տեսնէք, որու ծայրը  
թերի ձեւ երկու ճիւղիկներ կամ, երբոր այս կլո-  
րիկը մէջտեղէն ճեղքեմք, խորշ (խցիկ) մի կը  
տեսնեմք, որոյ մէջ տեղաւորված են ծաղկիկը  
կաղմօղ մանր մասնիկները, ծաղկին այս մասը  
պորտ կ'ասվի: Պատկին և Պորտին մէջտեղը մի և  
նոյն ձևով տաօր խորշեր կամ, կեղբոսի (մէջ  
տեղի) խորշին չորս կողմը շարված և իւրաքան-  
չիւրն իր ծայրը բարակ թերեր ունի և մի դեղնա-  
գոյն փոշիսվլցված երկերկու խորշ. այս գոր-  
ծարանները ծաղկիկներու առէջներն են, և նոյս  
մէջի փոշին արգասափոշի կ'ասվի. այսինքն  
պատու ափօղ փոշի. փամու զի. այս փոշին է որ  
ծաղկին պորտին վերայ թափելով, պատուղները  
կը հասունցունէ և կուտերը կը բուսցունէ: Եր-  
բոր արդասափոշին պորտին վերայ թափի, այն  
ժամանակ ծաղկիկը կը թոռմի, սերմափակիը պոր-  
տին վարի մասն է, որուն մէջ պահված են ծաղ-

կին սերմերը. Երբոր սերմափակին վերայ կամ  
դուրսը դաշնը վող մասերը թափին կամ չորնան,  
սերմափակիը և մէջի սերմերը կը մեծնոն, առա-  
ջնը պտուղ, երկրորդները կուտ կը լինին: (1)

Ծաղկիկներ կան, որոց պատկը միայն մի կտոր է,  
պսակին թերթերուն իրար կպված վնելովը .  
այսպէս է շեփորտկ տունկը: Բայց վասգին,  
շահոգրամին, հրանունկին պատմները շատ կառը  
ունին, և բազմաթերթ կ'առվին:

Երբ որ պատուղները հասուննան, կամ չոր, կամ  
հիւթեղ (մասու) կը միմին. չոր պատուղներէն են  
ցորենը, կաղինը, լուրիս և ուրիշ բանջարեցն-  
ներ, խաշխաշ և այլն:

Հիւթեղ պատուղները կուտ և թին (կաշի) կ'ու-  
նենան, ինչպէս դեղձ, ծիրան, կեռաս, խնձոր, խա-  
ղող և այլն: Մէկ քանի տաք աշխարհներու մէջ  
ուր ցորեն քիչ կը դաշնը վի, հիւթեղ պատուղները  
նոյն տեղերու ժողովուրդին դիմաւոր մնանքն են,  
ինչպէս հացածառի պատուղը, արմաւը, և այլն:

Պատուղներու հասուննալին վերջը աստ և տնդ-  
ցանված սերմերու շատութիւնը այնչափ զար-  
մանալի է որ շափսված է թէ մի քանի մզոն հողի  
բերած բերքը բաւական է բոլոր երկրի երեսը  
բոյսերով լեցունել: Մի սոսնաչափ գետնի միայ  
բուսած խաշխաշը երեսուն հաղար կուտ տված է,

(1) Աւոսւցիչը լու կ'անէ նշանակված ծաղկիկը կամ  
մի այլ նման ծաղկիկ աշխարտներուն առջեւ գրվածին  
պէս կտրտելով.

ՅԻՍՈՒՆՉԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Ցորենական եւ խոտային բոյսեր ։  
Բանցարեղիններ . — Վարդական եւ  
բազմածաղիկ բոյսեր .

Այն բոլոր խոտերը՝ որք ալիւրոտ հատիկներ  
կուտան, ինչպէս ցորենը, հաճարը, գարին, վար-  
պակը, մարացորենը, բըինձը և այլն, ցորենական  
կը կոչին. և իւրեանց արմատին ու տերեւներուն  
ձեռվը, և անպսակ պղտրտիկ ծաղիկներովը, որք  
ընդհանրապէս հասկի ձեռվ կը լինին, իրարու  
շատ նման են :

Բայսերու մէջ խոտային բոյսերը ամենէն շատ-  
րոն ու ամենէն օդտակարն են. ինչպէս ցորենը  
և բըինձը՝ Ասիայի և Եւրոպայի մէջ, մարացորենը՝  
Ամէրիկայի մէջ. շաքար եղէդը չնդկաստանի  
մէջ. նմանապէս այս կարգի բոյսերը շատ օդտա-  
կար են մեր անառուններուն. ինչպէս վարսակը,  
սէզը, գարին :

Օսլան, ցորենին ալիւրէն կը շինվի. Օսլան  
ջուրի մէջ եփելով շոհ (քօլա) կը շինեն, որով  
ճերմակեղէն հագնելիքները կը շտկեն :

Շաքար եղէդ ասված եղէդը խոտ մի է տաք  
աշխարհներու մէջ բուսնօղ. սորա արմատը հիւթ  
մի կուտայ, որով շաքար կը շինեն. վուշն ալ  
խոտ մի է :

Բանցարեղին բոյսերու խումբն ալ քիչ օդտա-  
կար չէ մեզի. այս կարգէն են մաշ, բակլա, ոսպ,  
լուրիա, զորա կը ճանչէք. մի քանիներ փոքրիկ

ծառեր կը լինին և անուշահոտ ծաղիկներ կուտան :  
Վարդական բոյսերու պտուղները մեր սեղան-  
ներուն համն ու հոտը և ծաղիկներն ալ մեր  
պարտէ զներուն սարքն ու զարդն են. ինչպէս  
մորենի, ելակենի, սալրենի, գեղձի, ծիրանի,  
կեռասենի, ինձորենի, տանձի, զկեռի, . . . և  
սոցա թագուհին վարդ :  
Խաչածերեւ բոյսեր են կաղամբ, գունապիտ,  
շողգամ եւ այլն. Սոցա ծաղիկները ընդհանրա-  
պէս պղտիկ են. բայց գեղեցիկ փունջեր կը շին-  
վին այս ծաղիկներու մէջէն շահալրակով (չէ հպօյ)՝  
և մանիշակով :

Մարգարիտը և արեածաղիկը բազմածաղիկ  
բոյսեր կատվին, վասն զի մէկ բաժակի մէջ շտո  
մի ծաղիկ մէկանց կելնեն. Սոցանէ ոմանք զար-  
դու կը ծառայեն, մէկ քանին ալ մնունդի. օրի-  
նակ. եղերդ, հազար, կանկառ, գետնախննձոր,

ՅԻՍՈՒՆՎԵՐՈՐԴ ԴԱՍ

Քարեր եւ մետաղներ.

Այն մարմինները՝ որք կենդանութենէ (առ-  
լիլ) լուրկ են և ոչ կը ծնին, ոչ ալ կը մեծնան՝  
մետաղ կը կոչվին. Մետաղները երկրի երեսը  
կամներսի կողմը այնպիսի զանգուածներ (կտոր,  
գէղ) կը կազմեն, որոնց մեծութիւնը և ձեր  
բնաւ չեն կրնար որոշուիլ, գիտցըվիլ. Մետաղ-

ները ամենուին չեն փօխվիր . լիչ որ են եզած այն կը մնան , ոչ կը մեծնան , ոչ կը պղտիկնան . ուրիշ բան որ դուրսէն մետաղի ուրիշ փոքրիկ մասնիկներ իրարու վրայ կը գան :

Մետաղները հանի կը կոչվին . որսվէւաև գետնէն կը համելիին , այս ինչ այն ինչ ջափոփ խարութեամբ : Երկրիս ներսը գանգրվող հանքերը երեք տեսակ են . յարեւ , մետաղներ , այրեշիներ , (վառելու կամ այրելու նիւթեր) ; Քարերը՝ որք շատ կամ ճողին երեսը , կը ճանչք քար անունով , սոքա չեն այրելու ոչ ալ կը վառին . մետաղներու խտութիւնն ու փայլունութիւնը չանին , և դրեթէ միշտ մթին գոյն մեկունենան , երբ փոշի գարձունեմք : Այրելի կապին այն բոլոր նիւթերը , որք մետաղ չեն և դիւրին կերպով կը վառին ըցա և ջերմութիւն տալով ինչպէս է հանի ածուխը :

Հողին մէջ փորված խիստ խորունկ հանքերու խոռոչներուն (մեծ ծակերուն) բոլի կ'ասեն . խկ հողին երեսը եղած խոռոչներուն , որոց մէջ միայն աւազքար և այս կտրդի աժան դինով նիւթեր կը հանեն , յարահանի անունը կուտան :

Անդիսան և Բէլճիքան հանքածուխի խիստ շատ բովեր ունին : Հանքածուխը որ շատ պատռական և օդտակար է այլևայլ արհեստներու մէջ , հողին տակ խիստ խորը կը գտնըի , կոպիճի և սորա նման ուրիշ քարերու խառնրված : Շողենաւներու և շոգեկառքերու մէջ ջուրը տաքցունելու համար հանքածուխ կը վառեն :

Բոլոր մետաղները հողին մէջ , ներքեր կը դանուին , և քիչերը զուտ և անխառն (ուրիշ բանի հետ չը խառնրված) կը լինին . այլ միշտ դրեթէ օտար նիւթերու , ինչպէս ծծումբի հետ խառնրված են . մետաղը այդ նիւթերէն զատելու համար շատ գործողութիւնք պէտք են , ինչպէս կրակի մէջ հալեցունել . եայն : Օրինակի համար . երկաթը բնաւ զուտ և անխառն չը լինիր . այլ միշտ ժանդուած , ուեւ , դեղին կամ կարմիր : Նմանապէս կապարը միշտ ծծումբով խառն կը հանվի , կը կարծըլի թէ կապարը բոլոր մետաղներէ ծանր է . բայց չէ . սնդիկը և ոսկին աւելի ծանր են . Սրծաթը շատ կը գտնըի մանաւանդ Ամէրիկայի մէջ :

Ոսկին զուտ վիճակով կը հանվի հողէն , այնպէս որ ծախելու համար բաւական է միայն հալեցունել և մէկ կտոր անել :

Աւազի մէջ կը գտնըի ագամանդ պատռաւական քարը , որ ոսկիէն ալ սուզ և հազուագիւտէ : Մինչև այսօր միայն Հնդկաստանի , Բրէզիլի և Սիրէրիայի մէջ կը գտնըի այդ քարէն :

— 888 —

## ՅԻՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ԴԱՍ

Հինգ զգայարաններ.

1. Շօշափելիի կամ Զեռիեր . — Շատ անգամ այժ-կապուկ խաղացած ժամանակ ձեր ընկերներուն կը հանդիպիք միայն զգեստները շօշ-

փելալ. թէև ձեր աչքերը խաղին ատեն կապված կը լինին, սակայն դուք մետաքսը չուխայէն կամ բուրգէն կը զատէք: Նմանապէս շատ անդամ գիշեր ատեն առանց լուսի աւէ աեղէ բան մի կրնաք վերցաւնել, միայն ձեր ձեռքը բանին վրայ դնելով որպէս զի ձեր փնտռածը ճանաչէք: Ըզգալու այս կարողութիւնը, զոր մեր բոլոր մարմինը ունի, բայց ամենէն աւելի լաւ կերպով մատներնուս միջոցաւ կը լինի, կ'ապի շօշափելու ըզգացում, և մեր ձեռքն ու մատներն աւ կ'ապին շօշափինիք, կամ ըզգայարան (ըզգացով գործիք) շօշափելու:

Այս ըզգայարանով մարդ բան մի ուրիշ բաներէ կ'որոշէ, կը զատէ, թէ այն բանին մեծութեամբն ու ձեռվը, թէ նորա մակերեսոյթին (երեսք) գիւր կամ ծուռ լինելովը, թէ ծանրութեամբը ու տաքութեամբը: Շօշափելու ըզգայարանը որչափ գործածիլի, այնչափ աւ լաւ կը լինի, գիւրաւ կըզգայ: Խոկ կոյր մարդերու համար կարելի է ասել թէ աչքի տեղ կը ծառայէ. վասն զի կոյրերը իրենց մատներով խոռոչաւոր (կոփալելով փոս եղած) գիրով տպված գիրքեր կը շօշափեն, որոց վրայէ իրենց մի մատը անցունելով կը կարդան:

Բոլոր կենդանի արարածները շօշափելիք ունին. կան կենդանիներ որոց այս ըզգայարանը հրաշտի նրբութիւն (բարակութիւն շօշափելու մասին) և փափկութիւն ունի: Զզիկը, որմէ տղայք պարսպ տեղը կը վախճան, այնպիսի

ըզգայուն թեւեր ունի, որ թէև շատ մութ տեղ մ'ալ գտնըի, ամենաթեթև կերպով մի ուրիշ մարմինի իրեն դպիլը կ'ըզգայ, և իւր թռիչքը ուրիշ տեղ կը դարձունէ:

2. Ճաշակելիք, կամ բերան . — Ճաշակելու ըզգայարանը աւելի կատարեալ ըզգայարան մի է, և տեղն է լեզուն և բերնի առիքը (վերի կողմը). այս ըզգայարանով է որ մեր մնունդին և առողջութեան ծառայօղ նիւթերուն համը կ'որոշենք, կը գիտնանք: Համերը տեսակ տեսակ կը լինին. անուշ համ, ինչպէս շաքարինը. Թթու համ, ինչպէս քացախինը, շեղի համ, ինչպէս լեմոնի կեղենը. աղի համ, ինչպէս ծովի ջուրինը. ևայլն :

